

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԿ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ
ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ

Զեկույց

Երևան, 2016թ.



Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել իրականացնել «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան կազմակերպության աջակցությամբ իրականացվող «2015թ. հանրաքվեի չարաշահումների փաստագրում» ծրագրի շրջանակներում:
Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են **«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին** և հնարավոր է, որ չհամընկնեն «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան կազմակերպության տեսակետների հետ:

Սույն զեկույցը կազմվել է՝
Հայկուհի Հարությունյանի,
Հայկ Թադևոսյանի և Անի Աղազյուլյանի
կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Մեթոդաբանություն.....	7
Բաժին 1 Քվեարկության ընթացքում, քվեների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացքում տեղի ունեցած խախտումներ.....	11
Քվեարկության ընթացքում տեղի ունեցած խախտումների տեսակները	13
Քվեատուփի լցում	13
Այլ անձի փոխարեն քվեարկություն	14
Կրկնակի քվեարկություն	17
Ընտրակաշառք	19
Ընտրության կազմակերպմանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը	20
Ընտրության ընթացքում կիրառված բռնություններ.....	22
Ուղղորդում.....	27
Կուտակում	30
Քվեարկության գաղտնիության պահպանման խախտում.....	31
Ընտրացուցակների հետ կապված խախտումներ, լրացուցիչ ցուցակներ.....	32
Այլ ընտրախախտումներ.....	34
Խախտումների տեսակներն ըստ դրանք իրականացնողների	37
Քվեների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացքում տեղի ունեցած խախտումներ.....	40
Քվեների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացքում տեղի ունեցած որակյալ խախտումներ	40
Ընթացակարգային խախտումներ	45
Բաժին 2. Ընտրական հանձնաժողովների արձագանքը հանրաքվեի ժամանակ տեղի ունեցած խախտումներին.....	46
Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ձեռք բերված և ընտրախախտումների վերաբերյալ փաստացի առկա տեղեկությունների համադրում.....	46

Բաժին 3. Հանրաքվեի քվեարկության ընթացքում խախտումների արձանագրման միտումները	50
Խախտումների արձանագրման միտումները	50
Գրանցամատյանների ուսումնասիրության արդյունքում արձանագրված խախտման դրսևորումները (արխիվացված գրանցամատյանների տվյալներ)	51
Միջադեպերը կամ խախտումներն արձանագրողները/բացահայտողները	58
Ոստիկանության գործողությունները քվեարկության ընթացքում և արդյունքների ամփոփման ժամանակ	59
Բաժին 4. Հանրաքվեի ժամանակ կատարված խախտումների արդյունքում հարուցված քրեական գործերը	61
Ընդհանուր տեղեկություններ գործերի քանակի վերաբերյալ	61
Բաժին 5. Հանրաքվեի խախտումների համար օրենքով նախատեսված պատասխանատվության այլ մեխանիզմները և գործերի քննությունը ՀՀ վարչական դատարաններում	85
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	96
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	99
Հավելվածներ	101

Ներածություն

Ժողովրդի կամարտության բարձրագույն անուղղակի եղանակը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն են, ինչպես նաև հանրաքվեն:

Ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքը մեր օրերում դարձել են պետության կառավարմանը մասնակցություն ապահովող հիմնական, անենամասայական դրսևորումը: Ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարության և 2-րդ հոդվածում ամրագրված իշխանությունը ժողովրդին սկզբունքներից: Ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքն ըստ էության ժողովրդի ինքնիշխանության արտահայտությունն է և իրեն պատկանող իշխանության իրականացման ձև¹:

Իգուր չէ, որ ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքն անվանում են «քաղաքական իրավունքների միջուկ»², քանի որ հենց այդ իրավունքների արդյունավետ պաշտպանությունից և պահպանությունից է կախված իրավունքի գերակայության սկզբունքի պահպանումը և ժողովրդավարական պետության ամրագրումը: Այսինքն՝ բավարար չէ ուղղակի ամրագրել ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքը պետության բարձրագույն օրենքում և այլ իրավական ակտերում, անհրաժեշտ է նաև բոլոր անհրաժեշտ քայլերը ձեռնարկել այդ իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու համար:

Այս առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածը սահմանում է. «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն իր թիվ 25 ընդհանուր մեկնաբանությունների մեջ նշել է, որ ընտրելու, ընտրվելու և հանրաքվեին մասնակցելու իրավունքը պետք է պաշտպանվի պետության կողմից՝ անկախ սահմանադրության և պետական կառավարման ձևից, պետությունները պետք է ընդունեն այնպիսի օրենսդրական և այլ մեխանիզմներ, որպեսզի արյունավետ պահպանվեն քաղաքացիների վերոնշյալ իրավունքները³:

¹¹ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան. – Եր.: «Իրավունք», 2010, 1086 էջ, էջ 327:

² նույն տեղում, էջ 328:

³ UN Human Rights Committee General Comment 25, 12 June 1996, UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add.7., կետ 1

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն տեղի ունեցավ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին և դրսևորվեց մասսայական խախտումներով՝ ընտրական ցուցակների կեղծումներ, կրկնաքվեարկություններ, լցոնումներ, ինչպես նաև վստահված անձանց, դիտորդների, լրագրողների նկատմամբ բռնության, սպառնալիքի դրսևորումներ:

2015 թվականի հանրաքվեի ընթացքում տարբեր տեղական և միջազգային դիտորդական կազմակերպություններ անգնահատելի և աննախադեպ ջանքերի շնորհիվ արձանագրեցին ընտրատեղամասերում և տեղամասերից դուրս տեղի ունեցած խախտումները:

Հաշվի առնելով հանրաքվեի գործընթացի խախտումների մասսայականությունը, և վերջնական արդյունքների վրա այդ խախտումների անհերքելի ազդեցությունը, անհրաժեշտ է, որ խախտումներն իրենց ամբողջ ծավալով տեսանելի դառնան լինեն: Հան: Նման տեղեկատվության լայնածավալ ներկայացման և տարածման արդյունքում ակնկալվում է խթանել քաղաքացիների ակտիվությունն օրինականության նկատմամբ պահանջատիրության և խախտումների կանխարգելման դեմ պայքարի առնչությամբ, իրականացնել փաստավորված շահերի պաշտպանություն՝ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պարտավորությունների կատարումն արդյունավետորեն ապահովելու համար:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի ընթացքում տեղի ունեցած ընտրական խախտումների փաստերի հիման վրա պատրաստվել է սույն զեկույցը, որը ներկայացնում է ընտրախախտումների մասսայականությունը, դրսևորումների տեսակները, ինչպես նաև իրավապահ մարմինների՝ պատասխանատու այլ մարմիններին դատարանների վերաբերմունքը խախտումների արձանագրման և իրավական գնահատականի տրման գործընթացում:

ՀՀ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել տեղական 18 հասարակական կազմակերպություններ և 6 միջազգային կազմակերպություններ⁴:

2015թ. դեկտեմբերի 6-ին սահմանադրական հանրաքվեի վերահսկողության գործընթացում ԹԻՀԿ, ԻԵՄ, ՀՔԱՎ և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) ՀԿ կողմից 2013թ. հիմնադրված «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությանը միացան ևս 14 կազմակերպություն՝ «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿ (ԸԻԿ), «Լոգոս» ՀԿ, «Տարածաշրջանային զարգացման և հետազոտությունների կենտրոն» (ՏՋՀԿ) ՀԿ, «Համայնքների համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ, «Լոռեցիների միավորում» ՀԿ, «Սոսե» ՀԿ, «Մարտունու կանանց

⁴ 2015 թ. դեկտեմբերի 6-ին կայանալիք ՀՀ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին դիտորդական առաքելություն իրականացնող տեղական հասարակական կազմակերպությունների ցանկը <http://res.elections.am/images/doc/dit06.12.15.pdf>

2015 թ. դեկտեմբերի 6-ին կայանալիք ՀՀ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպությունների ցանկը <http://res.elections.am/images/doc/ditint06.12.15.pdf>

խորհուրդ» ՀԿ, «Ժողովրդավար Արարատ» ՀԿ, Իջևանի ինֆոտուն, Կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ, «Սոցիոսկոպ» ՀԿ, ինչպես նաև ԺԱԱ կողմից մարզկենտրոններում բացված Քաղաքացիական երիտասարդական կենտրոնները: Դիտորդական առաքելության ներկայացուցիչները հանդես են եկել որպես ԹԻՀԿ, ԻԵՄ, ՀՔԱՎ, ԸԻԿ, ՏՁՀԿ և «Ժողովրդավարական Արարատ»-ը ներկայացնող՝ ՀԿՀ կողմից հավատարմագրված դիտորդներ կամ «Ասպարեզ» օրաթերթի կամ Asparez.am կայքի ներկայացուցիչներ⁵:

Առանձին ընտրատարածքներ են դիտարկել «Հայաստանի հելսինկյան կոմիտեն» և Քաղաքացիական հասարակության ինստիտուտը: «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը դիտարկել է թիվ 1 ընտրատարածքը, որն ընդգրկում է Ավան և Նոր Նորք վարչական շրջանները, իսկ Հելսինկյան կոմիտեն թիվ 7 ընտրատարածքը(Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան և Աջափնյակ վարչական շրջանի մի հատվածը):

Գրեթե բոլոր կազմակերպությունները, բացառությամբ «Ազատ հասարակության ինստիտուտ ի»-, հանրաքվեի ողջ օրվա ընթացքում առցանց տարբերակով և ՋԼՄ-ների միջոցով տեղեկացրել են տեղի ունեցած խախտումների և միջադեպերի վերաբերյալ, իսկ հանրաքվեից հետո ներկայացրել են ամփոփիչ զեկույցներ և հաշվետվություններ:

Կազմակերպությունը զեկույցի պատրաստման համար դիմել է դիտորդություն իրականացրած բոլոր կազմակերպություններին և օգտագործել վերջիններից հրապարակած զեկույցներն ու հաշվետվությունները:

⁵ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻԶ ԶԵԿՈՒՅՑ, Երևան 2016, հասանելի է <http://transparency.am/files/publications/1454928096-0-529110.pdf>

Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրության իրականացման համար օգտագործվել են տարբեր մեթոդաբանական գործիքներ, որոնց միջոցով հավաքված տեղեկատվության համադրմամբ հնարավոր է դարձել ապահովել իրավիճակի համակողմանի գնահատումը:

Տեղեկատվության հավաքագրման մեթոդաբանություն

Ղիտորդական կազմակերպությունների զեկույցներ: Ուսումնասիրության շրջանակներում տեղեկատվությունը հավաքագրվել է ղիտորդական առաքելություն իրականացրած բոլոր կազմակերպությունների՝ վերջիններիս կողմից պատրաստված և հրապարակված միջանկյալ և վերջնական ղիտորդական առաքելության հաշվետվությունների ուսումնասիրման միջոցով:

Ուսումնասիրվել են.

1. Քաղաքացիական հասարակության ինստիտուտ⁶,
2. «Քաղաքացի ղիտորդ» նախաձեռնության և Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ⁷,
3. Հայաստանի Հելսինկյան Կոմիտե⁸,
4. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ⁹ հասարակական կազմակերպությունների զեկույցները:

Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներ: Ուսումնասիրվել են 2015 թվականի հանրաքվեի քվեարկության գործընթացում լուսաբանումներ իրականացրած զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները: Google.am որոնողական համակարգի միջոցով բալանի բառերի օգնությամբ, ինչպիսիք են «հանրաքվե», «սահմանադրություն», «քվեարկություն», «ընտրական խախտում», «ընտրատեղամաս», «ընտրական խախտում», բառերը դուրս են բերվել առավել հաճախ հրապարակումներ իրականացրած զանգվածային լրատվության միջոցները: Այնուհետև, զանգվածային լրատվության միջոցների հրապարակված տեղեկատվությունը, ըստ խախտման տեսակի և ընտրատեղամասի համարի, համադրվել և ստուգվել է ղիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների տվյալների հետ: Այն դեպքում, երբ լրատվամիջոցն օգտագործել է ղիտորդական կազմակերպության տեղեկատվությունը կամ երբ նույն խախտումը համընկել է ղիտորդական կազմակերպության բացահայտած խախտման հետ, դրանք չենք հաշվարկվել՝ կրկնողությունները բացառելու նպատակով:

⁶ Հանրաքվե 2015. ՔՀԻ ղիտորդների արձանագրած խախտումները <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum>

⁷ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ղիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ, <http://transparency.am/files/publications/1454510431-0-551695.pdf>

⁸ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի զեկույցը սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի վերաբերյալ, <http://armhels.com/2015/12/14/helsinkyen-komitei-zekuyecy-hanrakvei-veraberyal/>

⁹ ԶԵԿՈՒՅՑ. Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, <http://hcav.am/publications/21-01-2016-555879/>

Պաշտոնական տեղեկատվական կայքեր: Իրականացված ուսումնասիրության շրջանակներում տեղեկատվությունը հավաքագրվել է նաև պաշտոնական տեղեկատվական կայքերից, ինչպիսիք են www.prosecution.am, www.police.am, www.datalex.am, www.elections.am կայքերից:

Datalex.am դատական տեղեկատվական համակարգից դուրս են բերվել ՀՀ դատարանների կողմից ընտրական խախտումների առնչությամբ քննված քրեական և վարչական գործերի վերաբերյալ տեղեկությունները: Այդ տեղեկատվությունը հավաքագրվել է ըստ ՀՀ Քրեական օրենսգրքի և ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված համապատասխան հոդվածների:

Տեղեկատվություն ստանալու հարցումներ: Հանրաքվեի գործընթացի, արդյունքների և հետագա զարգացումների վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ ձեռք բերելու համար կազմակերպությունն իրականացրել է նաև տեղեկատվություն ստանալու հարցումներ: Մասնավորապես հարցումներ են ուղարկվել հետևյալ պետական մարմիններին.

1. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով,
2. ՀՀ Քլիսավոր դատախազություն,
3. ՀՀ Հատուկ քննչական ծառայություն,
4. ՀՀ քննչական կոմիտե,
5. ՀՀ դատական դեպարտամենտ,
6. ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն,
7. ՀՀ ԱՆ ՔՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժին,
8. ՀՀ Ֆինանսների նախարարություն:

Հարցումներով պահանջվող տեղեկատվությունը և դրանց պատասխանները ներկայցվում են կից:

Տեղեկատվության վերլուծություն

Հավաքագրված տեղեկատվությունը՝ թե ընտրական իրավունքի խախտումների, թե դրանց ուղղությամբ իրականացված հետագա գործողությունների մասով, ըստ համապատասխան դասակարգիչների, ներմուծվել է excel համակարգչային ծրագիր: Ընտրախախտումների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը ներմուծվել է հետևյալ դասակարգիչներով.

1. Ընտրատեղամասի համարը,
2. Տեղի ունեցած միջադեպը/խախտումը՝ լցոնում, այլ անձի փոխարեն քվեարկություն, դիտորդի գործունեության խոչընդոտում, դիտորդի նկատմամբ բնտրություն, ընտրակաշառք, լրագրողի նկատմամբ բռնություն, լրագրողի գործունեության խոչընդոտում, քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում իրականացված ապօրինություններ, կրկնակի քվեարկություն, կուտակում, կեղծում, ուղղորդում, գաղտնիության խախտում, քվեարկության պարագաների հետ կապված խնդիրներ, հանձնաժողովի գործողությունների կազմակերպման կարգի խախտում, կողմնակի՝ վկայական չունեցող կամ նույն կազմակերպությունից մեկից ավելի անձնաց ներկայություն, ընտրացուցակի հետ կապված խնդիրներ,
3. խախտումն իրականացնողը,
4. հանձնաժողովի նախագահի և անդամների արձագանքը,
5. ոստիկանության գործողությունները,
6. արդյո՞ք արձանագրվել է միջադեպը,
7. հետագա ընթացքը
8. և այլն:

Ընտրախախտումների հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև դատական գործերի վերաբերյալ տեղեկությունները ներմուծվել են հետևյալ դասակարգիչներով.

1. Դատական գործ N,
2. Դատարան,
3. Դատավոր,
4. Ամբաստանյալ/ներ,
5. Ամբաստանյալի զբաղեցրած պաշտոնը իրավախախտման կատարման պահին,
6. Պաշտպան,
7. ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներ,
8. Դատական քննության տեսակը,
9. Հետազոտված ապացույցները,
10. Վճռի հիմքում դրված ապացույցները,
11. Պատժի մեղմացնող/խստացնող հանգամանքների գնահատականը,
12. Պատժատեսակ և այլն:

Հավաքագրված տեղեկատվությունը նախ, ըստ դասակարգիչների, ենթարկվել է քանակական վերլուծության: Այնուհետև, քանակական տվյալները ենթարկվել են որակական վերլուծության հետևյալ համադրվող դասակարգիչներով.

1. Խախտումների թիվն ըստ դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, Թրեական Վարչական գործեր
2. Հարուցված քրեական գործերի թիվը, կարճված գործերի թիվը, մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի թիվը, դատապարտման հանգեցրած գործերի թիվը, արդարացնող վճռով գործերի թիվը
3. Հարուցված քրեական գործերն ըստ խախտման տեսակի և քրեական օրենսգրքի հոդվածի Խախտման տեսակի ներքո նկատի ունենք խախտման նկարագրությունը, իսկ հոդվածը՝ համապատասխան իրավական որակումը
4. Մեկ գործի շրջանակներում ներգրավված ամբաստանյալների թիվը
5. Դատապարտման հանգեցրած գործերն ըստ դատարանների և դատավորների,
6. Դատապարտման հանգեցրած գործերով ներկայացվող խախտումների տեսակները և պատասխանատվության տեսակը
7. Դատաքննության տեսակը ըստ խախտումների,
8. Դատաքննության տեսակը ըստ խախտումների և փաստաբան/պաշտպանի ներգրավվածությունը
9. Դատարանի որոշման համար հիմք հանդիսացած մեղմացնող հանգամանքները
10. Դատարանի որոշման համար հիմք հանդիսացող ծանրացնող հանգամանքները և այլն:

Ընտրական խախտումները, ընդհանուր առմամբ, վերլուծվել են հետևյալ դասակարգիչներով,

1. Տեղի ունեցած խախտումների տեսակները
2. Տեղի ունեցած խախտումներն ըստ դրանց արձանագրման (խախտումներ, որոնք արձանագրվել են, խախտումներ որոնք չեն արձանագրվել)

3. Ում պահանջով կամ պնդմամբ են արձանագրվել խախտումները, եթե արձանագրվել են (նշել ըստ խախտումների տեսակների, քանակի և արձանագրման),
4. Եթե արձանագրվել են, ինչ արդյունքի են հասցվել,
5. Խախտումների տեսակներն ըստ դրանց արձանագրողների,
6. Խախտումների տեսակներն ըստ հանձնաժողովի նախագահի և անդամների գործողությունների-արձագանքի,
7. Ընտրատեղամաս/ընտրատարածքը, որտեղ ամենաշատն են տեղի ունեցել խախտումներ
8. Որ մարզում կամ համայնքում է գտնվել այդ ընտրատեղամասը/ընտրատարածքը
9. Ամենաշատ հանդիպող խախտումների տեսակը
10. Ամենաշատը դրսևորվող խախտումներն ըստ մարզերի:
11. Ամենաշատը դրսևորվող խախտումները և դրանց արդյունքները՝ վարչական կամ քրեական պատասխանատվություն, այլ:
12. Ում կողմից են արձանագրվել ամենաշատը հանդիպող խախտումները:
13. Խախտումների տեսակները և հանձնաժողովի գործողությունները
Այստեղ պետք է խմբավորել, օրինակ՝ ուրիշի փոխարեն քվեարկություն, և այդ ենթավերնագրի տակ ներկայացնել հավաքական հանձնաժողովի գործողությունները և մեկ-երկու օրինակ:
14. Խախտումների ընդհանուր քանակը և արձանագրված խախտումների քանակը:
15. Խախտումների տեսակներն ըստ ընտրատարածքների
16. Խախտումների տեսակներն ըստ ոստիկանության գործողությունները
17. Խախտումների տեսակներն ըստ հետագա ընթացքի
18. Խախտումների տեսակներն ըստ դրանք իրականացնողների՝ հանձնաժողովի նախագահ, անդամ, դիտորդ, վստահված անձ, այլ քաղաքացի
19. Խախտումների տեսակը, խախտման հեղինակը և պատասխանատվության միջոցը և այլն:


Ըստ համապատասխան դասակարգիչների իրականացված վերլուծությունը ներկայացվել է պատմողական շարադրանքի միջոցով՝ ներկայացնելով համապատասխան օրինակները և դրսևորումները:

Բաժին 1 Քվեարկության ընթացքում, քվեների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացքում տեղի ունեցած խախտումներ

Ընդհանուր տեղեկություններ


Ընդհանուր առմամբ ընտրախախտումների վերաբերյալ ԶԼՄ հրապարակումների և տարբեր կազմակերպությունների կողմից ներկայացված զեկույցների ուսումնասիրության արդյունքում արձանագրել ենք 1513 ընտրախախտում: Ընդ որում, հանրաքվեի ընթացքում արձանագրվել են նախորդ տարիների ընտրություններին կիրառված ընտրախախտումների բոլոր դրսևորումները՝ ուրիշի փոխարեն քվեարկություններ, ընտրակաշառք, լցոնումներ, կրկնակի քվեարկություններ, բռնություններ և այլ: Ստորններկայացված աղյուսակում պատկերված են խախտումներն ըստ դրանց քանակի:

Պետք է նշել, որ բոլոր այն դեպքերը, երբ հրապարկման մեջ նշված է եղել մի քանի խախտման մասին, սակայն խախտումների քանակը նշված չի եղել (օրինակ՝ դիտորդն արձանագրել է լցոնման մի քանի դեպք կամ անհայտ անձը քվեարկել է մի քանի անգամ), նման դեպքերն հաշվարկվել են որպես մեկ խախտում:



Ըստ արձանագրված խախտումների տեսակի առանձնացվել են այն որակյալ խախտումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ քվեարկության ընդհանուր արդյունքների վրա: Խախտումները որպես որակյալ և քվեարկության արդյունքների վրա ազդեցություն ունեցող գնահատվել են նաև հաշվի առնելով, թե դրանք ընտրատեղամասում ինչպես են դրսևորվել և ինչ ազդեցություն են ունեցել տվյալ ընտրատեղամասի քվեարկության գործընթացի վրա:

Որպես որակյալ խախտումներ են գնահատվել.



Արձանագրված ընդհանուր խախտումներից, ըստ էության, 61%-ը (926 խախտում) կազմել են որակյալ խախտումները, որտեղ գերակշռել են այլ անձի փոխարեն քվեարկության, ընտրատեղամասում առաջացած կուտակումների, ուղղորդման դեպքերը:

Կուտակումների և ուղղորդման դեպքերը գնահատվել են որպես որակյալ խախտումներ՝ հաշվի առնելով դրանց ազդեցությունը տվյալ ընտրատեղամասում «այո» և «ոչ» քվեների բաշխման հարաբերակցության վրա: Նկատվել է այն օրինաչափությունը, որ բոլոր այն ընտրատեղամասերում որտեղ մարդիկ խմբերով են բերվել կամ տեղամասում տեղի են ունեցել կուտակումներ, այդ տեղամասերում գերակշռել են «այո» քվեաթերթիկները:

Քվեարության ընթացքում տեղի ունեցած խախտումների տեսակները

Քվեատուփի լցումում

Հանրաքվեի ընթացքում գրանցվել է քվեատուփի լցուման 28 խախտում: Ընդ որում, տարբեր ընտրատեղամասերում քվեատուփի լցումներ իրականացրել են ինչպես քաղաքացիները, այնպես էլ ընտրության կազմակերպման գործընթացին մասնակցող անձինք՝ հանձնաժողովի անդամները և վստահված անձինք: Հատկանշական է, որ բոլոր այն տեղամասերում, որտեղ կատարվել է լցումում հանձնաժողովի նախագահը (հիմնականում՝ նախագահը) կամ քարտուղարը եղել է Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ: Այդ տեղամասերից շատերում հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պաշտոնում նշանակված են եղել նաև Բարգավաճ Հայաստան կուսակցության ներկայացուցիչները: Քվեատուփի լցուման 28 դեպքերից գրանցամատյանում արձանագրվել են ընդամենը 4-ը, որոնցից միայն երեքի դեպքում խախտումն ավարտին չի հասցվել, քանի որ տվյալ հանձնաժողովների ՀԱԿ ներկայացուցիչները կանխել են դրանք:

7/10 ընտրատեղամասում դիտարկում իրականացնող դիտորդներից մեկը, ով արձանագրել է լցուման փաստը նշել է՝ «Վստահված անձը 2 քվեաթերթիկ լրացրեց քվեախցիկում, առանց անձնագրի դրոշմակնիքեցին քվեաթերթիկները և գցեցին քվեատուփի մեջ՝ ասելով, որ կատարեց իր քաղաքացիական պարտքը»¹⁰:

25/33 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամներից մեկը «Ազատություն» ռադիոկայանի նկարահանման ընթացքում մի քանի անգամ քվեաթերթիկներ է գցել քվեատուփի մեջ»¹¹:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ հանձնաժողովի անդամներն արհեստական խառնաշփոթ են ստեղծել, որպեսզի աննկատ խախտումներ եւ մասնավորապես լցումում կատարելու հնարավորություն ստեղծվի:

34/28 ընտրատեղամասերում քաղաքացին մի քանի ծրար է գցել քվեատուփի մեջ, ինչը տեսանկարահանվել է դիտորդի կողմից¹²: Տեսանկարահանման ընթացքում, սակայն, հանձնաժողովի անդամներից մեկը փորձել է խոչընդոտել դիտորդի աշխատանքը՝ շեղելով վերջիններիս ուշադրությունը, փակելով նրանց տեսադաշտը:

7/3 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամները և վստահված անձինք «պատ» են կազմել դիտորդի դիմաց, որպեսզի վերջինս չտեսնի լցուման դեպքը: Մինչև, դիտորդին հաջողվել է շրջանցել վերջիններիս և արձանագրել միջադեպը, ինչից հետո հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի մի քանի անդամներ մոտ 20 րոպե համոզել են, որ միջադեպը չարձանագրվի:

¹⁰ Էլիսիյան կոմիտեի դիտորդների կողմից թիվ 7 ընտրատարածքում արձանագրված նախնական խախտումները՝ հանրաքվեի վերաբերյալ: Հրապարակված է՝ 06 դեկտեմբեր 2015, ժամը՝ 21:59 <http://www.aravot.am/2015/12/06/636680/>

¹¹ Գասկածելի քվեարկություն՝ Լեոնանիստ գյուղում: Azatutyun Radiokayan: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 7-ին: <https://www.youtube.com/watch?v=vk29A9IO32I>

¹² Լցումում 34/28 տեղամասում: TI Armenia: Հրապարակված է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին՝ <https://www.youtube.com/watch?v=Yunpd12R1y8>

Այնուհանդերձ միջադեպն արձանագրվել է հետևյալ կերպ՝ «19:20 րոպեին տեղի էր ունենում լցոնման փորձ, բայց նախագահի միջնորդությամբ կասեցվեց»¹³:

4/26 ընտրատեղամասում գրանցվել է նաև քվեաթերթիկների գողության և դրանով պայմանավորված նաև արդյունքների փոփոխության դեպք: Անհայտ անձը գողացել է «ոչ» քվեարկված քվեաթերթիկների որոշակի քանակություն և դրանք փոխարինել նույնքան «այո» քվեարկված քվեաթերթիկներով, ինչի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով հարուցվել է քրեական գործ:¹⁴ Գրանցված գրեթե բոլոր դեպքերում հանձնաժողովի նախագահն և այլ անդամները փորձել են կոծկել նման դեպքերը՝ առանձին դեպքերում փորձելով պայմանավորվածություն ձևաբանելու միջոցով արձանագրողների հետ կամ խոչընդոտելով վերջիններիս աշխատանքը:

Ինչպես երևում է լցոնման հետևանքով «այո» և «ոչ» քվեաթերթիկների քանակական տարբերություն է գրանցվել, ինչը ենթադրում է, որ քվեարկության արդյունքների կեղծումը ավելի մեծ թիվ է կազմել, քան հնարավոր է եղել արձանագրել դիտորդների կողմից:

Այլ անձի փոխարեն քվեարկություն

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում արձանագրված որակյալ խախտումներից մեծ թիվը կազմել է ուրիշի փոխարեն իրականացված քվեարկությունները՝ ընդհանուր 152 դեպք: Ուրիշի փոխարեն քվեարկությունների արդյունքում, ընդհանուր առմամբ, կեծված քվեների քանակությունը, ցավոք հնարավոր չի եղել դուրս բերել, քանի որ քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ ուրիշի փոխարեն քվեարկված քվեաթերթիկների նույնականացման հնարավորություն չի եղել:

Սույն հետազոտության շրջանակներում առանձնացվել են ուրիշի փոխարեն քվեարկության և կրկնակի քվեարկության դեպքերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր դեպքերում է, որ ուրիշի փոխարեն քվեարկությունը նույն անձի կողմից մեկից ավել անգամ իրականացված քվեարկություն է, բացի այդ, ուրիշի փոխարեն քվեարկության ոչ բոլոր դեպքերն են դիտավորյալ բնույթ կրել: Մինչդեռ, կրկնակի քվեարկության կամ կրկնակի քվեարկության փորձի բոլոր դեպքերը դիտավորյալ բնույթ են կրել:

Որոշ դեպքերում խախտման պատճառ է դարձել նույնականացման քարտերի վրա քաղաքացիների հասցեների բացակայությունը, որի հետևանքով քաղաքացիները քվեարկել են ուրիշի փոխարեն, ով նույն անունը կամ ազգանունն է ունեցել: Որոշ դեպքերում էլ հանձնաժողովի անդամները գրանցամատյանի չլրացված հատվածներում գրանցել են մտացածին տվյալներ և կատարել ուրիշի փոխարեն քվեարկություն: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ մի ընտրատեղամասում արդեն քվեարկած քաղաքացին մեկ այլ ընտրատեղամասում քվեարկել է ուրիշի փոխարեն՝ կատարելով կրկնակի քվեարկություն:

¹³ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔԿԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 7

¹⁴ Թիվ 4/26 ընտրատեղամասում հանրաքվեի արդյունքները կեղծելու փաստով հարուցված քրեական գործն ընդունվել է վարույթ: Հրապարակված է՝ 24.12.2015 | 18:14: <http://galatv.am/hy/news/4-26-3/>

6/4 ընտրատեղամասում քաղաքացու պնդմամբ քվեարկել են մի մարդու փոխարեն, ով 16-17 տարի երկրում չի բնակվել: Քաղաքացին նաև նշել է, որ բոլոր ընտրություններին նույնը կրկնվել է¹⁵:

14/4 ընտրատեղամաս՝ քաղաքացին վաղ առավոտյան տեղամասում պարզել է, որ իր ընտանիքի բոլոր անդամների փոխարեն քվեարկել են, այն դեպքում երբ ընտանիքի անդամները քվեարկության չեն եկել՝ «Մեր տանը սաղ քնած են, հլը ոչ մեկ չի եկել ընտրության»¹⁶ հայտարարել է քաղաքացին

Մեկ ուրիշ դեպքում 32 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամ Ն.Հովհաննիսյանը նույն տեղամասի ընտրողներ, նույն բնակարանում հաշվառված Մ.Փափազյանի, Հ.Դեմիրճյանի և Թ.Բարսեղյանի անունների դիմաց գրառել է մտացածին անձնագրային տվյալներ, մատյանում ստորագրել վերջիններիս փոխարեն և քվեարկել¹⁷:

34/01 ընտրատեղամասում գրանցված այլ անձի փոխարեն քվեարկության դեպքի առնչությամբ հանձնաժողովի նախագահը բացատրել է, որ նույնականացման քարտի վրա հասցեի բացակայությունն է հանգեցրել նման խնդրի(նկատի ունի այլ անձի փոխարեն քվեարկությանը): Դա է եղել պատճառը, որ հանձնաժողովի անդամը գրանցելիս սխալվել է: Հանձնաժողովի նախագահը քաղաքացուն, ում փոխարեն քվեարկել են, առաջարկել է քվեարկել մեկ ուրիշի փոխարեն՝ սլաքով փոփոխելով անունների տեղը: Սակայն քաղաքացին և միջադեպն արձանագրող լրագրողը նախագահին բացատրել են, որ դա միևնույն խախտումն է, ինչից հետո նախագահը նշել է, որ որպես խախտման փոխհատուցում անվավեր կճանաչի քվեատուփում առկա «այո»-ի քվեաթերթիկներից չորսը՝ «չորս հատ այո-ի քվեաթերթիկ անվավեր կճանաչեմ: Ես գիտեմ որ դուք այո-ն չեք ուզում անցնի: Բնձ համար մեկ է»¹⁸:

Հատկանշական է, որ բոլոր այն դեպքերում, երբ քաղաքացին չի բարձրաձայնել կամ պահանջել արձանագրել տեղի ունեցած խախտումը, հանձնաժողովի նախագահը կամ անդամները չեն արձանագրել տվյալ խախտումը: Երեք դեպքում խախտումները գրանցամատյանում չեն արձանագրվել, քանի որ քաղաքացու կողմից բողոք չի ներկայացվել:

Խախտումները չեն արձանագրվել նաև այն դեպքերում, երբ քաղաքացին, ում փոխարեն քվեարկել են, չի ցանկացել, որպեսզի խախտումն արձանագրվի:

Թեև հանձնաժողովի համար խախտումների արձանագրման անմիջական, ուղղակի պարտականություն ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված չէ, այնուամենայնիվ, ընտրական գործընթացների օրինականության ապահովման պատասխանատվություն կրում են ընտրական հանձնաժողովները, հետևաբար վերջիններս պետք է խախտումների կանխարգելման նպատակով արձանագրեն նաև խախտումները:

¹⁵Քաղաքացու փոխարեն քվեարկել են: HetqTV: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին:

<https://www.youtube.com/watch?v=QuU306lz-Lc>

¹⁶ Քաղաքացին հայտնաբերեց իր և ընտանիքի անդամների անունների դիմաց արդեն ստորագրել են: Epress. am:

Հրապարակվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին՝ <https://www.youtube.com/watch?v=S8PRI2WxCXs>

¹⁷ Ընտրատեղամասի հանձնաժողովի անդամը մեղադրվում է այլ անձանց փոխարեն քվեարկելու մեջ : news.am:

Հրապարակված է՝ 19:35, 14.01.2016: <http://news.am/arm/news/306293.html>

¹⁸ Գյումրի. բացակա հարազատներդ արդեն «քվեարկել են»: CivilNet TV: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին:

<https://www.youtube.com/watch?v=EtUm1fJRPVs>

Գյումրիի 35/40 ընտրատեղամասում այլ անձի փոխարեն քվեարկության երկու դեպք է եղել, սակայն գրանցվել է միայն մեկը, քանի որ մյուս դեպքում քաղաքացին չի բողոքել: Տեղամասի հանձնաժողովի նախագահը նշել է, թե՛ *“Մենսացիոն բան չի եղել, այն աստիճանի չի եղել, որ նախագահին դիմեն այդ հարցը պարզաբանեն: Տեղում պարզաբանվել, լուծվել է եղ բոլոր հարցերը: Քաղաքացին ինձ բողոք չի ներկայացրել, որ ես հարցին լուծում տամ”*¹⁹:

Հաշվի առնելով վերոնշյալը կարելի է եզրակացնել, որ նախագահն անտեսել է նման խախտումները դրանք որակելով «ոչ սենսացիոն»: Այլ անձի փոխարեն քվեարկության դեպքերը հիմնականում «արդարացվել են» հանձնաժողովի անդամների կողմից դրսևորված անփութությամբ. հանձնաժողովի անդամն ուշադիր չի եղել, գրանցելիս սխալվել է, հասցեները կամ անուններն է շփոթել:

Գրանցվել են նաև դեպքեր, երբ հանձնաժողովի նախագահները քաղաքացիներին, ում փոխարեն քվեարկված է եղել, առաջարկել են սպասել մինչև քվեարկության ավարտը և քվեարկել քվեարկությանը չմասնակցած այլ անձանց փոխարեն:

Նման վարքագիծը և վերաբերմունքը վկայում է այն մասին, որ հանձնաժողովի անդամներն ուրիշի փոխարեն քվեարկելու և այդ միջոցով քվեարկությունը կեղծելու պրակտիկան համարում են ընդունելի, և դա ընտրական իրավունքի խախտում չի դիտարկվում:

9/32 ընտրատեղամասում այլ անձի փոխարեն քվեարկության դեպքի արձանագրումից հետո հանձնաժողովի ՀՀԿ-ն ներկայացնող նախագահը քաղաքացուն, ում փոխարեն քվեարկել են, առաջարկել է սպասել մինչև քվեարկության ավարտը և քվեարկել քվեարկության չեկած քաղաքացիներից մեկի փոխարեն՝ *«ես իրան առաջարկում եմ սպասենք, վերջում տեսնենք՝ ով չի գա ազատ տեղում ստորագրեք»*²⁰:

Որոշ տեղամասերում հանձնաժողովի անդամների համար ընդունելի է եղել ընտանիքի անդամների՝ ամուսնու, կնոջ, տատիկի կամ պապիկի փոխարեն քվեարկությունը:

1/04 ընտրատեղամասում մի տղամարդ փորձել է քվեարկել կնոջ անձնագրով: Հանձնաժողովի անդամը գրանցել է վերջինիս և տվել քվեաթերթիկն ու ծրարը:

Եղել են դեպքեր, երբ քվեարկության սկզբնական և ավարտական (հիմնականում՝ ավարտական) փուլերում **հանձնաժողովի անդամները քվեարկել** են այլ անձանց փոխարեն, ովքեր մինչ այդ պահը չեն մասնակցել քվեարկությանը: Մասնավորապես՝ 9/27 ընտրատեղամասում ժամը 09-ի դրությամբ գրանցամատյանում արդեն լրացված էջեր են եղել: Մինչդեռ, քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թիվն ավելի քիչ է եղել: Գրանցամատյանում ընտրողների անունների դիմաց համապատասխան ստորագրությունը ևս չի

¹⁹ Հովհարային անջատումներ ընտրատեղամասերում: ԳԱԱ հեռուստաընկերություն: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: https://www.youtube.com/watch?v=sCLjBSXM_38

²⁰ Հանձնաժողովը թողնում է՝ ում տեղն ուզում ես քվեարկիր: CivilNet TV: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=II1a5aie1qY>

եղել, ինչի վերաբերյալ հանձնաժողովի ներկայացուցիչը նշել է, որ *«մոռացել է»* և *ազատ ժամանակ կատրագրի նրանց փոխարեն»²¹*:

7/10 ընտրատեղամասում *«Ժամը 19:00-ից հետո հանձնաժողովի անդամը քարտուղարի հետ ստորագրել են չներկայացած քաղաքացիների փոխարեն՝ քարտուղարի մոտ փոքրիկ թղթի վրա եղած ցանկին համապատասխան»²²*»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք ընտրատեղամասերում դիտորդներն արձանագրել են քվեարկությանը փաստացի մասնակցած անձանց և ընտրական ցուցակների անհամապատասխանությունը, ակնհայտ է, որ նման դեպքեր եղել են նաև այլ ընտրատեղամասերում:

Կրկնակի քվեարկություն

Հանրաքվեի ընթացքում մի շարք ընտրատեղամասերում գրանցվել է կրկնակի և բազմակի քվեարկության 35 դեպք: Քաղաքացին մի քանի անգամ քվեարկել է միևնույն ընտրատեղամասում, քանի որ հանձնաժողովի անդամները անգործություն են դրսևորել. չեն ստուգել քաղաքացու անձնագիրը, համապատասխան կնիք չեն դրել անձնագրերի վրա: Նույնիսկ դիտորդի կամ վստահված անձի կողմից արձանագրված կրկնակի կամ բազմակի քվեարկության դեպքերը անուշադրության են մատնվել հանձնաժողովների նախագահների կողմից: Դիտորդների կամ վստահված անձանց կողմից արձանագրված կրկնակի կամ բազմակի քվեարկության դեպքերից գրանցամատյանում արձանագրվել են միայն 4-ը: Որոշ դեպքերում կրկնակի քվեարկություն կատարած անձինք փորձել են ահաբեկել կամ հոգեբանորեն ճնշել խախտումը տեսանկարահանած կամ արձանագրած դիտորդներին: Նույնիսկ այլ անձանց կողմից այդ փաստի արձանագրումն անուշադրության է մատնվել հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից, ինչը փաստում է, որ հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից դրսևորված անփութությունը և անգործությունը միտումնավոր է եղել: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ նույնականացման քարտերով իրականացված ընտրությունները հնարավոր չի եղել վերահսկել, քանի որ կրկնակի կամ բազմակի քվեարկության դեպքերը բացառելու համար նախատեսված կնիքը նույնքականացման քարտերի վրա չի դրվել, ինչը մի քանի անգամ քվեարկելու լրացուցիչ հնարավորություն է ստեղծվել: Ընդ որում, տեղամասերից մեկում (7/14 ընտրատեղամաս) նույնականացման քարտերով իրականացված քվեարկությունները գրանցամատյաններում չեն

²¹ Հանրաքվեի լրահոսը ըստ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության: Հրատարակված է՝ 06 դեկտեմբեր 2015, ժամը՝ 07:12: <http://www.asparez.am/news-hy/newsline-referendum-6-12-2015-qaghaqaci-ditord-1/>

²² ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔԿԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 12

արձանագրվել: Մա նշանակում է, որ տվյալ տեղամասում քաղաքացու՝ հանրաքվեի մասնակցության վերաբերյալ որևէ գրառում կամ նշում չի կատարվել:

35/01 ընտրատեղամասում դիտորդը նկատել է կրկնակի և բազմակի քվեարկության դեպքեր՝ «Նկատեցի, որ մարդը գալիս է քվեարկում, հետո խցիկից դուրս է գալիս, մոտենում է մյուս կողմում գտնվող երկրորդ գրանցամատյանին եւ էլի մտնում քվեարկության»²³:

11/3 ընտրատեղամասում քաղաքացին երկու անգամ է քվեարկել տարբեր հագուստներով: Տվյալ ընտրատեղամասում երկու նման դեպք է գրանցվել: Երկու դեպքն էլ դիտորդի տեսախցիկն արձանագրել է²⁴:

7/10 ընտրատեղամասում մի անձ քվեարկել է երեք անգամ. տարբեր գլխարկներ է դրել և եկել քվեարկության: Գրանցվել է նաև երկու կրկնակի քվեարկության դեպք²⁵:

Քաղաքացին թիվ 39/39 ընտրատեղամասում մասնակցել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին, որից հետո նույն օրը՝ ժամը 12:30-ի սահմաններում, եղբոր փոխարեն քվեարկելու պատրվակով կրկին մտել է նույն ընտրատեղամաս, ստացել քվեաթերթիկ և կատարել կրկնակի քվեարկություն²⁶:

Գորիս քաղաքի բնակիչ Ա. Գյուրջյանը, ընդգրկված լինելով թիվ 37/02 ընտրատեղամասի ընտրողների ցուցակում, 2015թ. դեկտեմբերի 6-ին գնացել է ընտրատեղամաս և մասնակցել Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին: Ժամը 19:30-ի սահմաններում, կրկին ընտրելու նպատակով նա գնացել է Գորիս քաղաքի թիվ 37/09 ընտրատեղամաս, ստացել քվեաթերթիկ և փորձել քվեարկել այլ անձի փոխարեն²⁷:

²³ «Տեսնում էի՝ շորերի տակից թերթիկ էին հանում, երբեմն «Ոչ»-ը կարդում էին «Այո»»։ դիտորդի բացահայտումները: galatv.am: Հրապարկված՝ 2015 թ. դեկտեմբերի 8-ին ժամը՝ 23:07: <http://galatv.am/hy/news/132855/>

²⁴Տարբեր հագուստներով կրկնակի քվեարկության երկրորդ դեպքն է արձանագրվել: newsbook.am: Հրապարկված է՝ 06. 12. 2015, ժամը՝ 16/16: [/http://newsbook.am/?p=72107%2Ftarber+hagustnerov+krknaki+qvearkuty+erkrord+depgn+e+ardzanagrvel&l=am](http://newsbook.am/?p=72107%2Ftarber+hagustnerov+krknaki+qvearkuty+erkrord+depgn+e+ardzanagrvel&l=am)

Միննույն անձը քվեարկել է տարբեր հագուստներով (լուսանկարներ): newsbook.am: Հրապարկված է՝ 06. 12. 2015, ժամը՝ 15:40: <http://newsbook.am/?p=72101/mievnuy+andzy+qvearkel+e+tarber+hagustnerov+lusankarner&l=am>

²⁵ Հելսինկյան կոմիտեի դիտորդների կողմից թիվ 7 ընտրատարածքում արձանագրված նախնական խախտումները՝ հանրաքվեի վերաբերյալ: «Առավոտ»: Հրապարկված է՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ին, ժամը՝ 21:59: <http://www.aravot.am/2015/12/06/636680/>

²⁶ Եղբոր փոխարեն քվեարկելու մեջ մեղադրվողի գործն ուղարկվել է դատարան, օժանդակողի մասով՝ առանձին վարույթ: ԱԶՍՈՒԹՅՈՒՆ: Հրապարակված է՝ 22.01.2016 <http://www.azatutyun.am/content/news/27503489.html>

²⁷Ավարտվել է թիվ 37/09 ընտրատեղամասում այլ անձի փոխարեն քվեարկելու փորձ կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: ՀԵՏՔ: Հրապարկված է՝ 19:36, 21 հունվարի, 2016 <http://hetq.am/arm/news/65196/avartvel-e-tiv-37-09-yntratexamasum-ayl-andzi-pokharen-qvearkelu-pordz-katarelu-depqi-artiv-harucvats-qreakan-gortsi-nakhaqnnutyuny.html>

Ընտրակաշառք

Հանրաքվեի ընթացքում արձանագրվել է ընտրակաշառքի 15 դեպք: Դիտորդների կողմից արձանագրված ընտրակաշառքի արձանագրումը տեղի է ունեցել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի կերպով: Առաջին դեպքում դիտորդը կամ լրագրողը անձամբ է արձանագրել ընտրակաշառքի դեպքը, երկրորդի դեպքում՝ լսել է կամ տեղեկացրել են հնարավոր ընտրակաշառքի վերաբերյալ: Ընդ որում, քաղաքացիներին որպես ընտրակաշառք տրվել է գումար, սննդամթերք, պահածոներ և այլն: Եղել են նաև քաղաքացիներին կաշառելու բացահայտ դեպքեր:

7/32 եւ 7/33 ընտրատեղամասերի հարակից տարածքում քաղաքացիներից մեկը թիվ 2 համարի երթուղային տաքսիի մեջ ընտրատեղամաս մուտք գործող մարդկանց գումար է բաժանել՝ «էսի պլյուս 5 եմ գրում, բայց հետո մի հատ պիտի տամ»: Տեսնելով տեսախցիկը նախ գումարն է թաքցրել, այնուհետև խոչընդոտել է լրագրողի աշխատանքը՝ նշելով, թե իր ֆինանսական խնդիրներն է կարագորում՝ «պարտքերիս ցուցակն ա, պարտքերս եմ բաժանում»²⁸:

Ինչպես արդեն վերևում նշեցինք, ընտրակաշառք բաժանել են նաև սննդամթերքի տեսքով: Մասնավորապես, 7/20 ընտրատեղամասում, որը գտնվում է Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանում հանրաքվեի օրը ժամը 15:00-ի սահմաններում ընտրելու եկած քաղաքացիներին լավաշ են բաժանել²⁹:

Նույն օրը դիտորդներից մեկը լսել է, թե ինչպես են քաղաքացիներին գումար կամ սննդամթերք առաջարկել Կոնդ թաղամասի «Այո»-ի շտաբի մոտ: Վերջինս տեսել է նաև, թե ինչպես են քաղաքացիները մտնում 9/21 և 9/22 ընտրատեղամասերի մոտակայքում տեղակայված միննույն «Այո»-ի շտաբը, այնուհետև դուրս գալիս շտաբի աշխատակիցների հետ թևանցուկ իջնում ընտրելու: Նույն շտաբի մոտ «Ազատություն» ռադիոկայանի լրագրողը տեսանկարահանել է, թե ինչպես են քաղաքացիները կարտոֆիլով լի տոպրակները տեղավորում ավտոմեքենայում³⁰: Ընտրակաշառք բաժանելու կամ ընտրակաշառքի խոստումների դեպքեր են եղել նույնիսկ ընտրատեղամասերի ներսում:

7/14 ընտրատեղամասի ներսում ՀՀԿ վստահված անձը փորձել է գումար տալ երկու այլ տղամարդու: Տեսնելով, որ լրագրողը նկարահանում է, կինը կաշկանդվել է և նշել՝ «դե լավ հա գյուղացի էլ աղջիկ ես» փորձելով համոզել լրագրողին, որ որևէ արտառոց բան տեղի չի ունենում, այնուհետև պնդել է, որ

²⁸ Ընտրակաշառքի վերաբերյալ ահազանգի հետքերով: Azatutyun Radiokayan: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=O1a7xGMTiGg>

²⁹ ՁԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔԿԵ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼՄԻՆԿՅԱՆ ԿՈՄԻՏԵ, 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 18

³⁰ Ընտրակաշառքի վերաբերյալ ահազանգի հետքերով: Azatutyun Radiokayan: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=O1a7xGMTiGg>

վերջիններս, ֆինանսական հարցեր են կարգավորել, ինչը բնականաբար հաստատել է նաև տղամարդը, ում գումարն այնուհանդերձ կհինը փոխանցել է³¹:

2/06 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամը բոլորի ներկայությամբ տեսախցիկի առջև ուղղակիորեն դիտորդին կաշառելու փորձ է կատարել, քանի որ վերջինս տեսանկարահանել է արդյունքների ամփոփման ընթացքը: Արդյունքի չհասնելով՝ հանձնաժողովի անդամը միանձնյա որոշմամբ ընդհատել է հաշվարկը պայմանով, որ այն կվերսկսի միայն դիտորդի կողմից տեսանկարահանումը դադարեցնելուց հետո³²:

Մինչ հանրաքվեն թիվ 9/2 ընտրատեղամասում քվեարկության ընթացքին վերաբերող ընտրակաշառքի ևս մի դեպք է գրանցվել: Նույն ընտրատեղամասի հանձնաժողովի անդամ նշանակված Զավեն Միրիջանյանը 2015 թվականի նոյեմբերի 25-ին հանդիպել է նույն հանձնաժողովի անդամ նշանակված Վ. Հարությունյանին և կաշառք առաջարկելով պահանջել է ձեռք բերել և իրեն տրամադրել վստահված անձանց տրվող, չլրացված երկու վկայականներ, իսկ հանրաքվեի օրը՝ իր կողմից նշված ժամին որոշակի ժամանակով լքել քվեարկության սենյակը³³:

Այսպիսով, գրանցված 15 դեպքերից արձանագրվել են միայն երկուսը, որոնցից միայն մեկի դեպքում է հարուցվել քրեական գործ և կայացվել է մեղադրական դատավճիռ³⁴:

Ընտրության կազմակերպմանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

Քվեարկության գործընթացի ժամանակ որպես օրինաչափություն հիմնականում խոչընդոտել են հանձնաժողովի ընդդիմադիր ներկայացուցիչների, ինչպես նաև վստահված անձանց լիազորությունների իրականացմանը:

Արձանագրված դեպքերում խոչընդոտման գործիք են ծառայել տարատեսակ բռնությունները, սպառնալիքները, հոգեբանական ճնշումները, անհիմն մեղադրանքները/բանասարկությունները և կաշառելու փորձերը: Ընդ որում, խոչընդոտողներն եղել են ինչպես հանձնաժողովի ներկայացուցիչները և վստահված անձինք(ՀՀԿ, ՀՅԴ, ՕԵԿ³⁵), այնպես էլ անհայտ անձինք, ովքեր հնարավորություն են ունեցել անարգել մտնել ընտրատեղամասեր և խոչընդոտել հանձնաժողովականների և վստահված անձանց աշխատանքները:

³¹ ՀՀԿ վստահված անձն ընտրակաշառք է բաժանում: HetqTV: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 7-ին: <https://www.youtube.com/watch?v=UOYbpSrPx1o>

³² «#15.7 SOS - Մենք արժանի ենք ՀՀԿ-ին»: SOS Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 8-ին՝ <https://www.youtube.com/watch?v=Cj6oPjOvCoI>

³³ Ավարտվել է ՀՀ քաղաքացիների հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը նյութապես շահագրգռելով խոչընդոտելու գործով նախաքննությունը, <http://galatv.am/hy/news/134716/>, Ընտրախախտումների մեղադրանքով կալանավորված Միրիջանյանը ազատ արձակվեց, <http://www.azatutyun.am/content/article/27490322.html>

³⁴ տե՛ս թիվ ԵԿԴ/0313/01/15 քրեական գործը:

³⁵ Ներկայումս Հայկական վերածնունդ

Թիվ 10/14 ընտրատեղամասում տեղի ունեցած միջադեպը, երբ հանձնաժողովի ՀԱԿ անդամ Ալլա Հովհաննիսյանը քվեարկության հետ կապված ճշտումներ կատարելու շուրջ վիճարանել էր իրեն անձանոթ հինգ քաղաքացիների հետ, որի ընթացքում նրանցից մեկը հարվածներ է հասցրել իրեն:

5/01 ընտրատեղամասում հանձնաժողովի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչները ծեծի են ենթարկել հանձնաժողովի անդամ «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ Հրայր Մանուկյանին՝ խախտումները բացահայտելու համար, նրա ձեռքից վերցրել են հեռախոսը և մեկուսացրել³⁶:

6/9 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամներն ագրեսիվ վարքագիծ են դրսևորել մեկ այլ անդամի նկատմամբ, ով խախտում է հայտնաբերել և պահանջել է արձանագրել: Մակայն, ՀՀԿ վստահված անձը մի քանի անգամ հարձակվել է հանձնաժողովի այդ անդամի վրա, այնուհետև ոտքով հարվածել ընտրատեղամասում տեղադրված աթոռին, գորգոռացել, որպեսզի խախտումն այդուհանդերձ չարձանագրվի: Սրա հետ մեկտեղ հանձնաժողովի կին անդամներից մեկը փորձել է կատարված խախտման մեջ մեղադրել խախտման մասին բարձրաձայնող անդամին՝ նշելով, որ "ինքն ա նստել, ինքն էլ ասել ա, արձանագրություն գրեք", ինչի հետ համաձայն են եղել հանձնաժողովի մյուս անդամները³⁷:

10/24 ընտրատեղամասում անհայտ անձը մոտեցել է հանձնաժողովի՝ Ժառանգության կուսակցության անդամին և հարվածներ է հասցրել, նշելով, թե վերջինս հայհոյել է իր կնոջը: Մինչդեռ, հանձնաժողովի անդամը չի ճանաչել այդ մարդուն և որևէ մեկին չի հայհոյել: Հանձնաժողովի անդամին փորձել է պաշտպանել միայն ՀԱԿ վստահված անձը: Ժառանգության ներկայացուցիչը նշել է՝ «Միանշանակ սա սադրանք էր, որն ուղղված էր իմ պարտականությունների իրականացմանը խոչընդոտելուն... Փորձում էի օրինականություն ապահովել, սրա հետ էր կապված»³⁸: Միջադեպից անմիջապես հետո, ոստիկանության ներկայացուցիչները բերման են ենթարկել հանձնաժողովի Ժառանգության անդամին և ՀԱԿ վստահված անձին՝ միջադեպի վերաբերյալ բացատրություն վերցնելու նպատակով, ինչի արդյունքում տեղամասը մնացել է առանց ընդդիմադիր ներկայացուցիչների հսկողության:

Հատկանշական է, որ ոստիկանության ներկայացուցիչները, ովքեր այդ պահին ընտրատեղամասում են եղել, որևէ գործողություն չեն ձեռնարկել աշխատանքների խոչընդոտումները վերացնելու համար, փոխարեն, վստահված անձը շարունակել է ագրեսիվ վարք դրսևորել:

Փաստացի, այդ գործողությունների հետեւանքով խոչընդոտվել է դիտորդների աշխատանքը:

Քվեարկության կազմակերպմանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացման խոչընդոտման 15 դեպքերից արձանագրվել է միայն 5-ը:

³⁶ ՄԻՊ հայտարարություն, Հրայր Մանուկյանի հաղորդման հիման վրա հարուցվել է քրեական գործ: Առավուտ: Հրապարակված է՝ 19:18 | Ղեկտեմբեր 9 2015: <http://www.aravot.am/2015/12/09/638013/>

³⁷ 6/9 ընտրատեղամասում ՀՀԿ-ի վստահված անձը խոչընդոտում է Tert.am-ի լրագրողի աշխատանքը: Tert.am News from all over the world: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին՝ <https://www.youtube.com/watch?v=hBxFvWVQxh0>, Վեճ 6/9 ընտրատեղամասում Tert.am News from all over the world: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին <https://www.youtube.com/watch?v=dzQzeOFETkA>

³⁸ Սադրանք 10/24 տեղամասում. ծեծի է ենթարկվել հանձնաժողովի Ժառանգության ներկայացուցիչը: lin.am: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին https://www.youtube.com/watch?v=3qhxzCu_thY

Ընտրության ընթացքում կիրառված բռնություններ

Դիտորդի նկատմամբ կիրառված բռնություն

Սույն ուսումնասիրության համատեքստում որպես բռնություն են դիտարկվել ոչ միայն ֆիզիկական բռնությունները, այլև դիտորդների նկատմամբ հոգեբանական ճնշումներն ու անհարգալից վերաբերմունքի դրսևորումները, քանի որ որոշ դեպքերում նման դեպքերը հանգեցրել են դիտորդների լիազորությունների դադարեցմանը:

Դիտորդների նկատմամբ կիրառված բռնությունների հիմնական մասը պայմանավորված է եղել դիտորդների խախտումներն արձանագրելու, դրանք տեսանկարահանելու և խախտումների վերաբերյալ բարձրաձայնելու հանգամանքով: Մինչդեռ, ուսումնասիրված խախտումների կեսից ավելին արձանագրվել է դիտորդների կողմից, ինչը փաստում է, որ դիտորդները խոչընդոտ են հանդիսացել պլանավորված խախտումների իրագործման համար: Ավելին՝ դիտորդների նկատմամբ դրսևորված բռնությունները և ճնշումները վկայում են այն մասին, որ հանձնաժողովի անդամները, իրավապահ մարմինները տրամադրված են եղել ոչ թե կանխելու խախտումները և յուրաքանչյուր դեպքում այդ նպատակով աջակցել և ապավինել են դիտորդների գործունեությանը, այլ իրենք անմիջականորեն մասնակցել և առաջնորդել են խախտումները:

Ուսումնասիրության արդյունքում բացահայտված բռնության դեպքերից գրանցամատյաններում արձանագրվել է միայն 2-ը: Մեկ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, և կայացվել է մեղադրական դատավճիռ: Դատապարտյալի նկատմամբ որպես պատիժ դատարանն ընտրել է տուգանքը՝ 600.000 ՀՀ դրամի չափով: Ընդ որում, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի կանոններով, տուգանքի վճարման ժամկետ սահմանել 10 ամիս և թույլատրել տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում՝ ամիսը 60.000 ՀՀ դրամի չափով³⁹:

32/54 ընտրատեղամասում դիտորդը ստիպված է եղել լքել տեղամասը իր նկատմամբ կիրառված հոգեբանական ճնշումների պատճառով: Հոգեբանական ճնշումները նաև պատճառ են դարձել դիտորդի կողմից դիտարկվող ընտրատեղամասի փոփոխությանը⁴⁰:

Անհարգալից վերաբերմունքի դրսևորման դեպք է գրանցվել 29/11 ընտրատեղամասում, որտեղ հանձնաժողովի նախագահը բոլորի՝ այդ թվում նաև ընտրողների ներկայությամբ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչ դիտորդին ասել է, որ վերջինիս ներկայացրած կազմակերպությունն «ամենակեղտոտ» կազմակերպությունն է՝ այդ կազմակերպության նախագահի գլխավորությամբ⁴¹:

³⁹ տե՛ս թիվ ԵԱՔԴ/0020/01/16 քրեական գործը:

⁴⁰ ՁԵԿՈՒՅՑ. Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Վանաձոր, 2016 թ., էջեր 66-67

⁴¹ ՁԵԿՈՒՅՑ. Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Վանաձոր, 2016 թ., էջ 67

Տեղամասերում դիտորդների նկատմամբ անարգել բռնություն են կիրառել ոչ միայն հանձնաժողովի անդամները կամ վստահված անձինք, այլ նաև թաղային հեղինակությունները:

Թիվ 30 ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ Տիգրան Պապանյանը այցելել է տարբեր ընտրատեղամասեր եւ ահաբեկել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդներին⁴²:

8/27 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը խախտել է դիտորդի ազատ տեղաշարժման իրավունքը, խոչընդոտել դիտարկմանը: Դիտորդը վկայակոչել է իր իրավունքները, ինչից հետո հայիոյանքներ են հնչել դիտորդի հասցեին⁴³ հանձնաժողովի նախագահի կողմից:

6/6 ընտրատեղամասում դիտորդին սպառնացել են, որ կջարդեն հեռախոսը: Անձը, ով սպառնացել է, անընդհատ ընտրատեղամասում է եղել, մարդկանց է ուղղորդել, շատ մարդկանց է բերել: Իրավիճակն այդ ընտրատեղամասում, ըստ դիտորդի, անվերահսկելի է եղել, և ինքը ոչինչ չի կարողացել անել⁴⁴:

1/8 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Առնակ Մանուչարյանի սպառնալիքներ է հնչեցրել «Սսպարեզ»-ի դիտորդի հասցեին, ով ցանկացել է դիտարկումն իրականացնել գրանցամատյանների մոտ: Առնակ Մանուչարյանը դիտորդին սպառնացել է նշելով՝ «Կտամ գլուխդ կցրեմ, համբալ», «ոտերդ կջարդեն»: Հանձնաժողովի նախագահին բռնություն կիրառելուց ետ է պահել հանձնաժողովի անդամներից մեկը: Մանուչարյանը հայտարարել է՝ «ոչ մի բան թույլ չի տալիս», իսկ վերջինիս զսպող հանձնաժողովի անդամը դիտորդին ու լրագրողին մատնացույց է արել ընտրատեղամասի սեղաններից բավականին մեծ հեռավորության վրա գտնվող այթոռները և ասել, որ նրանց համար «հատուկ տեղ» են հատկացրել՝ «հատուկ այդ հեռավորության վրա⁴⁵»:

4/1 ընտրատեղամասում ՀՀԿ և ՕԵԿ վստահված անձինք ծեծի են ենթարկել դիտորդներ Ռոմիկ

⁴² Հանրաքվեի լրահոսը ըստ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության: Հրապարակված է՝ 06 դեկտեմբեր 2015, ժամը՝ 07:12: <http://www.asparez.am/news-hy/newsline-referendum-6-12-2015-qaghaqaci-ditord-1/>

⁴³ Հանրաքվեի մեկնարկեց. դիտորդներն առաջին խախտումներն են արձանագրում: epress.am: 12.06.2015, ժամը՝ 09:51: <http://www.epress.am/2015/12/06/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D6%84%D5%BE%D5%A5%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%AF%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%A5%D6%81%E2%80%A4-%D5%A4%D5%AB%D5%BF%D5%B8%D6%80%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%B6-%D5%A1%D5%BC%D5%A1.html>

Հանձնաժողովի նախագահը վիճում է դիտորդների հետ: CivilNet TV: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=cm4Prn6sulw>

⁴⁴ Թաղային հեղինակությունները սպառնացել են ԹԻԱՀԿ դիտորդին, որը փորձել է ֆիքսել խախտումները <https://www.youtube.com/watch?v=r6iCIIh4od0>

⁴⁵ #15.1.1 SOS - 1/8 ընտրատարածք (Մաս 1): SOS: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=-NN8KN1JPpE>

#15.1.2 SOS - 1/8 ընտրատարածք (Մաս 2): SOS: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: https://www.youtube.com/watch?v=6wX_V4niIQs

Հարձակում լրագրողի վրա 01/08 ընտրատեղամասում: TI Armenia: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=87tmXS6cUKQ>

Ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահը պնդում է, թե լրագրողը ցանկանում էր նկարել ցուցակները, իսկ լրագրո: Tert.am News from all over the world: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=xIcTsrxW5k>

Ընտրախախտումներ և կոբիլ ընտրատեղամասերում: armtimes.com: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 7-ին: 4:02-4:55 ժամանակահատված: <https://www.youtube.com/watch?v=paEUDcIoZL0>

Դանիալին և Հակոբ Նազարի-Դեխնավիին: Դանիալի տեսախցիկը վերցրել է ՀՀԿ ներկայացուցիչը և չի վերադարձրել, քանի որ դիտորդները ընտրախախտումներ են նկատել և արձանագրել դրանք: Մինչ այդ միջադեպը Ռոմիկ Դանիալը տեսանկարահանել է մի քաղաքացու, ով ընտրատեղամասում է գտնվել առանց համապատասխան վկայականի, ինչը պատճառ է դարձել, որպեսզի վերջինս թքի դիտորդի երեսին⁴⁶:

Լրագրողների նկատմամբ բռնություն

Լրագրողների նկատմամբ կիրառված բռնությունները, ճնշումները ևս կրել են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բնույթ: Հանձնաժողովի ներկայացուցիչներ, ինչպես նաև վստահված անձինք իլել կամ կոտրել են լրագրողների տեսանկարահանող սարքերը, հարվածել են դրանց, թույլ չեն տվել, որպեսզի լրագրողները տեսանկարահանում իրականացնեն, սպառնացել են նրանց:

10/18 ընտրատեղամասում ընտրական հանձնաժողովի նախագահը ՄիվիլՆեթի նկարահանող խմբին թույլ չի տվել նկարահանում կատարել և հարվածել է տեսախցիկին: Անհարգալից վերաբերմունք է դրսևորել լրագրողի նկատմամբ՝ «արա»-ով դիմելով վերջինիս:

«Ձեր հետ նորմալ խոսում ենք չհասկացանք, կարող ա ձեր երեխեքն ենք մենք, թողել ենք ամեն ինչը, եկել ենք որ ձեր... Հա հասկացանք, դրդում եք, որ անենք»:

5/28 ընտրատեղամասի ՀՀԿ վստահված անձ Արթուր Հայկազի Խուրշուդյանը ներս է մտել, մոտեցել «Հետքի» թղթակցին, գոռացել. «Հերիք չի էստեղ էդքան բզբաք», այնուհետև խլել է «Հետքի» թղթակից Դիանա Ղազարյանի համակարգիչը, որտեղ լրագրողը պատրաստելիս է եղել հերթական նյութը⁴⁷:

Մեկ այլ դեպքում, թիվ 10/20 ընտրատեղամասում հանրաքվեի օրը ժամը 14:30-ի սահմաններում, ՀՀԿ վստահված անձ Դավիթ Միմոնյանը դիտավորությամբ հարվածել ու կոտրել է լրագրողի տեսախցիկը և վնասել լրագրողական վկայականը: Մինչ այդ էլ լրագրողին դուրս է հրավիրել «տղայական» հարաբերություններ պարզելու համար նշելով՝ «արի դուրս հլը տենամ ով էս արա»:

Հարվածելուց հետո արդեն շարունակելով դրսևորել ագրեսիվ վարքագիծ անհարգալից կերպով պահանջել է, որ իրեն հունից չհանեն՝ «Նեովերս չուտեք արա»⁴⁸: Այնուհետև նույն անձը խոչընդոտել է «Ազատություն» ռադիոկայանի լրագրողի աշխատանքը, ով փորձել է հարցեր տալ լրացուցիչ

⁴⁶Օեծեցին դիտորդին, տարան ոստիկանները CivilNet TV: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=AjRXqAHYkKI> , Ռոմիկ Դանիալ. «Նախագահի և որոշ անդամների գերագույն նպատակն էր խանգարել դիտորդի աշխատանքը», հեղ. Կարինե Միմոնյան: Հրապարակված է՝ 22.12.2015: <http://www.azatutyun.am/content/article/27443389.html>

⁴⁷ Ավարտվել է հանրաքվեի լուսաբանող «Հետքի» թղթակցի լիազորությունների ազատ իրականացմանը խոչընդոտելու գործով նախաքննությունը: Հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 8-ին ժամը՝ 16:43: Հղում՝ <http://hetq.am/arm/news/65577/avartvel-e-hanraqven-lusabanox-hetqi-txtaki-liazorutyunneri-azat-irakanacmany-khochyndotelu-gortsov-nakhaqnnutyuny.html>

⁴⁸ Բռնություն լրագրողի հանդեպ 10/20 տեղամասում: Հրապարակված է Թրանսփարենսի ինթերնեշնլի կողմից 2015 թ. դեկտեմբերի 6ին https://www.youtube.com/watch?v=IeEvj9_Pyyw ,

ընտրացուցակներով քվեարկող անձանց՝ «ես ձեզ ավելի լավ տեղեկություն կհայտնեմ, ինչ ինֆորմացիա պետք ա ես ձեզ տամ: Խնդրում եմ դուք մի խոչընդոտեք աշխատանքս»⁴⁹: Տեղի ունեցած միջադեպից անմիջապես հետո վերջինս հրավիրվել է ոստիկանություն, սակայն դեպքի առնչությամբ որևէ գործ չի հարուցվել:

Հարկ է նշել նաև, որ Դավիթ Միմոնյանը վերջին տարիներին իրականացված բոլոր ընտրություններում աչքի է ընկել խախտումների առնչությամբ իր ակտիվությամբ:

Հիմնականում խոչընդոտել է դիտորդների, ընդդիմադիր վստահված անձանց և լրագրողների աշխատանքը: Հաճախ աչքի է ընկել իր ագրեսիվ վարքագծով, բռնություն կիրառելու հակում ունի: Նախորդ տարիներին ևս բռնություն է կիրառել քվեարկությանը մասնակցող անձանց նկատմամբ:

Հատկանշական է, որ այլ ընտրություններում խախտումներ թույլ տալու գործում աչքի ընկած անձը նույն ընտրատարածքում շարունակաբար մասնակցում է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին:

Դիտորդների գործունեության խոչընդոտում

Դիտորդի գործունեության խոչընդոտում հանրաքվեի մեկնարկից անմիջապես հետո, ինչպես նաև քվեարկության ընթացքում ՋԼՄ-ների և դիտորդական առաքելություն իրականացնող մի շարք կազմակերպությունների կողմից արձանագրվել են դիտորդների գործունեության խոչընդոտման բազմաթիվ դեպքեր:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել հանրաքվեի ընթացքում դիտորդների գործունեության խոչընդոտմանն ուղղված հետևյալ հիմնական դրսևորումները՝

- Դիտորդների ընտրատեղամաս տեղափոխման համար նախապես պայմավորվածություն ձեռք բերած տաքսի ծառայությունը առավոտյան հրաժարվել է դիտորդներին տեղափոխել ընտրատեղամաս՝ նշելով, որ համապատասխան մեքենաներ չունի,
- դիտորդին թույլ չեն տվել մասնակցել հանձնաժողովի նիստին,
- արգելել են մոտենալ գրանցամատյաններին,
- արգելել են գրառումներ կատարել,
- սահմանափակել են տեղամասում ազատ տեղաշարժվելու իրավունքը,
- ոստիկանները տևական ժամանակ խոչընդոտել են դիտորդի աշխատանքը՝ վերջինից ինչ-որ միջադեպի առնչությամբ բացատրություն պահանջելով կամ բերման ենթարկելով
- հանձնաժողովի անդամները փակել են դիտորդի տեսադաշտը
- հանձնաժողովի անդամներն շեղել են դիտորդի ուշադրությունը
- հանձնաժողովի անդամները վերցրել են դիտորդի տեսաձայնագրող սարքը
- անհայտ անձը անարգել խոչընդոտել է դիտորդի աշխատանքը հանձնաժողովի նախագահի, անդամների և վստահված անձանց ներկայությամբ,

⁴⁹Երևան, 10/20 ընտրատեղամաս: Հրապարկված է lin.am-ի կողմից 2015 թ. դեկտեմբերի 6ին՝ <https://www.youtube.com/watch?v=wlnsIN-aIL4>

- դիտորդներից պահանջել են այնպիսի տվյալներ, որոնք օրենքով պարտադիր չեն, օրինակ՝ անվանաքարտի վրա նկարի առկայություն, կնիք և այլն:

1/04 ընտրատեղամասերում դիտորդին թույլ չեն տվել մասնակցելու հանձնաժողովի հանրաքվեի մեկնարկից առաջ կազմակերպված նիստին՝ պատճառաբանելով՝ թե վերջինս դրա իրավունքը չունի⁵⁰, որոշ տեղամասերում հանձնաժողովի անդամներն տեղամասում դիտորդներին արգելել են ծանոթանալ գրանցամատյանների տվյալներին, գրառումներ կատարել մասնակիցների թվի վերաբերյալ:

35/01 ընտրատեղամասում դիտորդի նկատմամբ հոգեբանական ճնշումներ են գործադրել, արգելել են մոտենալ ընտրական փաստաթղթերին⁵¹:

Տեղամասերից մի քանիսում դիտորդների և լրագրողների համար քվեախցիկից և հանձնաժողովի զբաղեցրած դիրքից բավականին մեծ հեռավորության վրա աթոռներ են տեղադրել՝ նշելով, որ միայն այդ դիրքից վերջիններս կարող են դիտարկել հանրաքվեի ընթացքը:

Որոշ դիտորդներ նշել են, որ իրենց մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ հանձնաժողովի անդամներին հրահանգված է եղել ի սկզբանե խոչընդոտել դիտորդների աշխատանքը:

Հատկանշական է, որ դիտորդների գործունեությունը խոչընդոտվել է ոչ միայն հանձնաժողովների նախագահների կամ անդամների, այլև վստահված անձանց, ոստիկանների և քաղաքացիների կողմից:

1/24 ընտրատեղամասում քննչական կոմիտեի քննիչները սպառնացել են դիտորդին և ճնշումներ գործադրել վերջինիս վրա: Դիտորդը տևական ժամանակ չի իրականացրել իր պարտականությունները, քանի որ ստիպված է եղել «բացատրություններ» տալ⁵²:

4/01 ընտրատեղամասի դիտորդին հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելու կասկածով ոստիկանության ներկայացուցիչները բերման են ենթարկել, թեև դիտորդը նշել է, որ լուրջ կասկածներ ունի, որ իրեն մեկուսացնելուց հետո հանձնաժողովի անդամներնավելի հեշտությամբ են խախտումներ իրականացնելու:

Նույն ընտրատեղամասում ՀՀԿ և ՕԵԿ վստահված անձինք խլել են մեկ այլ դիտորդի տեսախցիկը, որով վերջինս մինչ այդ պահը մի շարք խախտումներ էր արձանագրել⁵³: Նմանատիպ մեկ այլ դեպք է գրանցվել 9/1 ընտրատեղամասում, որտեղ մի կին բոլորին

⁵⁰ Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpuf>

⁵¹ «Տեսնում էի՝ շորերի տակից թերթիկ էին հանում, երբեմն «Ոչ»-ը կարդում էին «Այո»». դիտորդի բացահայտումները: ԳԱԼԱ: Հրապարակված է՝ 08.12.2015 | 23:07: <http://galatv.am/hy/news/132855/>

⁵² Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpuf>

⁵³ Ծեծեցին դիտորդին, տարան ոստիկանները: Հրապարակված 2015 թ. դեկտեմբերի 6-ին «ՍիվիլՆեթ»-ի կողմից՝ <https://www.youtube.com/watch?v=AjRXqAHYkKI>

ցուցումներ է տվել առանց համապատասխան անվանաքարտի, վերցրել է ընտատեղամասի դիտորդներից մեկի տեսախցիկը, պատճառաբանելով, թե դիտորդն իրեն զուգարան գնալիս տեսանկարահանել է: Մինչդեռ, հետագայում պարզվել է, որ կնոջը դուր չի եկել, որ դիտորդը տեսանկարահանել է իր և հանձնաժողովի անդամի խոսակցությունը⁵⁴:

Ընտրատեղամասերում դիտորդների գործունեության խոչընդոտման դեպքերի մի քանի օրինակներ՝

1/31 ընտրատեղամասում դիտորդին թույլ չեն տվել դիտարկելու ձայների հաշվարկի գործընթացը⁵⁵:

1/24 ընտրատեղամասում դիտորդը ցանկացել է ծանոթանալ գրանցամատյանի գրառումներին, մինչդեռ ՀՀԿ վստահված անձը խոչընդոտել է վերջինիս՝ սկսելով աղմուկ-աղաղակ բարձրացնել⁵⁶:

30/19 և 32/35 ընտրատեղամասերում դիտարկում իրականացնող դիտորդներին իրենց աշխատավայրերից պարտադրել են գնալ ընտրության, ինչի արդյունքում տեղամասը տնական ժամանակ մնացել է առանց հսկողության⁵⁷:

41/6 ընտրատեղամասում դիտորդը հայտնել է, որ հանրաքվեի ընթացքում հանձնաժողովի անդամները նշել են, որ դիտորդներն իրավունք չունեն ծանոթանալ ընտրացուցակներին և փորձել են խոչընդոտել նաև ազատ տեղաշարժին:

Անդրադառնալով դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների գործունեությանը, հարկ ենք համարում նշել, որ խախտումներ են արձանագրվել նաև դիտորդական առաքելություն իրականացնող «Ազատ հասարակության ինստիտուտ»-ի կողմից ներկայացված դիտորդների աշխատանքում: Մասնավորապես՝ 4/13 ընտրատեղամասում «Ազատ հասարակության ինստիտուտ» կազմակերպության ներկայացուցիչ դիտորդը համակարգել է ընտրողների՝ դեպի ընտրատեղամաս տեղափոխման աշխատանքները, իսկ արդեն ընտրատեղամասում ուղղորդել ընտրողներին⁵⁸:

Ուղղորդում

Հանրաքվեի քվեարկության ընթացքում տարածված են եղել նաև հանրաքվեի մասնակիցների ուղղորդմամբ պայմանավորված խախտումները: Քաղաքացիների ուղղորդմանը մասնակցել են ինչպես հանձնաժողովի նախագահն ու անդամները, այնպես էլ վստահված անձինք, քաղաքացիները, իսկ առանձին դեպքերում նաև դիտորդները: Հանրաքվեի ընթացքում իրականացված խախտումների տարածվածությամբ ուղղորդման դեպքերը երկրորդն են ուրիշի

⁵⁴ ՄԻՊ հայտարարություն, Ապել ջան դեմո կինա կանգնած, ինչ մի ձեռ ես գցում. միջադեպ 9/01 ընտրատեղամասում:

ArmLur.am: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=LmtsIZzy7t0>

⁵⁵ Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները

<http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpu>

⁵⁶ Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները

<http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpuf>

⁵⁷ ՁԵԿՈՒՅՑ. Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ: Հելսինկյան

Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Վանաձոր, 2016 թ., էջ 66

⁵⁸ 4/13 տեղամաս: Հրապարակված 2015 թ. դեկտեմբերի 6-ին eTV armenia-ի կողմից՝

<https://www.youtube.com/watch?v=a97aVDts2IU>

փոխարեն քվեարկության դեպքերից հետո: Գրանցվել է ուղղորդմամբ պայմանավորված խախտման առնվազն 141 դեպք:

Հավանական է, որ այս թիվն իրականում ավելի մեծ է, քանի որ արձանագրված խախտման դեպքն իր մեջ պարունակել է ուղղորդման միաժամանակ մի քանի դրվագ: Մակայն դրվագների հստակ թվի բացակայության պայմաններում, այն, ինչպես մնացած դեպքերում, հաշվարկվել է որպես խախտման մեկ դեպք:

Քաղաքացիների ուղղորդումը սկսվել է դեռևս քաղաքացիների «տներից»: Մի քանի երթուղային տաքսիների գծեր և տաքսի ծառայություններ մարդկանց իրենց բնակավայրից տեղափոխել են ընտրատեղամաս հանրաքվեին մասնակցելու համար: Այս աշխատանքները հիմնականում համակարգվել են հանձնաժողովի նախագահների, վստահված անձանց, «Այո»-ի շտաբի համակարգողների միջոցով: «**Z+**», «**Միլենա**» և «**Sion**» տաքսիները, ինչպես նաև թիվ **2, 4, 5 և 75** նշումներն ունեցող մի քանի երթուղային տաքսիներ ողջ օրվա ընթացքում քաղաքացիներին տեղափոխել են «Այո»-ի շտաբ, այնուհետև ընտրատեղամասեր, մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, հանրաքվեի օրը՝ վաղ առավոտյան, որոշ տաքսի ծառայություններ հրաժարվել էին դիտորդներին տեղափոխել ընտրատեղամասեր: Առանձին դեպքերում նույնիսկ վստահված անձինք իրենք իրենց մեքենաներով ընտրատեղամաս են տեղափոխել ընտրողներին:

Բացահայտ ուղղորդման դեպքեր են գրանցվել նաև ընտրատեղամասերի ներսում, երբ հանձնաժողովի ներկայացուցիչները կամ վստահված անձինք ընտրողներին բարձրաձայն հուշել են, թե ինչպես և ինչի օգտին պետք է քվեարկել: Ներսում եղել են նաև «քողարկված» հուշումներ: Մասնավորապես՝ հանձնաժողովի ներկայացուցիչները միջանձնային խուսակցությունների ընթացքում անընդհատ բարձր կրկնել են «Այո» բառը, կամ մոտեցել ընտրողներին և շշուկով ինչ-որ բան հաղորդել: Քաղաքացիներին (հիմնականում՝ տարեցներին) ուղղորդել են նաև քվեարկության ընթացքում օգնելու պատրվակով: Առանց համապատասխան գրանցման միայն մեկ տեղամասում գրանցվել է 50-ից ավել «օգնության» դեպք:

Որոշ ընտրատեղամասերում ՀՀԿ վստահված անձինք իրենց տրամադրության տակ ունեցել են ընտրողների առանձին ցուցակներ, որի համաձայն զանգահարել են քաղաքացիներին և պարտադրել են, որպեսզի վերջիններս մասնակցեն քվեարկությանը:

4/1 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը 3 անգամ մտել է քվեախուց ընտրողին օգնելու համար, որոնցից մեկ անգամը հստակ լսվել է, որ ասում է «ձախը կնշես» արտահայտությունը նաև մի քանի անգամ առանց քվեախցին մոտենալու է հուշել քաղաքացիներին⁵⁹:

7/10 ընտրատեղամաս դիտորդի խոսքերով՝ վստահված անձը շատ ակտիվ համագործակցել է հանձնաժողովի նախագահի հետ: Նրանք միասին զանգել են տարբեր մարդկանց և կանչել քվեարկության: Վստահված անձը (ՀՀԿ)-ը դիմավորում էր ընտրողներին, վերցնում անձնագրերը և ուղեկցում քվեարկության ընթացքում⁶⁰:

⁵⁹ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻԶ ԶԵԿՈՒՅՑ. Երևան 2016, էջ 37

⁶⁰ Դիտորդների կողմից թիվ 7 ընտրատարածքում արձանագրված նախնական խախտումները: Հրապարակված է՝ Դեկտեմբեր 6, 2015 թ., ժամը 21:55, <http://www.a1plus.am/1422841.html>

Դիտորդի խոսքերով՝ «7/15 ընտրատեղամաս էին բերում նաև մեծահասակների, որոնց օգնում են քվեարկել, սակայն քվեարկողների անունները չեն գրանցվում գրանցամատյանում»: Տվյալ ընտրատեղամասում ժամը 13:00-ի դրությամբ գրանցվել է 54 օգնության դեպք⁶¹:

1/01, 1/02, 1/03, 1/04, 1/12, 1/16 ընտրատեղամասերում ՔՀԻ շրջիկ մեքենաները նկատել են «Z+» և Միլենա տաքսի ծառայության տաքսիներ, որոնք «Այո»-ի շտաբերի մոտից ընտրողներին տեղափոխել են տարբեր ընտրատեղամասեր՝ քվեարկելու: Տեղափոխումները պարբերաբար շարունակվել են⁶²:
Լուսանկարներ՝



3/18 ընտրատեղամասում ոստիկանության համար նախատեսված սենյակում, քվեաթերթիկը տեղամասից դուրս հանելու փորձ կատարած երիտասարդը խոստովանում է, որ ինքը Հանրապետականի շտաբից է, ցուցակով մարդկանց բերել է և ուղղորդել է քվեարկության ընթացքում, քանի որ ինքը ակտիվ է և իրեն դա հանձնարարել են Հանրապետականի շտաբից⁶³:

34/30 ընտրատեղամասի առջևում մի քաղաքացի ուղղորդել է ընտրողներին, հարցրել նրանց անձնական տվյալները: Լրագրողի միջամտությունից հետո վերջինս իր գործը շարունակում է արդեն տեղամասի մոտ գտնվող մեքենայի մեջ⁶⁴:

6/6 ընտրատեղամասում ՀՀԿ վստահված անձ Վլադիմիր Գալստյանը քվեարկության սկզբից մինչև վերջ ուղղորդել է քվեարկողներին, մասնավորապես՝ 2-3 անգամ մտել է նրանց հետ քվեախուց⁶⁵:

⁶¹ Հելսինկյան կոմիտեի դիտորդների կողմից թիվ 7 ընտրատարածքում արձանագրված նախնական խախտումները՝ հանրաքվեի վերաբերյալ: «Առավոտ»: Հրատարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին, ժամը՝ 21:59: <http://www.aravot.am/2015/12/06/636680/>

⁶² Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpuf>

⁶³ ՀՀԿի երիտասարդը տեղամասում ստուգում է՝ արդյոք «իր մարդիկ» եկել են քվեարկելու, Epress. am: Հրատարակվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին՝ <https://www.youtube.com/watch?v=OAFbXIIzbvM>

⁶⁴ Ահազանգեր Գյումրու տարբեր ընտրատեղամասերից: ԳԱԼԱ Հեռուստաընկերություն: Հրատարակվել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին՝ <https://www.youtube.com/watch?v=-4OW9FX31rw>

⁶⁵ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻԶ ԶԵԿՈՒՅՑ. Երևան 2016, էջ 37

Կուտակում

Դիտորդներն արձանագրել են կուտակումների բազմաթիվ դեպքեր ինչպես ընտրատեղամասի ներսում, այնպես էլ դրանից դուրս՝ ընտրատեղամասին բավականին մոտ տարածության վրա: Ուսումնասիրելով արձանագրված կուտակումների բոլոր դեպքերը, կարելի է փաստել, որ հանձնաժողովի նախագահները չեն կարգավորել ստեղծված իրավիճակը: Հակառակը՝ նման պայմաններում հանձնաժողովը խիստ ծանրաբեռնված է աշխատել, ինչի արդյունքում դիտորդների և վստահված անձանց համար առավել բարդ է եղել վերահսկել իրավիճակը: Որոշ ընտրատեղամասերում միննույն ժամանակ մինչև 40 ընտրող է եղել: Հատկանշական է, որ ընտրատեղամասում կուտակումները մի քանի ժամ շարունակվել են:

Ընտրական օրենսգրքով արգելվում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Այս դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից: Սակայն, ինչպես արդեն վերևում նշեցինք, կուտակումների կանխարգելման համար գործողություններ չեն ձեռնարկվել: Անձինք, ովքեր մոտ են գտնվել ընտրատեղամասին, ուղղորդել են քաղաքացիներին, փորձել են կրկանկի քվեարկություն կատարել, սպառնացել են դիտորդներին, միջամտել են հանձնաժողովի աշխատանքներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ տեղամասերի ներսում, ինչպես նաև դրանցից դուրս կուտակումները պարբերաբար կրկնվել են և շարունակական են եղել, այնուամենայնիվ, ոստիկանությունն, իր հերթին, ընտրատեղամասի հարակից տարածքում կուտակումները բացառելու կամ արգելելու ուղղությամբ որևէ գործողություն չի ձեռնարկել:

8/25 ընտրատեղամասի ներսում միննույն ժամանակահատվածում մոտ 30-35 հոգի է կուտակվել: Հանձնաժողովի ներկայացուցիչներից մեկը նշել է, որ կուտակված խմբի որոշ անձինք նկատվել են նաև նախորդ ընտրություններում:

7/1 ընտրատեղամասում 15:00-19:00 դիտորդը դրսում և քվեարկության սենյակում արձանագրել է կուտակումներ⁶⁶:

7/32 ընտրատեղամասում քվեարկության վերջին ժամերին մեծացել է ընտրողների հոսքը: Նրանք ժամանել են խմբերով, նույն մեքենաներով և դրանցով էլ հեռացել⁶⁷:

34/29 ընտրատեղամասում սևազգեստ մի խումբ երիտասարդներ հսկողություն են իրականացրել, ազատ ելումուտ են արել ընտրատեղամասում⁶⁸:

⁶⁶ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 5

⁶⁷ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 23

⁶⁸ Սեւազգեստ ջահելների թիկնապահությամբ հանրաքվե՝ Գյումրու Սլաբոդկա թաղամասում. (Տեսանյութ): Հրապարակվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին ժամը՝ 19:52: <http://www.aravot.am/2015/12/06/636577/>

Ընդհանուր առմամբ գրանցվել է կուտակումների 153 դեպք, որոնցից որևէ մեկը չի արձանագրվել:

Քվեարկության գաղտնիության պահպանման խախտում

Հանրաքվեի ընթացքում քվեարկության գաղտնիության պահպանման խախտմանն ուղղված երեք դրսևորվում 1. ընտրատեղամասը, որտեղ պետք է անցկացվեր հանրաքվեն, սխալ է կահավորված եղել կամ դրա ներսում եղել են գաղտնիության պահպանման խոչընդոտող սարքավորումներ կամ իրեր, 2. քվեարկության գաղտնիության պահպանումը խախտվել է հանձնաժողովի նախագահի, անդամի կամ վստահված անձի կողմից և 3 քաղաքացին ինքն է խախտել քվեարկության գաղտնիությունը:

Այսպես, մի շարք ընտրատեղամասերում քվեախցիկների հետևում դռներ են եղել, որից քվեարկության ընթացքում ներսուդուրս են արել հանձնաժողովի ներկայացուցիչները, ինչպես նաև որոշ ընտրատեղամասերում քվեախցիկներն պատռված են եղել, ինչի հետևանքով տեսանելի է դարձել ընտրություն կատարելու համար նախատեսված հատվածը: Եղել են ընտրատեղամասեր, որոնց ներսում տեսախցիկներ կամ հայելիներ են տեղադրված եղել: Միևնույն ժամանակ գրանցվել են բաց քվեարկության բազմաթիվ դեպքեր, երբ քաղաքացին քվեաթերթիկը բացեիբաց է լրացրել կամ լրացնելուց հետո բոլորին հայտնել է, թե ինչպես է քվեարկել: Եղել են դեպքեր, երբ քվեարկության գաղտնիության պահպանումը խախտել են հանձնաժողովի նախագահները, անդամները և վստահված անձինք: Վերջիններս առանձին դեպքերում մոտեցել են քվեախցիկին և հետևել, թե ինչպես են քաղաքացիները քվեարկում, հարցրել են, թե ինչպես են քաղաքացիները քվեարկել և այլն:

10/2 ընտրատեղամասի դիտորդը նկատել է, որ տեսախցիկներ են տեղադրված պատի վրա՝ քվեախցերի անմիջապես վերևում: Հանձնաժողովի նախագահ Հակոբյան Հակոբը պնդել է, որ քվեախցերը տեղափոխել չի կարող, իսկ տեսախցիկները անջատված են, սակայն չի փորձել ճշտել, թե արդյոք այդ տեսախցիկներով դիտարկում իրականացվել է թե ոչ, կամ ում կողմից են դրանք տեղադրված եղել, եղել են արդյոք մինչև քվեարկությունը⁶⁹:

4/1 ընտրատեղամասում ժամը 11:30-ի սահմաններում դիտորդն արձանագրել է քվեարկության գաղտնիության խախտում: Մասնավորապես՝ ՕԵԿ վստահված անձ Մարգարետ Դալլաքյանը, ԲՀԿ վստահված անձ Մհերը և հանձնաժողովի նախագահ Արմեն Ազոյանը մոտեցել և ուշադիր զննել են քաղաքացու քվեարկելու պահը⁷⁰:

30/31 ընտրատեղամասի քվեախցիկի էտնամասում հայելային մակերես է եղել, որը թույլ է տվել տեսնել, թե ինչպես են քվեարկել⁷¹:

⁶⁹ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻՉ ՁԵԿՈՒՅՑ. Երևան 2016, էջ 35

⁷⁰ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻՉ ՁԵԿՈՒՅՑ. Երևան 2016, էջ 35

⁷¹ ՁԵԿՈՒՅՑ. Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Վանաձոր, 2016 թ., էջ 67

«8/27 ընտրատեղամասի ընտրախցիկի հետևում դուռ է եղել, որից ներսուղուրս են արել նույնիսկ քվեարկության ընթացքում»:

6/6 ընտրատեղամասում չորս անգամ պատռել են քվեախցիկները, և հանձնաժողովի անդամների համար տեսանելի է եղել, թե ով ինչ է ընտրում⁷²:

Ընտրացուցակների հետ կապված խախտումներ, լրացուցիչ ցուցակներ

Հանրաքվեի քվեարկության ընթացքում արձանագրվել է ընտրացուցակների հետ կապված 63 խախտում: Դրանք հիմնականում դրսևորվել են Հայաստանի Հանրապետությունում հաշվառումից հանված քաղաքացիների, ինչպես նաև մահացածների վերաբերյալ ընտրացուցակներում տվյալների առկայությամբ:

Բացի այդ, խնդիրներ են ծագել նաև լրացուցիչ ընտրացուցակների առնչությամբ: Լրացուցիչ ցուցակներով քվեարկությանը մասնակցող քաղաքացիները հիմնականում ընտրատեղամասեր են այցելել միասին միկրոավտոբուսներով, գրանցված են եղել միևնույն հասցեում, տեղյակ չեն եղել, թե տեղեկանքի համաձայն իրենք ինչ հասցեում են գրանցված: Նման դեպքերում, քաղաքացիներին ուղեկցել են անհայտ անձինք կամ վստահված անձինք, ովքեր քաղաքացիներին ուղղորդել են, վերջիններիս փոխարեն նշել են հասցեն:

Որոշ դեպքերում մեծ թվով քաղաքացիներ գրանցված են եղել միևնույն հասցեում: Քաղաքացիներից ոմանք հայտնել են, որ իրենց տան հասցեում անձանոթ անձինք են գրանցված եղել, որոնց իրենք չեն ճանաչել: Ցուցակներում եղել են նաև մահացած անձանց անուններ:

7/11 ընտրատեղամաս. եղել է դեպք, երբ ընտրողը հայտարարել է, որ ամուսինն արդեն 4 տարի է մահացած է, բայց նրա անունը ընտրացուցակում եղել է: Ընդ որում՝ կինը նախապես դիմել է, որ ամուսնու անունը հանեն ընտրացուցակից⁷³:

1/16 ընտրատեղամասում ՔՀԻ դիտորդն արձանագրել է, որ մահացած անձի անվան դիմաց մեկ այլ անձ փորձել է ստորագրել⁷⁴:

11/21 ընտրատեղամասում քաղաքացիներից մեկը պարզել է, որ իր տանը մեկ այլ անձանոթ անձ է գրանցված⁷⁵:

⁷² Թաղային հեղինակությունները սպառնացել են ԹԻԱՀԿ դիտորդին, որը փորձել է ֆիքսել խախտումները: 1in.am LIVE, հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին՝ <https://www.youtube.com/watch?v=r6iCIIh4od0>

⁷³ Հելսինկյան կոմիտեի դիտորդների կողմից թիվ 7 ընտրատարածքում արձանագրված նախնական խախտումները՝ հանրաքվեի վերաբերյալ: «Առավոտ»: Հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին, ժամը՝ 21:59: <http://www.aravot.am/2015/12/06/636680/>

⁷⁴ Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpu>

Դիտորդներից մի քանիսը հանրաքվեի օրն արձանագրել են, որ տեղամասերի մոտ անհայտ անձինք տեղեկանքներ են բաժանել քաղաքացիներին, որոնցով էլ վերջիններս մասնակցել են քվեարկությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ մարդիկ քվեարկության են եկել միասին միկրոավտոբուսներով, տեղյակ էլ չեն եղել, թե իրենց ձեռքում ինչ փաստաթուղթ է եղել, և որտեղ են իրենք գրանցված համաձայն լրացուցիչ ցուցակների, կարելի է պնդել, որ տեղեկանքներն օգտագործվել են, որպես քվեարկության արդյունքները կեղծելու լրացուցիչ միջոց, ինչպես նաև քվեարկությանը մասնակցող քաղաքացիների ընտրությունը վերահսկելու և քաղաքացիներին ուղղորդելու գործիք: Ստորև ներկայացնենք լրացուցիչ ցուցակներով պայմանավորված խախտման մի քանի դեպքեր, որոնք արձանագրվել են հանրաքվեի օրը տարբեր ընտրատեղամասերում:

7/23 ընտրատեղամասում լրացուցիչ ցուցակներով 15:30-ի դրությամբ ընտրությանը մասնակցել է 44 ընտրող, որոնց գերակշռող մասը երիտասարդ աղջիկներ ու երիտասարդ տղաներ են եղել, որոնք գրանցված են եղել նույն հասցեում: Այդ հանգամանքի վերաբերյալ դիտորդի հարցին ի պատասխան՝ ՀՀԿ-ի վստահված անձը նշել, որ նրանք ուսանողներ են և բոլորը ապրում են մի տան մեջ:

Նույն տեղամասում մի աղջիկ տեղեկանքով ներկայացել է լրացուցիչ ցուցակում քվեարկելու համար, նրա ձեռքում եղել է նաև մեկ այլ տեղեկանք, ինչի հետ կապված վերջինս ասել է հանձնաժողովի անդամներին, թե այդ տեղեկանքով էլ գնում է քվեարկելու մեկ այլ դպրոցում⁷⁶:

4/28 ընտրատեղամասում լրացուցիչ ցուցակներով քվեարկությանը մասնակցող քաղաքացիները դիտորդի այն հարցին, թե արդյոք ոստիկանությանը դիմում է ներկայացվել լրացուցիչ ցուցակով ընտրություն կատարելու համար, պատասխանել են, տեղյակ չեն, քանի որ ծանոթն է իրենց սովել այդ տեղեկանքը:

10/18 ընտրատեղամասում անընդհատ կուտակումներ են տեղի ունեցել, բացի դրանից 232 լրացուցիչ ընտրող է գրանցված եղել: Լրացուցիչ ցուցակով ընտրողները հիմնականում գրանցված են եղել տարբեր գյուղերում, սակայն ՀԱԿ վստահված անձի այլ կարծիք է ունեցել՝ «պարզ երևում է, որ այդ ընտրողներն մայրաքաղաքի բնակիչներ են: Լրացուցիչ ցուցակները մեկ ժամվա ընթացքում երկու անգամ թարմացվել են»:

1/11 ընտրատեղամասում ընտրողներից մեկը ՔՀԻ դիտորդին հայտնել է, որ ընտրատեղամասից դուրս

⁷⁵ Ծենգավիթի ընտրատեղամասերում: a1plusnews, Հրապարկված՝ 2015թ, դեկտեմբերի 6-ին: <https://www.youtube.com/watch?v=L2pupn46sCI>

⁷⁶ Հելսինկյան կոմիտեի դիտորդների կողմից թիվ 7 ընտրատարածքում արձանագրված նախնական խախտումները՝ հանրաքվեի վերաբերյալ: «Առավոտ»: Հրապարկված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին, ժամը՝ 21:59: <http://www.aravot.am/2015/12/06/636680/>

մի խումբ տղամարդիք անձնագրեր են բաժանել երիտասարդների, որոնցով վերջիններս պետք է մասնակցեին քվեարկությանը: Երբ ՔՀԻ դիտորդը դուրս է եկել՝ ստուգելու և արձանագրելու խախտումը, նկատել է, որ մի խումբ տղամարդիք փաստաթղթեր են բաժանել, սակայն երբ դիտորդին նկատել են, արագ հեռացել են⁷⁷:

7/3 ընտրատեղամասում ժամը 18:21-ին Հարությունյան Լիաննա անունով ՀՀԿ վստահված անձը, ով կից՝ 7/2 ընտրատարածքում է հիմնականում եղել, մշտապես ազատ ներսուղուրս է արել 7/3 տեղամաս, ինչպես նաև լրացուցիչ ցուցակում ընդգրկված մի աղջկա է ուղեկցել ընտրության, ով տեղյակ չի եղել, թե որտեղ է ինքը գրանցված: Լիաննա Հարությունյանն աղջկա փոխարեն ներկայացրել է հասցեն⁷⁸:

7/4 ընտրատեղամաս ժամը 18:00-ի դրությամբ տեղամասի մուտքի մոտ 7-8 մարդ է կանգնած եղել, խրցով թղթեր են ունեցել իրենց մոտ, բաժանել են քաղաքացիներին և նշել, որպեսզի վերջիններս ընտրատեղամասում ասեն, որ լրացուցիչ ցուցակով են եկել քվեարկության⁷⁹:

Այլ ընտրախախտումներ

Հանրաքվեի ընթացում գրանցվել են դեպքեր, երբ մի ընտրատեղամասում միննույն կուսակցության ներկայացուցիչների թիվը մեկից ավել է եղել:

7/1 ընտրատեղամասում կային ՀՀԿ-ից միաժամանակ 3 վստահված անձ:

7/17 ընտրատեղամասում ՀՀԿ-ից երկու վստահված անձ է գրանցվել⁸⁰:

8/25 ընտրատեղամասում ժամը 23:02 սահմաններում դիտորդն արձանագրել է, քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում տեղամասում են եղել մի քանի վստահված անձիք նույն կուսակցությունից (ՀՀԿ, 4-6 հոգի)⁸¹:

⁷⁷ Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpu>

⁷⁸ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 06-ը ղեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 6-7

⁷⁹ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 06-ը ղեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 9

⁸⁰ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 06-ը ղեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 17

⁸¹ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻԶ ԶԵԿՈՒՅՑ. Երևան 2016, էջ 40

Հանրաքվեի ընթացքում գրանցվել են ընտրության կազմակերպման համար անհրաժեշտ պարագաների պահպանման և օգտագործման կանոնների խախտմամբ պայմանավորված հետևյալ դրսևորումներ, որոնք ևս ազդեցություն են ունեցել քվեարկության գործընթացի վրա՝

- Քվեարկության կնիքը սխալ է օգտագործվել. ծրարի վրա դրվել է գրանցամատյանի համար նախատեսված կնիքը,
- տարբեր տեղամասերում հանրաքվեի տարբեր ժամանակահատվածներում քվեարկության կազմակերպման համար անհրաժեշտ պարագաները բացակայել են կամ անհետացել,
- որոշ տեղամասերում քվեատուփերը կնքված չեն եղել,
- քվեախցերում դրված են եղել ցնդող գրիչներ,
- գրանցամատյանում առկա է եղել քվեարկողի ստորագրությունը, մինչդեռ համապատասխան անհատական կնիքը դրված չի եղել,
- առանձին ընտրատեղամասերում հանձնաժողովների ներկայացուցիչները կնիքները դուրս են հանել ընտրատեղամասերից,
- բազմաթիվ դեպքերում ընտրողների անձնագրերի վրա համապատասխան կնիք չի դրվել,
- քվեաթերթիկները առանց անհրաժեշտության առանձնացվել են ելուստներից,
- քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները քվեաթերթիկները լցրել են գետնին՝ հաշվարկ կատարելու նպատակով,
- քվեատուփը և չմարված քվեաթերթիկները մնացել են առանց հսկողության,
- գրանցամատյաններում եղել են բազմաթիվ սխալներ և վրիպումներ:

35/34 ընտրատեղամասի քվեախցում դրված են եղել ցնդող գրիչներ⁸²:

7/2 ընտրատեղամասում ժամը 20:46 սահմաններում ՁԼՄ ներկայացուցիչը արձանագրել է քվեարկության պարագաների դուրս բերում ընտրական տեղամասից: Մասնավորապես՝ լրագրողը նկատել է, թե ինչպես է հանձնաժողովի անդամը դուրս եկել կնիքով և որոշ ժամանակ անց կրկին վերադարձել տեղամաս⁸³:

34/28 ընտրատեղամասի դիտորդը նկատել է, որ ընտրատեղամասի փակվելուց քիչ առաջ անհայտ մի անձ քվեատուփի մոտ գտնվող հանձնաժողովի անդամից վերցրել է տեղամասի կնիքը և դուրս հանել տեղամասից: Որոշ ժամանակ կնիքն իբր փնտրել են և չեն գտել, ապա այն նորից հայտնվել է տեղամասում⁸⁴:

⁸² Սահմանադրական հանրաքվեի ընթացքը (թարմացվող): Միվիլնեթ, հրապարկված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին ժամը՝ 09:24: http://civilnet.am/2015/12/06/constitutional-referendum-online-update/#.Vt_NpH2LT4Y ,

⁸³ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻԶ ԶԵԿՈՒՅՑ. Երևան 2016, էջ 36

⁸⁴ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻԶ ԶԵԿՈՒՅՑ. Երևան 2016, էջ 37

1/08 ընտրատեղամասում քվեարկողի ծրարի վրա սխալ կնիք են դրել, այնուհետև ծրարը փոխվել է նորով, նույն քվեաթերթիկը դրվել է նոր ծրարում, սակայն սխալ կնքված ծրարը չի մարվել⁸⁵:

13/23 ընտրատեղամասում գրանցվել է քվեաթերթիկների պահպանման խախտման դեպք: Տեսանյութում հստակ երևում է, որ ընտրատեղամասում քվեաթերթիկները լցված են գետնին, մինչդեռ պետք է պարկի մեջ փակված լինեին և կնքված:

Անձր հաստատող ոչ համապատասխան փաստաթղթով քվեարկություն

Գրանցվել են դեպքեր, երբ քաղաքացին ընտրությանը մասնակցել է առանց անձնագրի:

16/23 ընտրատեղամասում քաղաքացուն թույլ են տվել քվեարկել կենսաչափական անձնագրով⁸⁶:

«7/11 ընտրատեղամաս լրացուցիչ ցուցակներում գրանցված մի ընտրող եկավ, նրա անունը գտան ցուցակում, բայց նա քվեարկեց առանց հանձնաժողովի անդամի կողմից նրա անձր հաստատող փաստաթուղթը ստուգելու»՝ տեղամասի դիտորդ:

Ընտրական «կարուսել»-ի կիրառում

Գրանցվել են նաև ընտրական կարուսելի դեպքեր, երբ քաղաքացիները իրենց հետ տեղամաս են բերել նախապես քվեարկված քվեաթերթիկները:

35/01 ընտրատեղամասի դիտորդը նշում է՝ «Մի հատ ծրար դատարկ գտանք, այսինքն դատարկ ծրար էին գցել, թերթիկ էին տարել: Հետո նկատում էի, որ գալիս էին, հատկապես աղջիկները ծոցերից էին հանում՝ շորերի տակից, քվեաթերթիկ էին հանում»⁸⁷:

10/14 ընտրատեղամասում առանձին քաղաքացիներ ներկայացել են ընտրության արդեն իսկ իրենց մոտ եղած ծրարներով և դրանք գցել քվեատուփի մեջ⁸⁸:

⁸⁵ Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpuf>

⁸⁶ Գեղանիստում քաղաքացուն թույլ են տվել քվեարկել կենսաչափական տվյալներով անձնագրով. ահազանգ: Past.am: Հրապարկված 2015 թ. դեկտեմբերի 6-ին, ժամը՝ 15:36: <http://past.am/?p=25475&l=am>

⁸⁷ «Տեսնում էի՝ շորերի տակից թերթիկ էին հանում, երբեմն «Ոչ»-ը կարդում էին «Այո»». դիտորդի բացահայտումները: galatv.am: Հրապարկված՝ 2015 թ. դեկտեմբերի 8-ին ժամը՝ 23:07: <http://galatv.am/hy/news/132855/>

⁸⁸ Թիվ 10/14 ընտրատեղամասում տեղի ունեցած ենթադրյալ ընտրախախտումների փաստով հարուցվել է քրեական գործ: «Հետք» լրատվամիջոց: Հրապարկված 2015 թ. դեկտեմբերի 28-ին: <http://hetq.am/arm/news/64775/tiv-10-14-yntreatexamasum-teni-uncats-entadryal-ynttrakhakhtumneri-pastov-harucvel-e-qreakan-gorts.html>

Խախտումների տեսակներն ըստ դրանք իրականացնողների

Ընտրական հանձնաժողովների կողմից խախտումների արձանագրման գործընթացի և ըստ խախտում կատարող անձանց խախտումների դասակարգման արդյունքները ցույց են տալիս, որ հանձնաժողովի կողմից խախտումները չարձանագրելու միտումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ հիմնականում հենց հանձնաժողովի անդամները կամ նախագահն են հանդիսացել խախտման հեղինակը կամ մասնակիցը: Քանի որ նույն անձը միաժամանակ թույլ է տվել մի քանի խախտում կամ մասնակցություն է ունեցել այլ անձանց կողմից իրականացվող խախտումներին, ապա խախտումների թիվն ըստ դրանց իրականացնողների և մասնակիցների տարբերվում է բացահայտված խախտումների ընդհանուր հանրագումարից:

Ստորև պատկերված աղյուսակում ներկայացված են խախտման տեսակներն և դրանց իրականացմանը անմիջական մասնակցություն ունեցող անձանց քանակը:

Աղյուսակ Խախտման տեսակներն ըստ խախտում կատարած անձանց					
Խախտման տեսակը	Խախտման իրականացնողը				
	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի անդամ	Վստահված անձ	Դիտորդ	
				Քաղաքացի	Քաղաքացի
Քվեատուփի լցում	24	34	4	0	11
Ուրիշի փոխարեն քվեարկություն	11	122	6	0	16
Դիտորդի գործունեության խոչընդոտում	29	32	6	0	11
Դիտորդի նկատմամբ բռնություն	10	5	16	0	12
Ընտրակաշառք	1	3	0	0	9

ընտրության մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը:	7	6	5	1	7
Լրագրողի նկատմամբ բռնություն	4	4	4	0	0
Լրագրողի գործունեության խոչընդոտում	5	1	0	0	1
քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում իրականացված ապօրինություններ	38	28	9	0	6
Կրկնակի քվեարկություն	14	35	4	0	47
Կուտակում	35	0	0	0	6
Ընդհանուր	178	270	54	1	126

Խախտումների իրականացման գործում ամենամեծ մասնակցությունն ունեցել են հանձնաժողովի անդամները: Միայն ուրիշի փոխարեն քվեարկությամբ պայմանավորված խախտումներում իրենց անմիջական մասնակցությունն են ունեցել 122 հանձնաժողովի անդամներ: Ընդհանուր առմամբ, խախտմանն անմիջական մասնակից է դարձել թվով 369 հանձնաժողովի անդամ: Խախտումների իրականացմանը մասնակցության առումով երկրորդը հանձնաժողովների նախագահներն են (280 նախագահ):

Քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում իրականացված ապօրինությունների մասնակից են դարձել հանձնաժողովների 38 նախագահներ: Հիմնականում հանձնաժողովների նախագահների (29) և անդամների (32) կողմից է խոչընդոտվել դիտորդների աշխատանքը, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ հանձնաժողովների ներկայացուցիչներին կաշկանդել և խանգարել է դիտորդների ներկայությունը և գործունեությունը:

Դիտորդները խախտմանը մասնակից են դարձել միայն երեք դեպքում: Երկու դեպքում հանձնաժողովների նախագահների պահանջով դիտորդները բերման են ենթարկվել ոստիկանության կողմից: Մինչդեռ մասնակիցները ուղղորդմանը անմիջական մասնակցություն ունեցող «Ազատ հասարակության ինստիտուտի»-ի դիտորդը առանց խոչընդոտների շարունակել իր գործունեությունը հանրաքվեի ընթացքում:

Խախտման անմիջական մասնակիցներ են եղել նաև քաղաքացիները, ովքեր կատարել են կրկնակի քվեարկություն (47), ուրիշի փոխարեն քվեարկություններ (16), դիտորդների նկատմամբ բռնություն են կիրառել(12) և այլն: Հարկ ենք համարում նշել, որ բացի «ուղղորդված» քաղաքացիների դեպքերից, մյուս բոլոր խախտման դրսևորումները, որոնց մասնակից են եղել քաղաքացիները, հաշվարկվել են:

Հատկանշական և ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ խախտման իրականացմանը մասնակից 96 վստահված անձանց մեծամասնությունը ներկայացրել է Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Միայն մեկ դեպքում է խախտմանը մասնակից եղել ընդդիմադիր կուսակցության («Ժառանգություն») վստահված անձը, ով քարոզչություն է իրականացրել ընտրատեղամասում:

Քվեների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացքում տեղի ունեցած խախտումներ

Քվեների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացքում տեղի ունեցած որակյալ խախտումներ

Քեարկության ավարտից հետո քվեարկության արդյունքների ամփոփումը ևս ուղեկցվել է մի շարք խախտումներով, որոնք էապես ազդել են հանրաքվեի վերջնական արդյունքների վրա: Մի շարք ընտրատեղամասերում քվեաթերթիկները «հափշտակվել են» և փոփոխվել: Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ խախտումների 79 դեպք:

4/26 ընտրատեղամասում ժամը 21:00-ի սահմաններում անհայտ անձը գողացել է «Ոչ»-ի քվեաթերթիկները ու ավելացրել նույնքան «Այո»-ի քվեաթերթիկներ՝ կեղծելով քվեարկության արդյունքները⁸⁹:

1/22 ընտրատեղամասում քվեարկությանը 636 անձ է մասնակցել, սակայն հաշվարկի ժամանակ քվեաթերթիկների քանակը եղել է 779⁹⁰:

7/16 ընտրատեղամասում գրանցամատյաններում արձանագրված հանրաքվեի մասնակիցների թիվը հաշվելուց հետո պարզվել է, որ քվեարկությանը մասնակցել է 950 ընտրող, մինչդեռ քվեարկության ընթացքում հատկացվել էր 930 քվեաթերթիկ⁹¹:

Որոշ ընտրատեղամասերում քվեաթերթիկների թիվն ավելի շատ է եղել, քան գրանցամատյանում գրանցված ընտրողների թիվը, ինչպես նաև՝ գրանցամատյանում գրանցված ընտրողների թիվը գերազանցել է քվեատուփում առկա քվեաթերթիկների թվին:

Քվեաթերթիկների հաշվարկման ընթացքում առանձին տեղամասերում «Ոչ» քվեարկված քվեաթերթիկները անհարկի անվավեր են ճանաչվել. միատեսակ նշում ունեցող «Այո»-ի քվեաթերթիկները համարվել են վավեր, իսկ «Ոչ»-ինը՝ անվավեր: Ընդ որում, ակնհայտ անվավեր «Այո» քվեարկված քվեաթերթիկներն են համարվել վավեր:

7/16 ընտրատեղամասում վավեր են ճանաչվել նույնիսկ այն «Այո» քվեարկված քվեաթերթիկները, որոնցում նշումի փոխարեն գրված է եղել «այո» բառը, իսկ «ոչ» քվեարկված քվեաթերթիկները, որոնց

⁸⁹ Թիվ 4/26 ընտրատեղամասում հանրաքվեի արդյունքները կեղծելու փաստով հարուցված քրեական գործն ընդունվել է վարույթ: ԳԱԼԱ: Հրապարակված է 24.12.2015 | 18:14 <http://galatv.am/hy/news/4-26-3/>

⁹⁰ Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpu>

⁹¹ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔԿԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 17

նշումը մի փոքր դուրս է եկել համապատասխան վանդակից, համարվել են անվավեր⁹²:

Ձայները վավեր կամ անվավեր ճանաչելիս, հանձնաժողովի ոչ բոլոր անդամների կարծիքն է հաշվի առնվել: Տեղամասերում, որտեղ արդյունքների ամփոփման ընթացքում պարզ է դարձել, որ «Ոչ» քվեարկված քվեաթերթիկների թիվն ավելին է, քան «Այո»-, հանձնաժողովի ներկայացուցիչները սկսել են «Ոչ» քվեարկված քվեաթերթիկները անվավեր ճանաչել:

Առանձին տեղամասերում իրականացված վերահաշվարկից հետո ձայների համամասնությունը կտրուկ փոփոխվել է: Միայն նման մեկ դեպքում, կեղծվել է շուրջ 700 ձայն:

Քվեների հաշվարկի խախտումների դեպքեր են արձանագրվել այնպիսի հանգամանքներում, երբ նախապես տվյալ տեղամասը հոսանքազրկվել է կամ, օրինակ՝ հանձնաժողովի անդամներից մեկն առողջական խնդիրներ է բարձրաձայնել՝ դրանով իսկ շեղելով ներկաների ուշադրությունը: Նման ընտրատեղամասերում հոսանքազրկումից անմիջապես հետո «այո» քվեարկված քվեաթերթիկների թիվը զգալիորեն ավելացել է, և հետևաբար նվազել «ոչ» քվեաթերթիկների թիվը: Ակնհայտ է, որ հոսանքազրկումն օգտագործվել է լցնումն աննկատ իրականացնելու համար, քանի որ դրանից անմիջապես հետո, որոշ տեղամասերում զգալիորեն փոփոխվել են քվեարկության արդյունքները: Միայն երկու ընտրատեղամասերի հաշվարկների տվյալներով «Այո» քվեարկված քվեաթերթիկների թիվը **ավելացել է 454-ով**, իսկ «Ոչ» քվեարկված քվեաթերթիկների թիվը **պակասել է 406-ով**:

7/14 ընտրատեղամասում քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ, ժամը 22:26-ին, տեղամասը մի քանի րոպեով հոսանքազրկվել է: Այդ պահի դրությամբ «Այո» քվեարկված քվեաթերթիկների թիվը կազմել է 137, իսկ «Ոչ» քվեարկված քվեաթերթիկներինը՝ 166: Ժամը 22:32-ին տեղամասը կրկին 30 րոպե հոսանքազրկվել: Ժամը 23:22-ին դիտորդի հաշվարկներով «Այո» քվեարկված քվեաթերթիկների թիվը մոտավորապես կազմել է 358, «Ոչ» քվեարկված քվեաթերթիկներինը՝ 367, իսկ անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 50: Մակայն արդյունքների ամփոփման ժամանակ «Այո» քվեարկված քվեաթերթիկների մոտավոր թիվը կազմել է 572, «Ոչ» քվեարկված քվեաթերթիկներինը՝ 91, իսկ անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 132⁹³:

4/12 ընտրատեղամասում քվեաթերթիկների հաշվարկի ընթացքում հանձնաժողովի անդամներից երկուսն իրենց վատ են զգացել, շտապ օգնության կանչ է գրանցվել, ինչի հետևանքով հաշվարկը դադարեցվել է: Այդ ընթացքում, Ժառանգության ներկայացուցչի հաղորդմամբ, տեղի է ունեցել լցնում, քանի որ գրանցամատյանում առկա է եղել 613 ընտրողի անուն, մինչդեռ քվեատուփից հանվել է 1213 քվեաթերթիկ:⁹⁴

⁹² ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔԿԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 17

⁹³ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔԿԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 15

⁹⁴ Սահմանադրական հանրաքվեի ընթացքը (թարմացվող): Միվիլնեթ: Հրապարակված է՝ 6 դեկտեմբեր, 2015 - 9:24: <http://civilnet.am/2015/12/06/constitutional-referendum-online-update/#.VwZAA5yLT4Y>, ժամանակահատվածը՝ 23:54

Ընտրախախտման մյուս դեպքում հանձնաժողովի անդամներից մեկի առողջական խնդիրները շեղել են քվեարկության արդյունքների ամփոփմանը մասնակցող անձանց ուշադրությունը, ինչը հնարավորություն է ստեղծել փոփոխել քվեաթերթիկների հարաբերակցությունը :

Այսինքն՝ արդյունքների փոփոխությունը հիմնականում պայմանավորված է եղել լցոնմամբ կամ ձայների հափշտակությամբ և փոփոխությամբ:

7/4 ընտրատեղամասում նախնական հաշվարկներով «Ոչ» քվեարկված քվեաթերթիկների թիվը կազմել է 407, «Այո» քվեարկված քվեաթերթիկներինը՝ 187, հանձնաժողովի անդամները արհեստական իրարանցում էին ստեղծել, որից հետո քվեաթերթիկների վերահաշվարկից հետո «Ոչ» քվեարկված քվեաթերթիկների թիվն արդեն կազմել էր 208, «Այո» քվեարկված քվեաթերթիկներինը՝ 368: Իրարանցման արդյունքում քվեաթերթիկները միտումնավոր խառնել էին:

Նման դեպքում հանձնաժողովի նախագահները և անդամները հրաժարվել են գրանցամատյաններում որևէ արձանագրություն կազմել, նույնիսկ հաշվի չեն առնվել այլ անդամների կարծիքները, քանի որ խախտումների անմիջական կատարողը կամ մասնակիցը հենց իրենք են եղել: Միայն մի քանի դեպքերում խախտմանը մասնակից են եղել նաև վստահված անձինք, իսկ առանձին դեպքերում նաև անհայտ անձինք: Խախտումները մեծ մասամբ արձանագրվել են դիտորդների (36 դեպք) և վստահված անձանց (11 դեպք) կողմից: Քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում իրականացված խախտումների միայն 4 դեպք գրանցվել է 5/13 ընտրատեղամասում, 3-ը՝ 7/15 ընտրատեղամասում:

Առանձին ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների նախնական տարբերակները փոփոխվել են հանձնաժողովների նախագահների կողմից: Մի շարք ընտրատեղամասերում հանձնաժողովի նախագահները վերջնական արձանագրությունը կազմել են ակնհայտ կեղծ արդյունքների տվյալներով: Այս մասին վկայում են ուսումնասիրության շրջանակներում դիտարկված գրանցամատյանները: Ընտրատեղամասերի գրանցամատյանների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ քվեարկության արդյունքները գրանցամատյաններում «շտրիխի» միջոցով ներկվել և նորից են գրվել, ինչպես նաև արձանագրվել է դեպք, երբ հանձնաժողովի նախագահի կողմից կազմված քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը չի համապատասխանել գրանցամատյանում արձանագրված քվեարկության արդյունքների հետ (4/20 ընտրատեղամաս):

11/22 ընտրատեղամասում հանձնաժողովի կողմից քվեարկության ավարտից հետո քվեարկության արդյունքների հաշվարկի ժամանակ կազմվել է արձանագրություն, որի համաձայն արձանագրվել են հետևյալ արդյունքները. «ոչ»՝ 526 քվեաթերթիկ, «այո»՝ 126 քվեաթերթիկ: Արձանագրության օրինակը տրամադրվել է դիտորդներին և վստահված անձանց: Սակայն, արդյունքում հրապարակվել են ճիշտ

հակառակ արդյունքները: Մասնավորապես՝ նշվել է հետևյալ. «այո»՝ 526 քվեաթերթիկ, «ոչ»՝ 126 քվեաթերթիկ⁹⁵:

7/22 ընտրատեղամասում քվեատուփը բացելուց քիչ անց հանձնաժողովի անդամներից մեկի ինքնազգացողությունը վատացել է և խառնաշփոթ է ստեղծվել, որից հետո հանձնաժողովի նախագահի ձեռքում հայտնվել է մի խուրց ծրար, որոնք, ըստ նախագահի, ընկել են քվեատուփի միջից: Այնուհետև հաշվարկի ընթացքում պարզվել, որ խրցում եղած բոլոր քվեաթերթիկներում «Այո» է քվեարկված եղել⁹⁶:

Թիվ 4/20 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահն արդյունքների ամփոփման ընթացքում կրկնակի արձանագրություն է կազմել և երկրորդ արձանագրությունում 161 «Այո»-ի փոխարեն գրանցվել է 977 «Այո», ինչին ՀԱԿ ներկայացուցիչն առարկել է և փորձել է թույլ չտալ, որ նշված արձանագրությամբ պարկը տեղամասից դուրս հանեն: Հանձնաժողովի նախագահը ՀԱԿ ներկայացուցչին տեղեկացրել է, որ իրեն սպառնացել են, և ինքն այլ ելք չունի: Ակնհայտ կեղծ արձանագրություն կազմելով՝ նախագահը վերցրել է արկղը ու հեռացել ընտրատեղամասից: Երբ ՀԱԿ-ի ներկայացուցիչը և լրագրողը փորձել են թույլ չտալ արկղը տեղամասից դուրս հանել, ոստիկանները միջամտել են և տարածքից հեռացրել են վերջիններին:

«Վերցրեց արձանագրության մյուս թղթերն ու սկսեց վրան այլ թվեր գրել՝ 997 «այո» և 122 «ոչ»: Հետո կանչում ա ինձ, որ ստորագրեմ: Ասում եմ, հո դու հիմար չես, էս ի՞նչ թվեր ես գրել, ասում ա՝ ես ոնց մտածում եմ, տենց էլ գրում եմ, բա կարողա՞ք պատճառով գնամ նստեմ կամ ընտանիքիս վնաս տան:»՝ նշել է ՀԱԿ ներկայացուցիչը⁹⁷:

Հարկ է նշել, որ ընտրատեղամասային գրանցամատյանի քվեարկության արդյունքների ամփոփման բաժնում նշված է եղել 291 «Այո» և 504՝ Ոչ: Նաև հետաքրքրական է այն հանգամանքը, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրամադրված տվյալների համաձայն հանձնաժողովի նախագահ Նիկոլայ Հովհաննիսյանը ներկայացրել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, մինչդեռ տեղամասային գրանցամատյանում նշված է, որ վերջինս ՀՀԿ ներկայացուցիչ է:

Հանձնաժողովի նախագահի դեմ հարուցվել է քրեական գործ, որը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ըստ datalex.am դատական տեղեկատվական կայքի հրապարակված տվյալների՝ վերջինիս քրեական գործը հարուցվել է ՀՀ քր օրենսգրքի 150 հոդվածի հիմքով, և անձին «մեղադրանք է

⁹⁵ 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ԱՄՓՈՓԻՉ ՁԵԿՈՒՅՑ. Երևան 2016, էջ 41

⁹⁶ ՁԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 19

⁹⁷ Հանձնաժողովի անդամը ԿԸՀ-ից գումար դեռ չի ստացել. նա պնդում է՝ տեղամասում կեղծել են հանրաքվեի արդյունքները: [epress.am](http://www.epress.am): Հրապարակված է՝ 01.13.2016 / 12:28
<http://www.epress.am/2016/01/13/%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B6%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B4%D5%A8-%D5%AF%D5%A8%D5%B0%D6%8A%D5%AB%D6%81-%D5%A3%D5%B8%D6%82%D5%B4%D5%A1%D6%80-%D5%A4%D5%A5.html>

առաջադրվել այն բանի համար, որ նա ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ընթացքում հանդիսանալով հանրաքվեի թիվ 4/20 տեղամասային հանձնաժողովի նախագահ, 06.12.2015թ. քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված ընտրական փաստաթղթերում և արձանագրություններում ակնհայտ սխալ տվյալներ հաստատելու, ինչպես նաև այլ եղանակով կեղծել է քվեարկության արդյունքները»:

Ընթացակարգային խախտումներ

Քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում արձանագրվել են նաև ընթացակարգային խախտումներ: Մասնավորապես, գրանցվել են ընթացակարգային խախտման հետևյալ դրսևորումները՝

- մի շարք տեղամասերում հանձնաժողովի ներկայացուցիչները հաշվարկի ընթացքում ընդմիջում են հայտարարել անորոշ ժամանակով,
- հաշվարկը Բարձրաձայն չի կատարվել,
- ընտրատեղամասի հոսանքազրկումից հետո՝ առանց լուսավորության, շարունակվել է ձայների հաշվարկը,
- հանձնաժողովի նախագահը կամ անդամները հաշվարկի ընթացքում դուրս են եկել ընտրատեղամասից, ապա վերադարձել,
- ամփոփաթերթում լրացումները կատարվել են մատիտով,
- քվեատուփից միաժամանակ մի քանի քվեաթերթիկ է հանվել,
- քվեատուփի ողջ պարունակությունը լցվել է գետնին հաշվարկ կատարելու նպատակով,
- քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում տեղամասում են գտնվել անհայտ անձինք,
- իրականացվել է ձայների անհիմն վերահաշվարկ:

1/17 ընտրատեղամասում արդյունքների ամփոփման ընթացքում՝ ժամը 22:13-ին, հաշվարկի կեսից հանձնաժողովը որոշել է ընդմիջում անել՝ անտեսելով դիտորդի զգուշացումը այն մասին, որ հաշվարկը կիսատ թողնելն արգելված⁹⁸:

7/4 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամները պարբերաբար ներս ու դուրս են արել քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ, ինչպես նաև քվեաթերթիկները քվեատուփից հանել են մի քանի հատով⁹⁹:

5/10 ընտրատեղամասում քվեարկության հաշվարկի ժամանակ «Այո»-ի քվեաթերթիկները չեն հաշվել, նշելով, որ միայն «Ոչ»-ի ձայները կհաշվեն և մասնակիցների թվից հանելով, կստանան «այո»-ի քանակը:

⁹⁸ Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները

<http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.md1GOV24.dpu>

⁹⁹ ԶԵԿՈՒՅՑ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ 06-ը դեկտեմբերի, 2015 թ., Երևան, էջ 9

Բաժին 2 . Ընտրական հանձնաժողովների արձագանքը հանրաքվեի ժամանակ տեղի ունեցած խախտումներին

Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ձեռք բերված և ընտրախախտումների վերաբերյալ փաստացի առկա տեղեկությունների համադրում

Ընտրական հանձնաժողովների և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից խախտումների արձանագրման, կանխարգելման և վերացման նպատակով հավաքագրվել և համադրվել է նույն հարցի վերաբերյալ տարբեր տեղեկություններ:

Մասնավորապես՝

1. *Արդյո՞ք ընտրատարածքային հանձնաժողովները կամ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովները արձագանքել են կատարված խախտումներին,
1.1. Եթե այո, ապա ինչ գործողություններ են իրականացվել խախտումների վերացման ուղղությամբ:*
2. *Արդյո՞ք նշված ընտրատեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարվել են գրառումներ ներկայացվող յուրաքանչյուր խախտման մասին:
2.1. Եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել գրանցամատյանների համապատասխան էջերի պատճենները, կամ ապահովել դրանց լիարժեք ծանոթացման հնարավորությունը:*

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2016թ. ապրիլի 11-ի գրությամբ (տե՛ս Հավելված 5-ը) հայտնել է, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները գործել են «Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան», և մասնավորապես ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի և 6-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներին համապատասխան, այն է՝ ինչպիսի պահանջներ են ներկայացնում դիմումներին և բողոքներին, ինչ կարգով պետք է ընտրական հանձնաժողովներում քննարկվեն այդ դիմումներն ու բողոքները: ԿԸՀ-ն հղում է կատարել նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասին, որի համաձայն՝ «Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում»: Հանձնաժողովը հայտնել է նաև, որ իր 2015թ. դեկտեմբերի 13-ի թիվ 99-Ա որոշման մեջ նա «անդրադարձել է հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում կատարված գրառումներին, ըստ որի 1997 տեղամասային հանձնաժողովներից միայն թվով 93 տեղամասային հանձնաժողովներում են ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով կատարվել գրառումներ»:

«... հանրաքվեի թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 14, 24, 27, 29, 30, 32, 34, 35, 36 ընտրատարածքային հանձնաժողովների համապատասխան որոշումներում նշված են այն տեղամասերը, որոնց վերաբերյալ տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում առկա են քվեարկության օրը՝ ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտման վերաբերյալ գնահատականների կամ արձանագրված խախտումների երաբերյալ գրառումներ.

Ընտրատարածք	Տեղամաս	Որոշման համար և ընդունման ամսաթիվ
1	4, 5, 10, 12, 14, 15, 17, 26, 32, 33, 35	Թիվ 1 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 5-Ա որոշում
2	12, 17, 26, 29, 32, 36	Թիվ 2 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 3-Ա որոշում
3	4, 9, 12, 24, 28, 29	Թիվ 3 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 70-Ա որոշում
4	5, 6, 8, 14, 16, 26, 32	Թիվ 4 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 3-Ա որոշում
5	2, 16, 21	Թիվ 5 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 6-Ա որոշում
6	5, 8, 15, 19, 23, 34	Թիվ 6 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 12-Ա որոշում
7	1, 3	Թիվ 7 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 7-Ա որոշում
8	3, 8, 25, 27, 28, 31, 35	Թիվ 8 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 2-Ա որոշում
9	1, 9, 12, 15, 17, 18, 22, 24, 27	Թիվ 9 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 3-Ա որոշում
10	8, 13, 14, 15, 20, 23, 31	Թիվ 10 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 4-Ա որոշում
11	8, 21	Թիվ 11 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 5-Ա որոշում
12	9, 11, 25	Թիվ 12 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 3-Ա որոշում
14	14	Թիվ 14 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 56-Ա որոշում
24	3	Թիվ 24 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 12-Ա որոշում
27	28	Թիվ 27 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 20-Ա որոշում
29	11, 25	Թիվ 29 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 26-Ա որոշում
30	5, 14, 15, 16, 21, 28, 30, 31, 33, 34, 35	Թիվ 30 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 15-Ա որոշում
32	49	Թիվ 32 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 24-Ա որոշում
34	18, 27, 30, 38	Թիվ 34 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 33-Ա որոշում
35	1	Թիվ 35 ՀՀՀ 11 . 12. 2015թ. 17-Ա որոշում

36	35, 36	Թիվ 36 ՀՀ 11.12.2015թ. 93-Ս որոշում
----	--------	-------------------------------------

Հանձնաժողովը տեղեկացրել է նաև, որ թիվ 13, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 23, 25, 26, 28, 31, 33, 37, 38, 39, 40, 41 ընտրատարածքային հանձնաժողովների կողմից ներկայացված արձանագրություններով փաստել է 06.12.2016թ. հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում գրառումներ չեն կատարվել:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ կետը հանձնաժողովի անդամներին տալիս է լիազորությունների լայն շրջանակ, և թույլ է տալիս վերջիններին որոշել լրանցել խախտումը, թե ոչ, գտնում ենք որ օրենքի այս դրույթը ենթակա է փոփոխության: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, հանձնաժողովի անդամները հիմնականում խուսափել են գրանցել ընտրախախտումները՝ դրա մասշտաբայնությունը և տարածվածությունը չարձանագրելու նպատակով:

Այս մասին է վկայում այն հանգամանքը, որ դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների կողմից արձանագրված և ընտրական մատյաններում գրանցված խախտումների հարաբերակցությունը տարբերություն է առաջացնում: Ըստ դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների արձանագրած խախտումների՝ յուրաքանչյուր երրորդ տեղամասում քվեարկության ընթացքում և քվեների հաշվարկի ժամանակ առնվազն մեկ խախտում է արձանագրվել:

Այս տեղեկությունները դուրս են բերվել տեղամասերի ընտրական մատյանների ուսումնասիրության արդյունքում:

Կազմակերպության դիմում խնդրանքով կազմակերպության աշխատակիցներն այցելել են ՀՀ Ազգային արխիվ և տեղում ծանոթացել են այն տեղամասերի գրանցամատյաններին, որոնց վերաբերյալ դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի կողմից խախտում է արձանագրվել: Գրանցամատյանների գրառումները վկայել են, որ արձանագրված ոչ բոլոր խախտումներն են գրանցվել մատյաններում, ավելին՝ առանձին տեղամասերի գրանցամատյաններում այլ՝ նոր խախտումներ են հայտնաբերվել:

Քաղաքացի դիտորդ նախաձեռնության դիտորդների կողմից արձանագրված խախտումների փաստերի առնչությամբ ընդհանուր առմամբ ներկայացվել է 202 դիմում-բողոք, որոնցից 69՝ ԸՀ-ներ, 164՝ ԿԸՀ: Թվով 50 դիմում ներկայացվել է ինչպես ԸՀ, այդպես էլ՝ ՀԿՀ:

Հանրաքվեի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 7-ին կազմվել է դիտորդների և ԶԼՍ ներկայացուցիչների իրավունքների մոտ 40 լրջագույն խախտումների մասին հաղորդող դիմում-բողոք՝ դրանք ներկայացնելով նախ ՀԿՀ (հաշվի առնելով այն որ ՀՀ-ները աշխարհագրական առումով բողոքների ներկայացման համար սահմանված սեղմ ժամկետների պայմաններում անհասանելի էին), իսկ այդ դիմում-բողոքների պատճենները փոստային ծառայության միջոցով ուղարկելով նաև ՀՀ-ներ:

2015 թվականի դեկտեմբերի 8-11 ընկած ժամանակահատվածում կազմվել և նույն մարմիններին է ներկայացվել ևս 64 դիմում-բողոք:

2015 թվականի դեկտեմբերի 11-ին «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը ՀԿՀ է ներկայացրել մեկ ծավալուն հաղորդում, որտեղ նկարագրվել է հանրաքվեի օրը մոտ 100 տեղամասերում տեղի ունեցած շուրջ 170 օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումներ:

2015թ. դեկտեմբերի 11-ին ՀԿՀ ներկայացվել է 44 էջից կազմված դիմում-բողոք՝ հանրաքվեի 150-ից ավելի տեղամասերում «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների՝ դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների կողմից արձանագրված ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ:

ՀԿՀ-ն մերժել է դիմում-բողոքները և հրաժարվել է վարույթ հարուցել դրանցում նկարագրված փաստերի հիման վրա

Բաժին 3 . Հանրաքվեի քվեարկության ընթացքում խախտումների արձանագրման միտումները

Խախտումների արձանագրման միտումները

Ուսումնասիրության արդյունքում գրանցված 1513 խախտումներից ընտրական հանձնաժողովների կողմից պաշտոնապես արձանագրվել է միայն 93-ը, ինչը կազմում է խախտումների ընդհանուր թվի ընդհամենը 6%: Ընդհանուր խախտումների վերաբերյալ հարուցվել է 79 քրեական գործ (ընդհանուր՝ 1513 խախտումների 5%), որից 2016 թվականի մայիսի 30-ի դրությամբ վերջնական դատական ակտ է կայացվել 40 գործի առնչությամբ (ընդհանուր խախտումների 2%):

Այսինքն՝ արձանագրված լայնածավալ խախտումների միայն 2% է, որ հանգեցրել է իրավական գնահատականի և քրեական պատասխանատվության, իսկ վարչական ընթացակարգով ընտրախախտումներն առհասարակ քննության առարկա չեն դարձել: Այս հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է, որ Սահմանադրական հանրաքվեի խախտումները ոչ թե ընթացակարգային կանոնների պատահական բացթողումներ են, այլ կազմակերպված, պլանավորված և իշխանությունների կողմից նպատակային ուղղորդում ստացած գործողությունների հետևանքներ:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 2015 թ. դեկտեմբերի 13-ի Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքներն ամփոփելու վերաբերյալ N 99-Ա որոշմամբ սահմանվել է, որ 1997 տեղամասային ընտրական հանձնաժողովներից միայն թվով 93 տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգի համաձայն կատարվել գրառումներ, իսկ 1904 տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ: Այսինքն՝ գրառումներ են կատարվել տեղամասային ընտրական հանձնաժողովների **գրանցամատյանների ընդհանուր թվի** միայն մոտ 5%-ում, մինչդեռ ըստ արձանագրված ընտրախախտումների քանակի՝ առնվազն 1300 ընտրատեղամասի գրանցամատյաններում պետք է գրանցումներ կատարվեին՝ հաշվի առնելով ընդհանուր ընտրախախտումների քանակը և բացառելով նույն տեղամասում մի քանի տարբեր ընտրախախտումները: Հատկանշական է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ դիտորդները կամ խախտումը հայտնաբերող այլ անձ պահանջ է ներկայացրել արձանագրել խախտումը 49 ընտրատեղամասային հանձնաժողով մերժել է հայտնաբերված խախտման արձանագրումը:

Ընտրատեղամասային հանձնաժողովների կողմից խախտումների արձանագրումը մերժելու միտումները և տարածվածությունն ապացուցվում է նաև գրանցամատյանների ուսումնասիրության արդյունքներով: Գրանցամատյանների ուսումնասիրության արդյունքները

ցույց են տվել, որ գրեթե բոլոր ընտրատեղամասերում, որտեղ դիտորդները խախտում են հայտնաբերել, գրանցումներ իրականացված չեն:

Գրանցամատյանների ուսումնասիրության արդյունքում արձանագրված խախտման դրսևորումները (արխիվացված գրանցամատյանների տվյալներ)

Հետազոտության շրջանակներում դիտարկվել են միջադեպերի քանակով կամ կրկնությամբ նույնականացված (այն բոլոր տեղամասերը, որոնց վերաբերյալ քվերակության օրը դիտորդների, լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից խախտումներ են արձանագրվել) տեղամասային գրանցամատյաններ, որոնցում արձանագրվել են խախտման բազմաթիվ դրսևորումներ:

1/8 ընտրատեղամաս

Վիճակահանության արդյունքում որոշվել է որ, օրինակ՝ Լալա Նազարյանը պետք է ժամը 08:00-ից մինչև 10:00-ն, այնուհետև 10:00-ից մինչև 12:00-ը լինի հերթապահ՝ քվերակողի գրանցումն իրաձանացնող *Ցուցակ 1-ի* մոտ: Գրանցամատյանում արձանագրված խախտումների կամ միջադեպերի վերաբերյալ որևէ գրառում չի կատարվել: Մինչդեռ, տվյալ ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Առնակ Մանուչարյանը աչքի է ընկել իր ագրեսիվ վարքագծով, հարձակվել է դիտորդի վրա, խոչընդոտել է վերջինիս աշխատանքը, սպառնալիքներ հնչեցրել դիտորդի հասցեին: Դիտորդի հասցեին սպառնալիքներ են հնչեցվել նաև ձայների հաշվարկման ընթացքում: Առնակ Մանուչարյանը նշել է, որ դիտորդներին և լրագրողներին ոչինչ անել թույլ չի տա:

Հետազոտության շրջանակներում 1/8 ընտրատեղամասում արձանագրվել է խախտման 9 դեպք: Գրանցվել են այլ անձի փոխարեն քվերակության, ընտրության համար անհրաժեշտ պարագաների պահպանման և օգտագործման կանոնների խախտման, ուղղորդման և կուտակման դեպքեր: Այս դեպքերը չեն արձանագրվել:

1/32 ընտրատեղամաս

ՀԱԿ վստահված անձ Էռնեստ Հովակիմի Նազարյանը ժամը 12:20-ի սահմաններում նկատել է, որ մի երիտասարդ ընտրող քվեատուփի սեղանին դրել չորս ծրար, փորձել է հանձնաժողովի նախագահին տեղեկացնել, բարձրաձայնել այդ մասին, բայց մինչ արձագանքելն ընտրողը հասցրել է կնքել տալ ծրարները և գցել քվեատուփը: ՀԱԿ վստաված անձը գրառում է կատարել խախտման վերաբերյալ, սակայն գրառման տակ տեղամասի հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և հանձնաժողովի չորս անդամները, որոնց թվում են եղել ՀՅԴ և ՕԵԿ ներկայացուցիչները, նշել են, որ տվյալ գրառումը «իրականությանը» չի համապատասխանում:

Գրանցամատյանի առաջին արձանագրությունում ստորագրել է 6 անձ, երկրորդում՝ 8, մինչդեռ կազմը հաստատվել է 6 անձի մասնակցությամբ:

Վիճակահանությամբ սահմանվող հերթափոխը տեղամասում չի գործել: Մասնավորապես՝ հանձնաժողովի անդամ Աննա Հարությունյանը *Ցուցակ 2-ի* մոտ աշխատել է 8 ժամ առանց հերթափոխի, մնացած չորս ժամը ցուցակի մոտ եղել է Վարդուշ Հովհաննիսյանը:

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվել է մատիտով, այնուհետև նշված թվերից մի քանիսը փոփոխվել են արդեն գրիչով:

Համաձայն ՁԼՄ հրապարակումներում առկա տեղեկատվության և տեղական դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների զեկույցների տվյալ ընտրատեղամասում արձանագրվել է խախտման 4 դեպք:

2/ 32 ընտրատեղամաս

Կազմվել է մեկ արձանագրություն՝ ժամը 18:00-ից հետո երեք քաղաքացի (15 շենքի 114-ի բանկիչները) ներկայացել են տեղամաս հանրաքվեին մասնակցելու համար: Սակայն պարզվել է, որ երեքի փոխարեն ստորագրված է եղել : Խախտման այս դեպքին անդրադարձել են նաև ՁԼՄ-ները:

Արդյունքների ամփոփման արձանագրությունը թերի է կազմված եղել, որոշ սունյակներում նշումները բացակայել են:

2/36 ընտրատեղամաս

Վիճակահանության արդյունքում որոշվել է, որ Լիլիթ Գևորգյանը 12:00-ից մինչև 14:00 և 14:00-ից մինչև 16:00-ը եղել է հերթապահ քվեարկողի գրանցումն իրաձանացնող *Ցուցակ 1-ի* մոտ:

Քվեարկության ընթացքում քվեաթերթիկների և քվեարկության ծրարներ հատկացնելու և օգտագործված քվեաթերթիկների ելունդները հանձնելու մասին բաժնում քվեաթերթիկների մոտ համարներ են նշված, որոնց նպատակն ու նշանակությունը պարզ չէ: Մասնավորապես՝

1. 0133800 ստացված քվեաթերթիկների թիվը 100
2. 0133701/100

Տվյալ բաժնում օգտագործված քվեաթերթիկների թիվը հաճախ գրանցված չի եղել: Վերջին երկու սյունակներում էլ նշվել է, որ ստացվել է հարյուրական քվեաթերթիկ, սակայն յուրաքանչյուրից օգտագործվել է երեսունը:

Տեղամասում որևէ լրագրող կամ դիտորդ գրանցված չի եղել, եղել է մեկ անձ ԿԸՀ-ից որը մտել է ընտրատեղամաս 12:53 դուրս է եկել 13:00-ին:

Գրանցամատյանի 30-րդ էջում կատարված գրառումներն ամբողջությամբ շտրիխով ջնջված են:

Տվյալ ընտրատեղամասում արձանագրվել են 5,8,9 թվով սկսվող անձնագրեր, ընտրողների դիմաց տողերը եղել են սխալ կամ թերի լրացված: Դիտորդի կողմից արձանագրվել նաև լցուման դեպք: Սակայն գրանցամատյանում վերոնշյալ խախտումների վերաբերյալ որևէ գրառում չի կատարվել:

3/06 ընտրատեղամաս

Տեղամասային հանձնաժողովի կազմը բաղկացած է եղել 8 անձից, մինդեռ արձանագրություններում ստորագրել են 7-ը:

Խախտումների համար նախատեսված սյունակներում որևէ գրառում չի կատարվել: Մինչդեռ համացանցում հրապարակվել է մի տեսանյութ, որտեղ երևում է, թե ինչպես է հանձնաժողովի անդամը դարակի միջից գաղտնի ծանոթանում ինչ որ տվյալների հետ, այնուհետև քվեարկում քաղաքացիների փոխարեն, ստորագրում, կնքում ու հետո սեղանի տակ նշում անում իր ցուցակում:

4/01 ընտրատեղամաս

Խախտումների կամ միջադեպերի վերաբերյալ որևէ գրառում չի կատարվել այն դեպքում, երբ այս տեղամասում դիտորդների ու լրագրողների կողմից մի շարք խախտումներ են արձանագրվել: Այս տեղամասում ՀՀԿ և ՕԵԿ վստահված անձինք բռնություն են կիրառել դիտորդի նկատմամբ, ինչի ընթացքում վնասվածք է ստացել նաև հանձնաժողովի նախագահը: Մեկ այլ դիտորդի բերման են ենթարկել ոստիկանները, քանի որ ըստ հանձնաժողովի նախագահի և այլ ներակայացուցիչների վերջինս խոչընդոտել է հանձնաժողովի աշխատանքները:

Գրանցամատյանում նշված է, որ հանձնաժողովի նախագահը Հայաստանի հանրապետական կուսակցության ներկայացուցիչ է: Սակայն, համաձայն elections.am կայքի կողմից տրամադրված տեղեկատվության վերջինս Բարգավաճ Հայաստան կուսակցության ներկայացուցիչ է:

Քվեարկության ընթացքում քվեաթերթիկների և քվեարկության ծրարներ հատկացնելու և օգտագործված քվեաթերթիկների ելունդները հանձնելու մասին բաժնում առկա էին մի քանի ջնջված և ուղղված թվեր:

4/05 ընտրատեղամաս

Հանձնաժողովի անդամ ԸԸՀ ներկայացուցիչ Դավիթ Լևոնի Վարդանյանի լիազորությունները վաղաժամետ դադարեցվել են 03/12/15-ին: ԸԸՀ-ից էղգար Շիրինյանը փոխարինել է վերջինիս:

Վիճակահանությամբ սահմանված հերթափոխը չի պահպանվել. հերթապահության ցուցակում նույն անձը նույն գործառույթն իրականացրել է չորս ժամ անընդմեջ: Գրանցամատյանում մի քանի սյունակներում առկա են եղել ջնջումներ: Քվեաթերթիկների մասին գրառումների մեջ եղել են համարակալումներ: 12-րդ էջում հանձնաժողովի նախագահի ստորագրության փոխարեն թվեր են օգտագործված քվեաթերթիկների կողքին: Մասնավորապես՝

1. 0214001 - 02104100 - ստորագրություն - 0213101 – 0213126

2. 0212101 - 0212300 - ստորագրություն - 0214002 - 0240050

Քվեարկության մասնակցած քաղաքացիների թվի վերաբերյալ գրառումները կատարվել են մատիտով, այնուհետև գրիչով: Մատիտով գրված է եղել այլ թիվ, այնուհետև գրիչով ուղղվել: Նույնականացման քարտերով ընտրության մասնակցած քաղաքացիների թվի վերաբերյալ տեղեկատվությունը ևս կատարվել է մատիտով:

«Ոչ» և «Անվավեր» քվեարկված քվեաթերթիկների վերաբերյալ տեղեկատվությունը շտրիխով ջնջվել է(թվերը շտրիխով ջնջված են եղել):

ՀԱԿ խմբակցության անդամը գրել է խախտումների գրառումների էջում, որ ունի հատուկ կարծիք, սակայն չի գրել ինչի վերաբերյալ է հատուկ կարծիքը:

Այս ընտրատեղամասում վիճաբանություն է տեղի ունեցել հանձնաժողովի նախագահի և վստահված անձանցից մեկի միջև, ինչից հետո վերահաշվարկ կատարելու որոշում է կայացվել: Միջադեպից առաջ «այո»-ի ձայների քանակը կազմել է 205, իսկ «ոչ»-ինը՝ 609, իսկ վերահաշվարկից հետո «ոչ»-ինը՝ 300, «այո»-ինը՝ 500: Հանրաքվեի ընթացքում ընտրատեղամասի նախագահը խոչընդոտել է դիտորդի աշխատանքը, երբ վերջինս փորձել է տեսանկարահանել կրկնաքվեարկության դեպքը:

4/12 ընտրատեղամաս

Վիճակահանությամբ սահմանված հերթափոխը չի կատարվել: Ժամը 12:00-ից մինչև 20:00-ն Աստղիկ Կարապետյանն եղել է *Ցուցակ 1-ինի* մոտ: Հերթափոխի սույնակների նշումները թերի են կատարված եղել, քանի որ միայն անուններն են նշված եղել, ազգանունները չեն եղել: Մինչդեռ, անդամների մեջ եղել են նաև նույն անունն ունեցող մի քանի անձինք: Մասնավորապես՝ Անահիտ Մարտինի Մուրադյան և Անահիտ Գրիգորի Հովհաննիսյան:

Քվեարկության ընթացքում քվեաթերթիկների և քվեարկության ծրարներ հատկացնելու և օգտագործված քվեաթերթիկների ելունդները հանձնելու մասին բաժնի վերջին տողի սյունակում գրված է եղել «43+137», մինչդեռ, յուրաքանչյուր սյունակում պետք է գրված լինի միայն մեկ թվային պատկեր:

Քվեարկության օրը ժամը 17:00 դրությամբ գրանցված ընտրողների թիվը փոփոխված է եղել. ի սկզբանե եղել է 132 փոփոխել են դարձել է 750:

Նույնը կատարվել է նաև ժամը 20:00-ի դրությամբ քվեարկության արդյունքների սյունակում. եղել է 200 փոփոխել են, դարձրել 980 (վերջին թիվն անընթեռնելի է եղել): Հատկանշական է, որ տվյալ ընտրատեղամասում ձայների հաշվարկի ընթացքում հանձնաժողովի երկու անդամներն իրենց վատ են զգացել, շտապ օգնության կանչ է գրանցվել, ինչի արդյունքում հաշվարկը դադարեցվել է: Միջադեպից անմիջապես հետո **Ժառանգության ներկայացուցիչ հաղորդում է ներկայացրել լցուման վերաբերյալ, քանի որ մատյանում առկա է եղել 613 անուն, իսկ քվեատուփից հանվել է 1213 քվեաթերթիկ:**

Գրանցամատյանում խախտումների վերաբերյալ որևէ գրառում չի կատարվել:

7/01 ընտրատեղամաս

Վիճակահանությամբ սահմանված հերթափոխը չի պահպանվել: Նույն անձն քվեարկության ընթացքում շարունակաբար հերթապահել է նույն տեղում:

Ստացվել է 1000 քվեարկության ծրար և քվեաթերթիկ, սակայն 100-ից մի դեպքում օգտագործվել է 98-ը, մեկ այլ դեպքում 100-ից՝ 95-ը, իսկ վերջին 100 ծրարներից և քվեաթերթիկներից օգտագործվել է 24-ը: Ընդհանուր առմամբ 1000 գրանցված ծրարներից և քվեաթերթիկներից օգտագործվել է 917-ը: Այս թիվն իր մեջ ներառում է նաև անվավեր ճանաչված և չօգտագործված քվեաթերթիկների հանրագումարը:

Խախտումների մասին բաժնում եղել են մի քանի գրառումներ: Մասնավորապես՝

- Հայաստանի Հելսինկյան կոմիտեի դիտորդը արձանագրել է, որ 12:12 բուպեին քաղաքացի Արթուր Ավետիսյանը ընտրությունը կատարելուց հետո մոտեցել է քվեատուփին, որը բաց է եղել, ինչի հետևանքով ընտրողի քվեաթերթիկը առանց կնքվելու գցվել է քվեատուփ: Այդ իսկ պատճառով վերջինիս ձայնը անվավեր է համարվել քվեատուփի բաց լինելու պատճառով:
- Չկնքված ծրար է գտնվել, որը որոշվել է կնքել և գցել քվեատուփի մեջ:
- Կրկնակի քվեարկության դեպք է արձանագրվել:

Տեղամասային հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում տեղամասային կենտրոնում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ գրառումների բաժնում (էջ 30) նշված է եղել, որ քվեարկության օրը ժամը 07:52-ից մինչև հաջորդ օրը ժամը 02:15-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետական կուսակցության 6 տարբեր ներկայացուցիչներ միմյանց փոխարինել են: Տեղամասի դիտորդներից մեկը նշել է, որ տվյալ տեղամասում ՀՀԿ երեք վստահված անձ է ներկա եղել, ինչին որևէ մեկը ուշադրություն չի դարձրել: Մեկ այլ դիտորդ արձանագրել է, որ քվեարկության եկած երկու քույրերի Հոիփսիմե և Գայանե Հովսեփյանների անունների դիմաց ստորագրված եղել, **ինչի վերաբերյալ հանձնաժողովը հրաժարվել է արձանագրություն կազմել:**

Համաձայն ԶԼՄ հրապարակումներում առկա տեղեկատվության և տեղական դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների զեկույցների տվյալ ընտրատեղամասում արձանագրվել է խախտման 7 դեպք: Խախտման 7 դեպքերից գրանցամատյանում արձանագրվել է միայն մեկը՝ Արթուր Ավետիսյանի կողմից ծրարն առանց կնքվելու քվեատուփը գցելու դեպքը:

7/02 ընտրատեղամաս

Քվեարկության ընթացքում քվեաթերթիկների և քվեարկության ծրարներ հատկացնելու և օգտագործված քվեաթերթիկների ելունդները հանձնելու մասին բաժնում օգտագործված քվեաթերթիկների թիվը նշված է 900, մինչդեռ ընդհանուր առմամբ օգտագործվել է 765-ը:

Խախտումների համար նախատեսված բաժնի սուսյակներում առկա է 11 գրառում, Տվյալ ընտրատեղամասում արձանագրվել են կրկնաքվեարկության մի քանի դեպքեր: Ինչպես նաև

ընտրատեղամասի հոսանքագրկումից հետո, դիտորդի պնդմամբ փոփոխվել են նաև քվեարկության արդյունքները:

Սակայն այս խախտումների վերաբերյալ նշումներ չկան:

7/10 ընտրատեղամաս

Քվեարկության մասնակիցների թիվը քվեարկության արդյունքների թվի հետ չի հաստատասխանում մասնակիցների թիվը 3-ով ավել է և այդ մասին որևէ բացատրություններ կայացված չէ:

Խախտումների վերաբերյալ որևէ գրառում չի կատարվել, մինչդեռ ՁԼՄ-ների և դիտորդների կողմից տվյալ ընտրատեղամասում արձանագրվել են կրկնաքվեարկության և բազմակի քվեարկության մի քանի դեպքեր, ինչպես նաև դիտորդներից մեկը նշել է, որ ժամը 19:00-ից հետո հանձնաժողովի անդամը քարտուղարի հետ ստորագրել են չներկայացած քաղաքացիների փոխարեն՝ քարտուղարի մոտ փոքրիկ թղթի վրա եղած ցանկին համապատասխան:

7/15 ընտրատեղամաս

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քվեարկության մասնակցին օգնող անձի տվյալների մասին բաժնում գրանցվել է 58 քաղաքացու անուն: Այսինքն՝ 58 ընտրող ինքնուրույն չի մասնակցել քվեարկությանը:

Վիճակահանությամբ սահմանված հերթափոխը ևս չի պահպանվել:

Այս գրանցամատյանում ևս խախտումների վերաբերյալ գրառում չի կատարվել:

Սա այն դեպքում, երբ տվյալ տեղամասում իրավիճակը քվեարկության ողջ ընթացքում լարված է եղել՝ միննույն անձը քվեարկել է երկու անգամ, ոչ ոք չի կարողացել վերահսկել իրավիճակը: Ընտրատեղամաս են ուղեկցել ռուսական անձնագրերով անձանց, ովքեր ունեցել են հայկական անձնագրերի պատճենները և հնարավորություն են ստացել մասնակցելու քվեարկությանը:

7/24 ընտրատեղամաս

Խախտումների վերաբերյալ որևէ գրառում չի կատարվել, մինչդեռ ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են մի քանի խախտումներ: Մասնավորապես՝ տվյալ տեղամասում արձանագրվել են այլ անձի փոխարեն քվեարկության, դիտորդի գործունեության խոչընդոտման և վերջինիս նկատմամբ բռնության կիրառման, ինչպես նաև քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում իրականացված ապօրինությունների այլ դեպքեր:

8/25 ընտրատեղամաս

Այս տեղամասում, համաձայն գրանցամատյանի գրառումների, արձանագրվել է 4 խախտում, որոնցից 1-ը՝ ուղղորդում, 2-ը՝ այլ անձի փոխարեն քվեարկություն, մի խախտման վերաբերյալ գրառումն անընթեռնելի է եղել: Քվեարկության ընթացքում քվեաթերթիկների և

քվեարկության ծրարներ հատկացնելու և օգտագործված քվեաթերթիկների ելուստները հանձնելու մասին բաժնի սյունյակներում նշումները սխալ են կատարված, քանի որ պարզ չէ, թե քանի քվեաթերթիկ չի օգտագործվել:

Տվյալ ընտրատեղամասում ՁԼՄ-ների և դիտորդների կողմից արձանագրվել է խախտման 11 դեպք, որից միայն 6 կրկնակի քվեարկությամբ պայմանավորված խախտումներ են: Տվյալ ընտրատեղամասում դիտորդն արձանագրել է, որ քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղամասում են եղել մի քանի վստահված անձիք նույն կուսակցությունից (ՀՀԿ, 4-6 հոգի): Ինչպես նաև, դիտորդի պնդմամբ, այս տեղամասում քվեաթերթիկի արդյունքների հաշվարկը ևս թերի կամ սխալ է կատարվել՝ բարձրաձայն չեն հայտարարվել քվեաթերթիկների նշումները՝ առնվազն 30 «ոչ» քվեարկված քվեաթերթիկ որպես «այո» է հաշվարկվել: «Այո»-ի դեպքում միշտ վավեր են հաշվարկվել նույնիսկ ակնհայտ անվավեր նշումներով քվեաթերթիկները, «ոչ»-ի դեպքում դրանք համարվել են անվավեր:

10/15 ընտրատեղամաս

Գրանցամատյանի վրա լրացված չի եղել ընտրատեղամասի գտնվելու վայրը:

Լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին գրանցամատյանում կատարվել է 4 գրառում՝

- Նախագահ ԲՀԿ ներկայացուցիչ Եղիշյանի (23.11.15) լիազորությունները դադարեցվել են: Ղազարյան Դավիթը դարձել է նախագահ:
- Անդամ, ԸԸՀ, Ղազարյան Սեդա (23.11.15): Ղազարյան Սեդայի անունը նորից է հայտնվել, և գրվել է արդեն որպես ՀՅԴ ներկայացուցից:
- ՀՅԴ, Մուշեղյան Անի (04.12.15): Վերջինս պարտավորություններին ծանոթանալու մասին համապատասխան սյունակում գրառում չի կատարել:
- ՀԱԿ, Սարոյան Թաթուլ (04.12.15): Սարոյան Թաթուլի անունը գրանցամատյանում գրված չի եղել:

Գրանցամատյանում հանձնաժողովի անդամների վերաբերյալ տեղեկատվության սյունակներում առկա են եղել անվանումների կրկնություններ:

Օգտագործված քվեաթերթիկների և ծրարների թիվը չի լրացվել, նշված է եղել, որ ստացվել է 900 քվեաթերթիկ և ծրար, իսկ քվեարկել է 868 քաղաքացի:

Քվեարկության մասնակցած անձանց թվային տվյալները շտրիխով ուղղված են եղել:

ՁԼՄ-ների և դիտորդների գրանցման բաժնում գրված է եղել միայն Քրիստինե Սողոյանի անունը, սակայն նշված չէ, թե որ կազմակերպության անդամ է:


10/20 ընտրատեղամաս

Գրանցամատյանում արձանագրվել է 5 խախտում, որից 3-ը եղել է այլ անձի փոխարեն քվեարկությամբ պայմանավորված խախտում և լրագրողի նկատմամբ բռնության ու քվեարկության պարագաների օգտագործման խախտման մեկական դեպքեր:

Խախտումներ են արձանագրվել նաև գրանցամատյանների և ընտրական այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկությունների առնչությամբ: «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կողմից դիտարկված 475 տեղամասերի արձանագրությունների քաղվածքների ուսումնասիրության արդյունքում դրանցից մոտ 440-ում հայտնաբերվել են բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ տվյալների անճշտություններ:

Միջադեպերը կամ խախտումներն արձանագրողները/բացահայտողները

Խախտումների մեծամասնությունը հիմնականում արձանագրվել է դիտորդների կողմից: Ստորև ներկայացված գծապատկերում երևում է, թե հիմնականում ում կողմից են հայտնաբերվել խախտումները: Քանի որ եղել են դեպքեր, երբ նույն անձի կողմից հայտաբերվել և բարձրաձայնվել են մեկից ավելի խախտումներ, ապա հաշվարկն իրականացվել է խախտումների թվին համապատասխան:



Ինչպես տեսնում ենք գծապատկերում հանձնաժողովի անդամների կողմից արձանագրվել է ընդամենը 12 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների ընդհամենը 0,79%: Ոստիկանության կողմից արձանագրվել է խախտմանը մեկ դեպք. այն դեպքում, երբ խախտումը

վերագրվել է տեղամասի դիտորդին, ում ոստիկանները բերման են ենթարկել ընտրատեղամասից¹⁰⁰:

Ոստիկանության գործողությունները քվեարկության ընթացքում և արդյունքների ամփոփման ժամանակ

Համաձայն ընտրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:

Մինչդեռ, իրականացված ուսումնասիրության արդյունքներով ոստիկանների կողմից ընտրախախտումների կանխարգելման ընթացքում դրսևորվել է խիստ պասիվ վարքագիծ, ավելին՝ ոստիկաններն անգործություն են դրսևորել՝ նպաստելով ընտրախախտումների ամբողջ ծավալով իրացմանը: Ոստիկանները որևէ գործողություն չեն ձեռնարկել, որպեսզի կանխեն հանձնաժողովի ներկայացուցիչների կամ դիտորդների նկատմամբ կիրառված բռնությունները և հոգեբանական ճնշումները: Առանձին դեպքերում փորձել են «հանդարտեցնել» տեղամասերում ակնհայտ ագրեսիվ վարքագիծ դրսևորող հանձնաժողովի ներկայացուցիչներին և քաղաքացիներին: Ինչպես երևաց վերը ներկայացված օրինակներում, ոստիկանությունը որևէ գործողություն չի ձեռնարկել տեղամասում կամ դրանից դուրս գտնվող առանց համապատասխան փաստաթղթի քաղաքացիների ազատ ելմուտը տեղամաս կանխելու, որոնք ընդ որում, միջամտել են հանձնաժողովի աշխատանքներին, խոչընդոտել են առանձին ներկայացուցիչների կամ դիտորդների աշխատանքը: Մի շարք տեղամասերի ներսում և դրանցից դուրս արձանագրվել են 20-ից 40 քաղաքացիներից բաղկացած կուտակումներ, որոնք կրկին անուշադրության են մատնվել ոստիկանության կողմից: Հատկանշական է, որ առանձին դեպքերում, հանձնաժողովների նախագահների պահանջով, ոստիկանները բերման են ենթարկել տեղամասում դիտարկում իրականացնող դիտորդներին՝ պատճառաբանելով, թե վերջիններս խոչընդոտել են հանձնաժողովի աշխատանքները: Մինչդեռ, դիտորդներն, իրենց հերթին, բարձրաձայնել են տվյալ տեղամասերում իրականացված բազմաթիվ խախտումների մասին, ինչը ոստիկանների կողմից հաշվի չի առնվել:

¹⁰⁰ Վարդգես Գասպարին բերման է ենթարկվել ոստիկանություն: հրապարակված է 2015 թ. դեկտեմբերի 6ին ՀՀ ոստիկանության կողմից <https://www.youtube.com/watch?v=VMFMq6Jdfio>

Ոստիկանության կողմից ընտրախախտումների կանխարգելման վերաբերյալ հարցմանը ոստիկանությունը պատասխանել է հետևյալ կերպ:

«...ՀՀ ոստիկանության ստորաբաժանումները ՀՀ ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածով սահմանված կարգով ընտրատեղամասերում (այդ թվում՝ Ձեր կողմից հիշատակված) ապահովել են հասարակական կարգը, ընտրությունների անցկացման բնականոն աշխատանքը և ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: Ղեկավարվելով նշված հոդվածի պահանջներով՝ ոստիկանության ծառայողները առանձին դեպքերում օրենքով սահմանված կարգով իրականացրել են իրավախախտումների քննություն:

Ոստիկանության ծառայողների կողմից ձեռնարկված միջոցառումներն առանձին վերցված չեն ամրագրվել ձևավորվել կամ փաստաթղթավորվել ըստ կոնկրետ ընտրատեղամասերի»:

Բաժին 4 . Հանրաքվեի ժամանակ կատարված խախտումների արդյունքում հարուցված քրեական գործերը

Ընդհանուր տեղեկություններ գործերի քանակի վերաբերյալ

Հանրաքվեի քվեարկության ընթացքում(և ընդհանուր առմամբ ընտրական իրավունքի) խախտումների բնույթից և ծանրությունից կախված՝ դրանք որակվում են նաև որպես հանցագործություններ, որոնց համար նախատեսված է քրեական պատասխանատվություն: ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ գլխի (Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները) 149-154.6 հոդվածներով, արգելված են հետևյալ արարքները.

1. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը (հոդված 149),
2. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (հոդված 150),
3. Ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը (հոդված 151),
4. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (հոդված 152),
5. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը (հոդված 153)
6. Քվեարկության գաղտնիությունը խախտելը (հոդված 154)
7. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը (հոդված 154¹),
8. Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը (հոդված 154²),
9. Ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը, կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելը (հոդված 154³),
10. Ձենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը (հոդված 154⁴),
11. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը (հոդված 154⁵),
12. Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 154⁶):

«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում ընտրական գործընթացի հետ կապված քրեական գործերով նախաքննությունն իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունը:

Այդպիսի խախտումներ են դիտարկվում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149 հոդվածը՝ ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը և, ՀՀ Քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածը՝ ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը, 154¹ հոդվածը՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը, 154² հոդվածը՝ ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը:

Ընտրական գործընթացներին առնչվող մյուս հանցագործությունների համար նախաքննությունն ընդդատյա է ՀՀ քննչական կոմիտեին:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քվեարկության ընթացքում դրսևորված խախտումները քննվել են թե՛ ՀՀ Հատուկ քննչական ծառայության և թե՛ ՀՀ քննչական կոմիտեի կողմից: Կազմակերպության կողմից ուսումնասիրության իրականացման ընթացքում հարցումներ են իրականացվել ներկայացված հաղորդումների, հարուցված քրեական գործերի և դրանց առնչությամբ կայացված որոշումների վերաբերյալ քանակական տվյալներ ստանալու նպատակով: Այդ տեղեկատվությունը պարբերաբար թարմացվել է, և որպես վերջնական տեղեկատվություն հիմք են ընդունվել ՀՀ դատախազության կայքում տեղադրված պաշտոնական տվյալները, որին պատասխան գրությամբ հղում է կատարել նաև դատախազությունը: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2016թ. ապրիլի 2-ի դրությամբ ՀՀ դատախազության կողմից¹⁰¹ 06.12.2015թ. հանրաքվեի ժամանակ կատարված ընտրախախտումների ՀՀ դատախազությունում ուսումնասիրվել է ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացմանը խոչընդոտելու վերաբերյալ 597 տարբեր բնույթի տեղեկատվություն: Ստացված տեղեկությունների հիման վրա հարուցվել է 79 քրեական գործ, 47 քրեական գործ 51 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 53 քրեական գործով 56 անձինք ներգրավվել են որպես մեղադրյալ, 31 քրեական գործ կարճվել է, 2 քրեական գործի վարույթ կասեցվել է, նախաքննական և հետաքննական մարմինների կողմից 504 տեղեկությունների ստուգման արդյունքում քրեական գործի հարուցումը մերժվել է:¹⁰² 2016թվականի քիուլիսի 7-ի դրությամբ datalex.am կայքում դատարան ուղարկված 47 քրեական գործերից հասանելի են եղել 40-ը, որոնցից բոլորի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ:

Փաստացի, 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի ընթացքում իրավապահ մարմիններին հասանելի 597 ընտրախախտումներից 535-ը (կարճված և քրեական գործի

¹⁰¹ Տե՛ս ՀՀ դատախազության 02.04.2016թ. «43 քրեական գործ ուղարկվել է դատարան» հայտարարությունը հետևյալ հղումով. <http://prosecutor.am/am/news/6457/> :

¹⁰² Սույն թվերը ներկայացված են հաշվի առնելով 27.05.2016թ. դրությամբ ՀՀ դատախազության կողմից 27.05.2016թ. տեղադրված հայտարարությունը: Տե՛ս «Հարուցվել է 79 քրեական գործ» նյութը տեղադրված ՀՀ դատախազության կայքում հետևյալ խղումով <http://prosecutor.am/am/news/6499/>

հարուցումը մերժված գործերի ընդհանուր թիվը) (84%) քրեական պատասխանատվության առումով որևէ հետևանք չի առաջացրել:

06.12.2015թ. ընտրախախտումների հիմքով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից քննված գործերի թիվը						
Խախտումների մասին տեղեկությունների թիվը	Հարուցվել է քրեական գործ	Մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան	Ներգրավվել են որպես մեղադրյալ	Վարույ թը կասեցվել է	Մեղադրական դատավճիռ	Քրեական գործի հարուցումը մերժված և կարճված գործերի ընդհանուր թիվը
597	79	46 քրեական գործ 49 անձանց վերաբերյալ	51 անձ ¹⁰³	2	37 գործով 39 անձի վերաբերյալ	535

Վերոնշյալ 597 նյութերից 240 գործով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի կողմից¹⁰⁴:

Այնուամենայնիվ, հնարավոր չէ հստակ ասել, թե քանի հաղորդում է քննվել ՀՀ հատուկ քննչական ծառայությունում¹⁰⁵, քանի որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ներկայացված հաղորդումների և «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշումների վիճակագրություն չի վարում¹⁰⁶:

ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվել է 36 քրեական գործ, որոնցից 15 վարույթ կարճվել է, 2՝ կասեցվել, 3-ն ուղարկվել են ըստ քննության ենթակայության, 7-ը գտնվում են նախաքննության փուլում: Ինն անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ 9 գործ ուղարկվել է դատարան:

ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից քննված գործերի թվերը					
Քննվել է	Կարճվել է	Կասեցվել է	Ուղարկվել են ըստ քննության	Նախաքննության	մեղադրական եզրակացությամբ ուղարկվել

¹⁰³ 48 քր. գործով

¹⁰⁴ Տե՛ս ՀՀ քննչական կոմիտեի պատասխանը:

¹⁰⁵ Տե՛ս ՀՀ հատուկ քննչական ծառայության պատասխանը:

¹⁰⁶ Տե՛ս Հղում 104

			ենթակայության	փուլում	է դատարան
36	15	2	3	7	9

Միաժամանակ, ՁԼՄ-ների և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից ընտրախախտումների վերաբերյալ հրապարակված նյութերի ուսումնասիրության արդյունքներից երևում է, որ կատարված խախտումների թիվը գերազանցում է ՀՀ դատախազության կողմից քննված գործերի թիվը: Մասնավորապես, ՁԼՄ-ների, դիտորդների կողմից արձանագրված և հրապարակված ընտրախախտումների առնչությամբ արձանագրվել է ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 149)՝ 15 դեպք, լցոնում՝ 28 դեպք, քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում իրականացված ապօրինություններ՝ 27 դեպք, քվեարկության արդյունքները կեղծելու 20 դեպք (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 150)), ուղղորդման՝ 141 դեպք, ընտրակաշառք՝ 15 դեպք և այլն: Այսինքն՝ առկա են եղել առնվազն 926 որակյալ խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնք պետք է պատշաճ ուսումնասիրության ենթարկվեին և դրանց պետք է տրվեր համապատասխան իրավական գնահատական:

ՁԼՄ-ների և դիտորդների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 149, 150, 154 ¹ , 154 ² հոդվածներով արգելված արարքների վերաբերյալ հրապարկումներով արձանագրված թիվը					
Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը (հոդված 149)	Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (հոդված 150)		Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը (հոդված 154.2)		Ընդամենը
	Լցոնում	Քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում իրականացված ապօրինություններ	Ուղղորդում	Ընտրակաշառք	
15	28	79	141	15	278

ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ (16.03.2016թ. դրությամբ) ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումների վարույթներում նախապատրաստվել է 240 նյութ, որոնց հիման վրա հարուցվել է 51 քրեական գործ: 194 նյութ մերժվել է հանցագործության դեպքի և հանցակազմի բացակայության հիմքով, իսկ 3-ը կարճվել է գործուն գղջալու հիմքով, 7-ը՝ հանցագործության դեպքի և հանցակազմի բացակայության հիմքով: Եւս 8 գործ ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն: ՀՀ քննչական կոմիտեն 33 քրեական գործ (36 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատախազություն, այնուհետև՝ դատարան:

Հարկ է նշել, որ նախապատրաստված 240 նյութի քանակական տվյալները ներառված են դատախազության կողմից հրապարակված ընտրախախտումների քանակի մեջ՝ որպես հանրաքվեի ընթացքում տեղի ունեցած ընդհանուր որպես 597 ընտրախախտում:

ՀՀ քննչական կոմիտեում նախապատրաստված 240 նյութերից¹⁰⁷

Նախապատրաստվել են նյութեր	Մերժվել է հանցագործության դեպքի և հանցակազմի բացակայության հիմքով	Վարույթում առկա է	Հարուցվել է քր. գործ	Կարճվել է գործուն գղջալու հիմքով	Կարճվել է հանցագործության դեպքի և հանցակազմի բացակայության հիմքով:	Մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատախազին
240	194	46	51	3	7	46

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացվում է ուսումնասիրության արդյունքներով ՋԼՄ-ների կողմից արձանագրված խախտումների և դրանց հիման վրա առկա դատավճիռների հարաբերակցությունը:

Խախտման տեսակ	ՋԼՄ	Դատավճիռ
Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (հոդված 150)	20	3
Ընտրողի կամ քի ազատ իրականացմանը խոչընդոտելը (հոդված 154.2)	141	-
Այլ անձի փոխարեն, կամ կրկնակի քվեարկելը (հոդված 153)	187	-
Քվեարկության գախստնիությունը խախտելը (հոդված 154)	83	-
Դիտորդի նկատմամբ բռնություն գործադրելը (հոդվածներ 112-113 հոդվածներ)	272	-
Հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը, կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 154 ⁶)	38	-

Դատարան ուղարկված գործեր

¹⁰⁷ Կոմիտեն տեղեկացրել է նաև, որ այն դեպքերում, երբ գործերի նախաքննությամբ պարզվել է, որ մի քանի արարքները կատարվել է միևնույն անձի կողմից, հարուցվել է նոր քրեական գործ և առանձնացվել տվյալ քրեական գործից, որի հետևանքով հավանական է, որ քրեական գործերի թիվը և նախապատրաստվող նյութերի թիվը:

Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի խախտումների փաստերի վերաբերյալ հարուցված 46 քրեական գործ 49 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Սակայն, ինչպես արդեն նշվել էր, datalex.am կայքի միջոցով դատական գործերի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2016թ-ի մայիսի 27-ի դրությամբ ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններին մեղադրական եզրակացությամբ ուղարկված գործերից 40 քրեական գործի¹⁰⁸ առնչությամբ կայացվել է վերջնական դատական ակտ, այն է՝ մեղադրական դատավճիռ:

Նշված 40 գործերից 31 գործ հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 153 հոդվածի (մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը) հիմքով, 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի հիմքով (ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը), և ևս 4-ը գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 150 հոդվածի հիմքով (ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը):

Քրեական գործերի թիվը ՀՀ դատարաններում՝ ըստ հոդվածների			
Հոդված 149. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը	Հոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը	Հոդված 153. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը	Ընդամենը
5	4	31	40

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 2016թ.-ի ապրիլի 07-ի տեղեկատվության համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում ստացվել է 3 բողոք, որոնցից 1-ը մերժվել է, իսկ 2-ը գտնվում են դատարանի վարույթում: Մակայն այս տվյալները ամբողջական չեն, քանի որ հնարավոր չէ դուրս բերել հստակ թիվ 290-րդ հոդվածի հիմքով բողոքարկված գործերի քանակը: Նախ, datalex.am կայքում այդ գործերը չեն տեղադրվում, և, բացի այդ, դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների տրամադրած տեղեկատվությունը վերաբերել է երեք գործերի, որոնց մասին, սակայն, ՀՀ դատական դեպարտամենտից տվյալներ չեն ստացվել¹⁰⁹: Այդ երեք գործերով առաջին աստիճանի դատարանը մերժել է ներկայացված բողոքը, և այդ որոշումները բողոքարկել են ՀՀ վերաքննիչ դատարան:

¹⁰⁸ Թիվը տարբերվում է ՀՀ դատախազության կողմից հրապարակված թվից, քանի որ մեկ գործով մեղադրական դատավճիռը կայացվել է 04.04.2016թ-ին, այսինքն՝ ՀՀ դատախազության հայտարարությունը տարածելուց հետո:

¹⁰⁹ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը՝ ամբողջական և ճշգրիտ տվյալների հավաքագրման նպատակով դիմել է նաև այն հասարակական կազմակերպություններին, որոնք հանրաքվեի ժամանակ իրականացրել են դիտորդական առաքելություն: Հավաքագրված տվյալներից պարզվել է, որ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ կողմից hra.am կայքում հրապարակված տեղեկությունների հիման վրա նախապատրաստվել են նյութեր: Պետք է նշել նաև, որ, ցավոք ոչ բոլոր կազմակերպություններն են տրամադրել անհրաժեշտ ամբողջական տեղեկություններ: Մասնավորապես, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ-կազմակերպություններին («Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, լրագրողների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպություն, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ) տեղեկություն տրամադրելու խնդրանքով, ինչպես նաև «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ին: «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ-կազմակերպությունից միայն «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակն է տրամադրել տեղեկություններ, իսկ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ից կազմակերպությունը ստացել է, որոշակի տվյալներ, սակայն ամբողջական տեղեկություններ

ՀՀ գլխավոր դատախազությունը 2016թ. ապրիլի 27-ին կազմակերպության հարցմանը պատասխանել է, որ բողոքների վերաբերյալ «հատուկ վերլուծություն ՀՀ գլխավոր դատախազությունը չի իրականացնում»:

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ

Հանրաքվեի քվեարկության ընթացքում դիտորդների կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ տեղեկությունները տեղադրվել են hra.am կայքում¹¹⁰: Կայքում տեղադրված նյութերից առնվազն 32 դեպքի առթիվ նախապատրաստվել են նյութեր, որոնց վերաբերյալ քննությունը մի մասով իրականացվել է Հատուկ քննչական ծառայության կողմից, իսկ մյուս մասը՝ Քննչական կոմիտեի կողմից: Հաշվի առնելով այն, որ հրապարակված տեղեկությունները դիտարկվել են որպես ՁԼՄ-ի կողմից հրապարակված հանցագործության մասին հաղորդումներ, քննություն իրականացնող մարմինները ոչ բոլոր գործերով են hra.am կայքը նույնականացրել «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի հետ: Այդ իսկ պատճառով կազմակերպությունը բոլոր գործերով ներգրավված չէ որպես հաղորդում ներկայացնող անձ:

Կազմակերպության կողմից «Քրեական գործի հարցումը մերժելու մասին» որոշումներից 2-ն են բողոքարկվել վերադատության կարգով: Քանի որ դիտորդը չի ցանկացել հետևողական լինել գործին, նշված գործերից մեկով բողոքը թողնվել է անհետևանք: Երկրորդ բողոքի հիման վրա դատախազը վերացրել է «Քրեական գործի հարցումը մերժելու մասին» որոշումը, և հարուցել քրեական գործ:

Որոշ դեպքերում տուժողները սպառնալիքների, վախի մթնոլորտի պատճառով հրաժարվել են բացատրություններ տալ:

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ

2016թ. առաջին ամիսներին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հրապարակել է «Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ» զեկույցը, որտեղ կազմակերպությունը ներկայացրել է նաև որոշակի տեղեկություններ քվեարկությունից առաջ, քվեարկության օրը և քվեարկությունից հետո արձանագրված խախտումների վերաբերյալ իրականացված գործողությունների ցանկը¹¹¹: Ստորև ներկայացվում են այդ գործողություններից մի քանիսը:

Աղյուսակ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակի կողմից ընտրափախտումների առթիվ իրականացված գործողությունները

1. Հաղորդում ընտրակեղծիքների մասին

Հանրաքվեից հետո՝ 2015թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որով ներկայացվել է, որ կազմակերպությունը հիմնավոր կասկած ունի այն մասին, որ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի արդյունքները մի շարք տեղամասերում կեղծվել են: Կասկածները վերաբերում են այն տեղամասերին, որոնցում մասնակցությունը բարձր է եղել հանրապետության ողջ տարածքում գրանցված մասնակցության ցուցանիշից: Հաղորդման մեջ ներկայացվել է, որ թվով 450 տեղամասերում հանրաքվեի օրը

ստանալու համար Կենտրոնը խնդրել է դիմել «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ին որը համակարգում է դատական գործերը: «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն կազմակերպության նամակին չի պատասխանել:

¹¹⁰ տե՛ս Հանրաքվե 2015. ՔՀԻ դիտորդների արձանագրած խախտումները (թարմացված)/ <http://hra.am/hy/events/2015/12/06/referendum#sthash.VE2bFvul.dpuf>:

¹¹¹ տե՛ս «Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ» զեկույց, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ, 2016, էջ 79-83 // <http://hcav.am/wp-content/uploads/2016/01/Constitutional-Reform-2015.pdf>:

գրանցվել է 50-60 տոկոս մասնակցություն, 368 տեղամասում 60-70 տոկոս և 297 տեղամասում 70-100 տոկոս մասնակցություն, ինչը մեզ մոտ հիմնավոր կասկած է առաջացնում առ այն, որ այն տեղամասերում, որտեղ քվեարկության մասնակիցների ակտիվության ցուցանիշը բարձր է եղել 60 տոկոսից, տեղի է ունեցել կամ լցնում, կամ բացակա անձանց փոխարեն քվեարկություն: Հաղորդման հետ միաժամանակ ներկայացվել է նաև այն տեղամասերի ցուցակը, որոնցում մասնակցությունը եղել է 60 տոկոսից ավելի: Կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա, քննություն իրականացնելու համար պատասխանատու մարմնի կողմից համապատասխան որոշում չի կայացրել և հաղորդում ներկայացրած իրավաբանական անձին չի տրամադրվել: Կազմակերպության կողմից 15.01.2016թ. դիմում է ներկայացվել դատարան՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության անգործությունը վերացնելու և 2015թ. դեկտեմբերի 10-ին ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա որոշում կայացնելու և այն հաղորդում ներկայացրած անձին տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

2. Հանցագործության մասին հաղորդում՝ լցնում կատարելու մասին

Կազմակերպության դիտորդներից ստացված տեղեկատվության հիման վրա, կազմակերպության էլեկտրոնային էջի միջոցով հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել, այն մասին, որ թիվ 29/25 տեղամասում լցնում է կատարվել: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Սպիտակի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, որի շրջանակներում հարցաքննվել է նաև կազմակերպության կողմից տվյալ տեղամասում դիտորդություն իրականացրած դիտորդը: Այս պահին կատարվում է քննություն:

ՀՀ առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարաններում քննված քրեական գործեր

Գործերի քննության կարգը

Սահմանադրության հանրաքվեի ժամանակ ընտրախախտումների վերաբերյալ 40 դատական գործերից 39-ը¹¹² քննվել են դատաքննության արագացված կարգով, և 40 գործերից 39-ում որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին, իսկ մեկ դեպքում՝ կալանավորում:

Գործերի ընդդատությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին աստյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին աստյանի դատարանի դատական տարածքում: Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածն իր հերթին սահմանում է, որ քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին աստյանի դատարանի դատական տարածքից դուրս:

Աշխարհագրական առումով 40 քրեական գործերից 30 գործով ընտրախախտումները կատարվել են Երևանում, 3-ը՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, 1-ը՝ Շիրակի մարզի Ամասիա գյուղում, 1-ը՝ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղում, 1-ը՝ Ապարանում, 1-ը՝ Լոռու մարզի Նորաշեն գյուղում, 1-ը՝ Սպիտակում, 1-ը՝ Վայոց Ձորի Զառիթափ գյուղում, 2 գործ՝ Կոտայքի մարզի մարզի Քասախ գյուղում և 1-ը՝ Կոտայք գյուղերում, 1-ը՝ Գորիսում:

¹¹² Բացառություն է թիվ ԿԴ3/0006/01/16 գործը

Ընտրախախտումների աշխարհագրական տեղակայումը								
Երևան	Գյումրի	Շիրակի մարզի Ամասիա գյուղ	Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղ	Լոռու մարզի Լորաշեն գյուղ	Սյուխակ	Վայոց Ձորի Զառիթափ գյուղ	Կոտայքի մարզի Քասախ գյուղ	Գորիս
29	3	1	1	1	1	1	2	1

Ուսումնասիրելով բոլոր 40 դատական գործերը ըստ դատարանների և դատավորների, պարզվել է, որ Երևան քաղաքում կատարված 29 հանցագործությունների դեպքի վերաբերյալ 10 գործ քննվել է ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, որոնցից 5-ը քննվել է դատավոր Դավիթ Գրիգորյանի կողմից, 1-ը՝ դատավոր Մարինե Մելքոնյանի կողմից, 2-ը՝ եղել է դատավոր Ռուբիկ Մխիթարյանի վարույթում, և ևս 2 գործ՝ դատավոր Արթուր Մկրտչյանի վարույթում:

ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան			
Դավիթ Գրիգորյան	Մարինե Մելքոնյան	Ռուբիկ Մխիթարյան	Արթուր Մկրտչյան
5	1	2	2

Եւս 8 գործ քննվել է ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Լորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, որոնցից 4-ը մակագրվել է դատավոր Մնացական Մարտիրոսյանին, 2-ը՝ դատավոր Գագիկ Պողոսյանին, 1-ը՝ դատավոր Մեսրոպ Մակյանին, և վերջին գործը՝ դատավոր Արշակ Վարդանյանին:

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Լորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան			
Մնացական Մարտիրոսյան	Գագիկ Պողոսյան	Մեսրոպ Մակյան	Արշակ Վարդանյան
4	2	1	1

ՀՀ Երևան քաղաքի Ավան և Լոր Լորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավորների կողմից քննվել է 6 քրեական գործ, որոնցից երեքը եղել է դատավոր Դավիթ Հարությունյանի վարույթում, իսկ երկուսը՝ դատավոր Արմեն Վարդանյանի վարույթում, իսկ վերջինը՝ Մամվել Ուզումյանի վարույթում:

ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա բոլոր երեք գործերը քննվել են դատավոր Նելլի Բաղդասարյանի կողմից:

ՀՀ Երևանի քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա գործերից մեկը քննվել է Ռոբերտ Պապոյանի կողմից, իսկ մյուսը՝ Կարեն Ֆարխոյանի կողմից:

ՀՀ Երևան քաղաքի Ավան և Լոր Լորք վարչական շրջանների, Շենգավիթ վարչական շրջանի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դատարանների			
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--

դատավարների կողմից քննված գործերը					
ՀՀ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան			ՀՀ Երևան քաղաքի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան	ՀՀ Երևանի քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	
Դավիթ Հարությունյան	Արմեն Վարդանյան	Մամվել Ուզումյան	Նելլի Բաղդասարյան	Ռոբերտ Պապոյան	Կարեն Ֆարխոյան
3	2	1	3	1	1

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա չորս գործերից 2-ը քննվել է դատավոր Աշոտ Մանուկյանի կողմից (Արթիկի նստավայր), մեկը՝ դատավոր Արտակ Թադևոսյանի կողմից (Մարալիկի նստավայր), և վերջինը՝ դատավոր Վարդան Գրիգորյանի կողմից (Արթիկի նստավայր):

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննված երկու գործերից մեկը քննել է դատավոր Վաղինակ Մկրտչյանը (Աբովյանի նստավայր), իսկ մյուսը՝ Յուրի Բաղդասարյանը (Եղվարդի նստավայր):

Գործերից մեկը քննվել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նարինե Հովակիմյանի վարույթում (Ստեփանավանի նստավայր), իսկ մյուսը՝ դատավոր Լուսինե Աբգարյան կողմից (Սպիտակի նստավայր):

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա մեկ գործը քննության է առվել դատավոր Յուրիկ Բսկոյանի կողմից (Մարտունու նստավայր):

ՀՀ Արարատի և Վայոդ Ձորի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվել է մեկ գործ, և մակագրվել է դատավոր Հարություն Պետրոսյանին (Եղեգնաձորի նստավայր):

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա քրեական գործը քննվել է դատավոր Նապոլեոն Օհանյանի կողմից (Կապանի նստավայր): Պետք է նշել, որ գործի քննությունը իրականացվել է Կապան քաղաքի նստավայրի դատավորի կողմից, չնայած որ հանցագործության կատարմանն է եղել Գորիս քաղաքի ընտրատեղամասում:

Մարզերի դատարանների դատավորների կողմից քննված գործերի քանակները									
ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան			ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան		ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան		ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	ՀՀ Արարատի և Վայոդ Ձորի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան
Աշոտ Մանուկյան (Արթիկ)	Արտակ Թադևոսյան (Մարալիկ)	Վարդան Գրիգորյան (Արթիկ)	Նարինե Հովակիմյան (Ստեփանավան)	Լուսինե Աբգարյան (Սպիտակ)	Վաղինակ Մկրտչյան (Աբովյան)	Յուրի Բաղդասարյան (Եղվարդ)	Յուրիկ Բսկոյան (Մարտունու)	Հարություն Պետրոսյան (Եղեգնաձոր)	Նապոլեոն Օհանյան (Կապան)

2	1	1	1	1	1	2	1	1	1
---	---	---	---	---	---	---	---	---	---

Չնայած ընդհանուր իրավասության տարբեր դատարանների տարբեր դատավորների կողմից քննված տարբեր գործերի դատավորների կողմից դրանց վերաբերյալ կայացված որոշումները խիստ միատեսակ են փաստերի գնահատման, խափանման միջոցի կիրառման, մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքի կիրառման և վերջնական պատժի չափի ընտրության առումով:

Իրավակիրառ միատեսակ պրակտիկայի առկայությունը թվում է, թե պետք է ողջունելի լինի, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ միատեսակությունը դրսևորվել է բացառապես կոնկրետ խումբ գործերի նկատմամբ, մասնավորապես՝ հանրաքվեի քվեարկության խախտումներ, և այդ խախտումներն հիմնականում իրականացվել են Հայաստանի Հանրապետական կուսակցության հովանավորությամբ, ապա կարելի է եզրակացնել, որ այս պարագայում իրավակիրառ պրակտիկայի միատեսակությունը ուղղորդված դատավարությունների արդյունք է:

Քրեական գործերն ըստ հանցագործության սուբյեկտների

40 դատական գործերի ուսումնասիրությունից պարզվել է, որ 38 գործերով ներգրավված է եղել մեկական ամբաստանյալ, իսկ մեկ գործով՝ 4 ամբաստանյալ, և ևս մեկ գործով՝ 2 ամբաստանյալ: Այսինքն, 40 դատական գործերով ընդհանուր առմամբ որպես ամբաստանյալ ներգրավված են եղել 44 անձինք:

Հանցագործության կատարման պահին 40 քրեական գործերով 44 ամբաստանյալներից 27-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նդրկայացուցիչ են եղել, որոնցից 19-ը եղել են ընտրատեղամասային հանձնաժողովների անդամներ, 6-ը՝ ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ, 1-ը՝ հանձնաժողովի քարտուղար, ևս 1-ը՝ ՀՀԿ վստահված անձ, և 16-ը՝ քաղաքացի-ընտրողներ, 1-ը՝ «Այո» քարոզչական շտաբի ներկայացուցիչ:

4 ամբաստանյալների ներգրավմամբ գործի հակիրճ նկարագրությունը

Թիվ ԵԿԴ/0012/01/16 քրեական գործ

Թիվ 10/20 ընտրատարածքում առաջին երեք ամբաստանյալները՝ ներկայացնելով իրենց անձնագրերի տվյալները՝ ստորագրել են ընտրացուցակում ընդգրկված այլ անձանց տվյալների դիմաց, նրանց փոխարեն կատարել են քվեարկություն և հեռացել: Հանցագործությունը կատարելու համար վերջիններիս օժանդակել է չորրորդ ամբաստանյալը, ով հանդիսանալով հանձնաժողովի անդամ, օժանդակել է գործի մյուս ամբաստանյալների քվեարկել այլ անձանց փոխարեն՝ իր պատասխանատվության ներքո գտնվող ընտրացուցակը տրամադրել է նրանց այլ անձանց փոխարեն ստորագրություն կատարելու համար:

Բոլորին դատապարտել են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Քանի որ չորրորդ ամբաստանյալը օժանդակել է առաջին երեք ամբաստանյալներին նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38 (հանցակիցների տեսակները)-153-րդ (մեկից ավելի անգամ քվեարկություն) հոդվածով նախատեսված հանցանքում, սակայն նույնպես դատապարտել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

26 հանձնաժողովի ներկայացուցիչներից 1-ը եղել է մանկապարտեզի դաստիարակչուհի, 1-ը՝ մանկապարտեզի ղեկավար, 2-ը՝ ուսուցիչներ, 1-ը՝ դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, ևս 1-ը՝ գրադարանավարուհի, 8-ը՝ չեն աշխատել, 4-ը եղել են համայնքի կամ համատիրության աշխատողներ, իսկ մնացյալ 6-ը՝ մասնավոր սեկտորի աշխատողներ:

Ընտրատեղամասային հանձնաժողովներում պաշտոն զբաղեցրած անձանց կողմից կատարված իրավախախտումները

N	Ընտրատեղամասի համար	Համայնք	Ամբաստանյալի զբաղեցրած պաշտոնը հանցագործության կատարման պահին	Ամբաստանյալի զբաղվածությունը	Իրավախախտման նկարագրությունը
1	1/07	Երևան	հանձնաժողովի անդամ	թիվ 56 մանկապարտեզի ղեկավար	Այլ անձի փոխարեն քվեարկություն
2	9/2	Երևան	հանձնաժողովի անդամ	Երևանի քաղաքապետարանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի, սպասարկումների և գովազդի բաժնում գլխավոր մասնագետ	Հանձնաժողովի անդամին նյութապես շահագրգռել է փորձելով ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկությունները և պահանջելով իրականացնել այլ գործողություններ: Նաև այլ կերպ է խանգարել հանձնաժողովի անդամներին:
3	10/23	Երևան	հանձնաժողովի անդամ	չի աշխատում	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /2 անգամ/
4	2/11	Երևան	հանձնաժողովի անդամ	Երևանի թիվ 101 մանկապարտեզում դաստիարակչուհի	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /2 անգամ/:
5	35/37	Գյումրի	հանձնաժողովի նախագահ	«Գյումրի-Գարեջուր» ՍՊԸ-ում արտադրամասի պատասխանատու	Այլ անձի փոխարեն քվեարկություն
6	10/20	Երևան	հանձնաժողովի անդամ	Հողագործ	Օժանդակել է գործի մյուս ամբաստանյալների քվեարկել այլ անձանց փոխարեն իր պատասխանատվության ներքո գտնվող ընտրացուցակը տրամադրել է նրանց այլ անձանց փոխարեն ստորագրություն կատարելու համար
7	1/05	Երևան	հանձնաժողովի անդամ	թիվ 104 հիմնական դպրոցում ինֆորմատիկայի ուսուցչուհի	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /2 անգամ/
8	5/21	Երևան	հանձնաժողովի անդամ	«Արաբկիր Կամար» ՓԲԸ-ում ավտոտնակների գործը համակարգող	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /4 անգամ/
9	4/26	Երևան	հանձնաժողովի անդամ	«Դեբենհամա» խանութ սրահում մենեջեր	Այլ անձի փոխարեն քվեարկություն
10	10/15	Երևան	հանձնաժողովի անդամ	«Բի-Էլ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում մենեջեր	Այլ անձի փոխարեն քվեարկություն /6 անգամ/
11	8/08	Երևան	հանձնաժողովի անդամ	«Գավառ» համատիրությունում կառավարիչ	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /4 անգամ/
12	2/32	Երևան	հանձնաժողովի անդամ	չի աշխատում	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /3 անգամ/

13	32/18	Լոռի, Նորաշեն	հանձնաժողովի անդամ	Նորաշենի գյուղապետարանում առաջին կարգի մասնագետ	Այլ անձի փոխարեն քվեարկություն /2 անգամ/
14	3/6	Երևան	հանձնաժողովի անդամ	չի աշխատում	Թվով 5 անձանց փոխարեն քվեարկելու փորձ
15	22/26	Կարմիրգյուղ	հանձնաժողովի անդամ	Կարմիրգյուղ գյուղի մանկական արվեստի դպրոցի տնօրեն	Այլ անձի փոխարեն քվեարկություն
16	28/35	Կոտայք գյուղ	հանձնաժողովի նախագահը	Կոտայքի մարզի Կոտայք համայնքի ղեկավարի տեղակալ	Կեղծել է քվեարկության արդյունքները:
17	9/17	Երևան	հանձնաժողովի քարտուղար	չի աշխատում	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /2 անգամ/
18	2/36	Երևան	հանձնաժողովի անդամ	դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	Քվեարկության արդյունքների կեղծում
19	4/12	Երևան	հանձնաժողովի անդամ	չի աշխատում	Այլ անձանց փոխարեն քվեարկություն
20	4/05	Երևան	հանձնաժողովի նախագահ	չի աշխատում	Լրագրողի գործողությունների խոչընդոտում, այլ անձի փոխարեն քվեարկություն
21	5/28	Երևան	ՀՀԿ վստահված անձ	Կարեն դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն «Գիծ» մասնաճյուղ	Լրագրողի գործողությունների խոչընդոտում
22	5/38	Երևան	հանձնաժողովի նախագահ	Կարեն դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն ՓԲԸ-ի իրավաբանական բաժնի պետ	Քվեարկության արդյունքների կեղծում
23	4/28	Երևան	Հանձնաժողովի անդամ	չի աշխատում	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /16 անգամ/
24	8/31	Երևան	հանձնաժողովի նախագահ	Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի գրադարանավարուհի	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /2 անգամ/
25	8/31	Երևան	Հանձնաժողովի անդամ	հայտնի չէ	Այլ անձանց փոխարեն քվեարկություն /2 անգամ/
26	4/20	Երևան	հանձնաժողովի նախագահ	չի աշխատում	Քվեարկության արդյունքների կեղծում
27	26/29	Քասախ	Հանձնաժողովի անդամ	Չի աշխատում	Խոչընդոտել է հանձնաժողովի աշխատանքին

Ընտրախախտում իրականացրած 16 քվեարկողներից մեծ մասը՝ 9-ը չեն աշխատում, 1-ը հանդիսանում է պայմանագրային զինծառայող և աշխատում է զորամասում որպես ջոկի գնդացրորդ, 2-ը՝ մասնավոր սեկտորի աշխատողներ, 1-ը՝ համայնքի ղեկավարի աշխատակազմում կոմունալ բաժնի 1-ին կարգի մասնագետ, իսկ 2-ը՝ ուսանող, իսկ վերջինի գրադավածությունը պարզ չէ, քանի որ դատավճռի մեջ նշված չէ:

Ընտրողի կարգավիճակ ունեցող անձանց կողմից կատարված իրավախախտումները

N	Ընտրատեղամասի համար	Համայնք	Ամբաստանյալի զբաղեցրած պաշտոնը հանցագործության կատարման պահին	Ամբաստանյալի զբաղվածությունը	Իրավախախտման նկարագրությունը
1	34/05	Գյումրի	քվեարկող	հսկիչ «Գազպրոմ-Արմենիա» ընկերությունում	Մեկից ավելի անգամ ու այլ անձի փոխարեն քվեարկություն
2	10/14	Երևան	քվեարկող	Հայտնի չէ	Այլ անձի փոխարեն քվեարկություն
3	34/20	Գյումրի	քվեարկող	չի աշխատում	Մեկից ավելի անգամ ու այլ անձի փոխարեն քվեարկություն
4	10/03	Երևան	քվեարկող	չի աշխատում	Այլ անձի փոխարեն քվեարկություն
5	10/11	Երևան	քվեարկող	Հայտնի չէ	Այլ անձի փոխարեն քվեարկելու փորձ
6	2/06	Երևան	քվեարկող	Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում կոմունալ բաժնի 1-ին կարգի մասնագետ	Այլ անձի փոխարեն քվեարկություն
7	10/20	Երևան	քվեարկող	ուսանող	Այլ անձի փոխարեն քվեարկություն
8	10/20	Երևան	քվեարկող	ուսանող	Այլ անձի փոխարեն քվեարկություն
9	10/20	Երևան	քվեարկող	«Առեկսիմբանկ Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի «Չարենց» մասնաձյուղում վարկային մասնագետ	Այլ անձի փոխարեն քվեարկություն
10	29/25	Սպիտակ	քվեարկող	չի աշխատում	Այլ անձի փոխարեն քվեարկության փորձ
11	34/1	Ամասիա գյուղ	քվեարկող	չի աշխատում	Այլ անձի փոխարեն քվեարկություն
12	37/09	Գորիս	քվեարկող	չի աշխատում	Մեկից ավելի անգամ ու այլ անձի փոխարեն քվեարկության փորձ
13	8/25	Երևան	քվեարկող	չի աշխատում	Մեկից ավելի անգամ ու այլ անձի փոխարեն քվեարկության փորձ
14	10/11	Երևան	քվեարկող	Հայտնի չէ	Այլ անձի փոխարեն քվեարկության փորձ

15	39/39	Զատիթափ	քվեարկող	պայմանագրային զինձառայող	Այլ անձի փոխարեն քվեարկության փորձ
16	8/31	Երևան	քվեարկող	Հայտնի չէ	Այլ անձի փոփոխարեն քվեարկություն

Թիվ ԵԱՔԴ/0047/01/16 քրեական գործով ամբաստանյալը, որը հանդիսացել է «Այո» քարոզչական շտաբի ներկայացուցիչ գործազուրկ է:

Այսպես, վերոնշյալ տվյալներից պարզ է դառնում, որ 44 ամբաստանյալներից 5-ի զբաղվածությունը հայտնի չէ, 18-ը չեն աշխատում, 7-ը հանդիսացել են մասնավոր սեկտորի աշխատողներ, երկուսը՝ ուսանող, իսկ մնացյալ 11-ը ամբաստանյալները՝ եղել են տարբեր բնագավառներում պետական համակարգի աշխատողներ¹¹³:

Ինչպես երևում է աղյուսակներից, մասնավոր ոլորտում պաշտոն զբաղեցրած անձինք աշխատում են այնպիսի ընկերություններում, որոնց նկատմամբ առկա է մեծ ազդեցություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Օրինակ՝ կազմակերպությունը կարողացել է պարզել, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ն, ըստ Երևանի քաղաքապետարանի կայքում տեղադրված քաղաքապետի որոշումների՝ 2013թ.-ից (երբե ոչ ավելի շուտ) աշխատում է Երևանի քաղաքապետարանի հետ¹¹⁴:

Փաստացի, վարչական ռեսուրսների և լծակների օգտագործման հանգամանքը հաստատվում է նաև տարբեր պետական մարմինների կողմից հանրաքվեի քվեարկության խախտումների իրականացման փաստերով:

Դատարանների կողմից նշանակված պատժատեսակը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների գնահատումը¹¹⁵

ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով, նախատեսված է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով: Եթե այդ հանցագործությունը կատարվել է գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, նյութապես շահագրգռելով, կամ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, կամ պաշտոնեական դիրքն օգտագործելով, կամ խումբ անձանց կողմից, կամ անձին ազատությունից զրկելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից մինչև հինգ տարի ժամկետով:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերում ամրագրված են այն ծանրացուցիչ հանգամանքները, որոնց առկայության դեպքում որպես պատիժ է նշանակվում երկուսից մինչև հինգ տարի ազատազրկումը.

- 1) կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,
- 2) կատարվել են նյութապես շահագրգռելով,
- 3) գույքողվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

¹¹³ Այս թվի մեջ ներառված են նաև համատիրության աշխատողները՝ հաշվի առնելով նրանց կապը թաղապետարանների հետ:

¹¹⁴ Տե՛ս Երևանի քաղաքապետարանի կայքը.

<https://www.yerevan.am/am/search/?search=%D4%B1%D6%80%D5%A1%D5%A2%D5%AF%D5%AB%D6%80+%D4%BF%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80>

¹¹⁵ Ստորև ներկայացվող տվյալները դուրս բերելու համար կրկին հաշվի են առվել այն 29 դատական գործերը, որոնց վերաբերյալ առկա է վերջնական դատական ակտ

5) կատարվել են մի խումբ անձանց կողմից,

6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով: ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով արգելված արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

Կրկնակի կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար որպես պատիժ է նշված տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկում՝ երկուսից երեք տարի ժամկետով: **Ընդ որում, այստեղ հաշվի չի առնվում ոչ անձի զբաղեցրած պաշտոնը, ոչ էլ նույն արարքը մի քանի անգամ, կամ մի խումբ անձանց հետ կատարելը: Այսինքն՝ պատիժը ծանրացնող հանգամանքներ նախատեսված չեն:** Սա նշանակում է, որ եթե անձը, օրինակ քվեարկել է մեկ անգամ ուրիշի փոխարեն նրան որպես պատիժ է նշանակվելու առնվազն 500.000 ՀՀ դրամ: Եւ նույն սկզբունքը հանցագործությունը մի քանի անգամ, կամ տասնյակ անգամ կատարելիս նրան կարող է նշանակվել նույն պատիժը: Այնուամենայնիվ, դատարանները հիմնականում փորձել են ամեն կերպ մեղմացնել անձի կողմից կատարված հանցանքը:

Ըստ ուսումնասիրության արդյունքների պարզվել է, որ դատարանները գործերի 37 անձի դեմ որպես պատիժ ընտրել են տուգանքը, որը հանդիսանում է 149, 150 և 153 հոդվածներով **ամենամեղմ պատիժը:** Ընդ որում նշված դեպքերից մեկով պատիժը պայմանական չի կիրառվել¹¹⁶:

Որպես ամենախիստ պատիժ՝ ազատազրկումը կիրառվել է գործերից 6-ում. ազատազրկում՝ 2 կամ 3 տարի ժամկետով: Սակայն ուշագրավ է, որ **բոլոր 6 դեպքերում էլ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:** Հատկանշական է, որ բոլոր վեց դեպքերում էլ անձինք դատապարտվել են հանրաքվեի արդյունքները կեղծելու, կամ ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար¹¹⁷:

3 տարի ժամկետով պայմանական ազատազրկումը որպես պատիժ կիրառված դատական գործերը

2. Թիվ ԿԴ1/0005/01/16 քրեական գործ

Անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով այն բանի համար, որ նա ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի ընթացքում հանդիսանալով թիվ 28 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 28/35 հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահը, այդ տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունների երկու օրինակներում և նշված տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում գրանցված թվային տվյալները 2015թ. դեկտեմբերի 6-ին՝ ժամը 24-ի սահմաններում, գրիչով կրկնագծելու եղանակով կեղծել է քվեարկության արդյունքները: Թիվ 28/35 հանրաքվեի տեղամասում ամփոփումից պարզվել է, որ քվեարկությանը մասնակցել են 611 անձինք, որոնցից 301-ը քվեարկել են «ԱՅՈ»-ի, 304-ը՝ «ՈՉ»-ի օգտին, իսկ թվով 6 քվեաթերթիկներ ճանաչվել են անվավեր: 2015թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 28/35 տեղամասում քվեարկության վերը նշված արդյունքներով 4 օրինակից կազմվել են արձանագրություններ, որոնք հաստատվել են հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների ստորագրություններով: [...] Հ.Շ.-ն քվեարկության իրական արդյունքներն «ԱՅՈ»-ի օգտին կեղծելու դիտավորությամբ, նշված երկու արձանագրություններում և թիվ 28/35 հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում գրիչով կրկնագծման եղանակով 300-ով ավելացրել է մասնակիցների թիվը՝ այն «611»-ից դարձրել «911», նույն չափով ավելացրել է «ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկների թիվը՝ այն «301»-ից դարձրել «601», իսկ արձանագրություններում համամասնորեն նվազեցրել է նաև մարված քվեաթերթիկների թիվը՝ այն «795»-ից դարձրել «495 » և ավելացրել քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեաթերթիկների թիվը՝ այն «611»-ից դարձրել «911», այդ կերպ կեղծել է հանրաքվեի թիվ 28/35 տեղամասի քվեարկության արդյունքները և արձանագրության կեղծված երկու օրինակներն ու

¹¹⁶ Տե՛ս թիվ ԵՇԴ/0025/01/16 դատական գործը:

¹¹⁷ Տե՛ս թիվ ԵԱՆԴ/0014/01/16, ԵԱՔԴ/0050/01/16, ԵՇԴ/0024/01/16, ԿԴ1/0005/01/16, ԵԿԴ/0313/01/15 դատական գործերը

գրանցամատյանը հանձնել Շնտրատարածքային ընտրական հանձնաժողով: Անձն աշխատում է որպես Կոտայքի մարզի Կոտայք համայնքի ղեկավարի տեղակալ: Որպես պատիժը նեղնացրող հանգամանքներ դատարանը հաշվի է առել հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, անձը բնութագրող, պատասխանատվությունը և նախկինում դատված չլինելը: Պատժվել է պայմանական ազատազրկմամբ, երեք տարի ժամկետով:


Ուսումնասիրված դատական գործերից պարզվել է, որ հիմնականում դատարանները՝ որպես պատիժը մեղմացնող հանգամանքներ են հաշվի առել այն, որ անձը գղջացել է իր կատարած արարքի համար, նախկինում դատված չի եղել, ընդունել է մեղքը, կամ **խոստովանական ցուցմունք** է տվել:

Մեջբերում թիվ ԵԱՆ/0003/01/16 քրեական գործ

Կ.Ա.-ի անձը դրականորեն բնութագրող հանգամանքներ են, մասնավորապես՝ առաջադրված մեղադրանքն ընդունելը, խոստովանական ցուցմունքներ տալն ու կատարածի համար գղջալը:

Դատարանն արձանագրում է, որ գործում ամբաստանյալ Կ.Ա.-ի քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է նախկինում արատավորված՝ դատապարտված չլինելը, դրականորեն բնութագրվելը (նման իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ԵԿԴ/0146/01/08 և 2007 թվականի հունիսի 12-ի թիվ ՎԲ-124/07 որոշումներում):

Որոշ դեպքերում, եթե անձը ամուսնացած է եղել, կամ իր խնամքի տակ եղել են անչափահաս երեխաներ, դատարանը այդ հանգամանքը նույնպես հաշվի է առել որպես պատիժը մեղմացնող: Սակայն, եղել են նաև այնպիսի դեպքեր, երբ դատարանները հաշվի են առել համայնքի ղեկավարի, կամ համատիրության նախագահի կողմից հաստատված բնութագիրը, համաձայն որի՝ ամբաստանյալը բնակության վայրում բնութագրվում է բացառապես դրական, կամ համապատասխան վարչական շրջանի ղեկավարի կողմից շնորհակալագրերով և պատվոգրերով պարգևատրված լինելը:



Մի քանի դեպքում որպես պատիժը մեղմացնող հանգամանք հաշվի են առել ինքնակամ ներկայանալը, կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցին աջակցելը:

Ուղղորդված և հովանավորվող դատավարությունների մասին են վկայում այնպիսի փաստեր, երբ խախտման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը դատավորի կողմից վերաձևակերպվում է, իսկ այնուհետև դրան տրվում է ավելի մեղմ իրավական գնահատական: Օրինակ՝ անձի կողմից կատարվող հանցագործությունը կատարման պահին բացահայտվել է, և վերջինս **դիմել է փախուստի**: Այնուհետև, ըստ դատավճռի մեղմացնող հանգամանք է դիտարկվել այն, որ անձն ինքնակամ ներկայացել է, ընդ որում, այս գործով դատավորը՝ որպես պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել «նախկինում դատված չլինելը, կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, **հանցավոր մտադրության իրականացման աստիճանը**, հանցագործությունը կատարելուց հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը՝ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչելը:

Մեջբերում դատական գործից թիվ ԵԿԴ/0030/01/16 քրեական գործից

Ամբաստանյալ Օ. Թոսունյանի նկատմամբ, նրան վերագրվող հանցագործության կատարման համար պատիժ նշանակելիս՝ դատարանը հաշվի է առնում վերոհիշյալ իրավական ակտերում և նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ամբաստանյալ Օ.Թ.-ի անձը, նախկինում դատված չլինելը, կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի կատարած արարքը միջին ծանրության հանցագործությունների շարքին դասվելը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործությունը կատարելուց հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը՝ առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելը:

Որպես ամբաստանյալ Օ.Թ.-ի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում ինքնակամ ներկայանալը, իսկ նրա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք առկա չէ: Հաշվի առնելով վերոգրյալը, նաև ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող որևէ հանգամանքի բացակայությունը՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Օ. Թոսունյանն իր կատարած, ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար ենթակա է պատժի այդ հանցագործության համար նախատեսված պատիժներից նվազ խստի՝ տուգանքի ձևով, քանի որ պատիժներից առավել խիստը՝ ազատազրկումը կիրառելու հիմքեր առկա չեն»:

Երկրորդ դեպքում (գործի հակիրճ նկարագրությունը ներկայացված է աղյուսակում) ամբաստանյալը հանցագործությունը կատարելու ժամանակ եղել է հանձնաժողովի նախագահ, աշխատել է «Գյումրի-Գարեջուր» ՄՊԸ-ում որպես արտադրամասի պատասխանատու, և ի թիվս այլոց, կարողացել է **աջակցել քննիչին ճիշտ քրեաիրավական գնահատական տալ իր արարքին**: Փաստորեն, մեղադրվող անձն իրականացրել է քննիչի գործողությունները, որի համար էլ պատժվել է ընդամենը տուգանքով՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

Պետք է նշել, որ նույնիսկ այն դեպքերում, երբ որևէ մեղմացնող հանգամանք չի արձանագրվել դատարանների կողմից (6 քրեական գործի շրջանակներում), այնուամենայնիվ ամբաստանյալներին որպես պատիժ նշանակվել է տուգանք, ընդ որում, տուգանքի նվազագույն չափը կազմել է 500.000 ՀՀ դրամ, իսկ առավելագույնը՝ 600.000 ՀՀ դրամ: Բորոր այս գործերով անձինք դատապարտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով արգելված արարք կատարելու համար:

Ինչպես երևում է վերոգրյալից, ոչ մի գործով օրենքով սահմանված առավելագույն պատիժը չի նշանակվել, և ազատազրկումը որպես պատժի տեսակ չի կիրառվել:

Հատկանշական է, որ բոլոր հանձնաժողովների անդամներին, հանձնաժողովի նախագահներին, կամ հանձնաժողովի քարտուղարներին, ովքեր դատապարտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով, կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար, կամ այլ անձի փոխարեն քվեարկությանը օժանդակելու համար, որպես ամենախիստ պատիժ նշանակվել է 600.000 ՀՀ դրամ տուգանք: Ամենամեղմ պատիժն է եղել է 500.000 ՀՀ դրամ տուգանք:

Մեկ գործով անձը դատապարտվել է երկու հանցագործություններ կատարելու համար՝ դիտորդի գործողությունները խոչընդոտելու, ինչպես նաև այլ անձի փոխարեն քվեարկելու համար: Երկու հանցանքի համար էլ դատարանը նշանակել է պատիժ՝ 600.000 ՀՀ դրամ չափով: Հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով ամբաստանյալի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել տուգանք՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով:

Հանձնաժողովների նախագահի/անդամի կողմից կատարված խախտումներ տուգանքը որպես պատիժ ընտրված դատական գործերից

1. Թիվ ԵԱՆԴ/0004/01/16 քրեական գործ

Անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով այն բանի համար, որ հանդիսանալով հանձնաժողովի անդամ, այլ անձանց փոխարեն քվեարկելու ուղղակի դիտավորությամբ, ընտրողների մատյանում, թվով 3 անձանց տվյալների դիմաց գիտակցաբար գրառել է մտածածին անձնագրային կեղծ տվյալներ, որոնց դիմաց ստորագրել և կնիքել է իրեն հատկացված կնիքի դրոշմով, ապա 3 քվեաթերթիկ գցել է քվեատուփը՝ այդ կերպ քվեարկելով այլ անձանց փոխարեն: Դատավճռի բովանդակությունից երևում է, որ գործում պատիժը մեղմացնող հանգամանքներ առկա չեն: Դատարանը հաշվի է առել առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչելու, կատարած արարքի համար զոջալու մասին ցուցմունքները, հայտարարությունները դատարանը համարել է պատիժը մեղմացնող հանգամանքներ, և դատապարտել է տուգանքով՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

2. Թիվ ԵԿԴ/0008/01/16 քրեական գործ

Անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով այն բանի համար, հանդիսանալով հանձնաժողովի նախագահ գրանցամատյանի թվով 6 համարների դիմաց կեղծ տվյալներ գրանցելով, այն է գոյություն չունեցող անձնագրային տվյալներ լրացնելով, դրանց դիմաց անձամբ ստորագրելով, քննությամբ չպարզված հանգամանքներում քվեարկել է թվով 6 անձանց փոխարեն: Դատարանը հաշվի է առել նախկինում դատված չլինելը, դրական բնութագրվելը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը՝ առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելը դատարանը համարել է պատիժը մեղմացնող հանգամանքներ, և դատապարտել է տուգանքով՝ 600000 ՀՀ դրամի չափով:

3. Թիվ ՇՂ3/0007/01/16 քրեական գործ

Անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով այն բանի համար, հանդիսանալով հանձնաժողովի նախագահ, դիտավորությամբ քվեարկել է այլ անձի փոխարեն՝ այլ անձի տվյալների դիմաց լրացրել է մտացածին նույնականացման քարտի տվյալներ, դրել կապ չունեցող ստորագրություն և հանձնաժողովի այլ անդամի անհատական կնիքը, օգտվելով ընտրատեղամասում իրեն հարմար պահի ստեղծված իրավիճակից, բոլորից աննկատ վերցրել է քվեաթերթիկ, կատարել քվեարկություն և քվեաթերթիկը ծրարի մեջ դրված, կնիքել ու գցել է քվեատուփի մեջ: Ըստ դատավճռի տվյալների՝ անձը աջակցել է քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցին: Դա, ինչպես նաև նախկինում դատված չլինելը, խստատվանական ցուցմունք տալը դատարանը համարել է պատիժը մեղմացնող հանգամանքներ, և դատապարտել է տուգանքով՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

4. Թիվ ԵԱԲԴ/0022/01/16 քրեական գործ

Ուսումնասիրելով ամբաստանյալ Սերգեյ Սուրենի Ավագյանի անձը բնութագրող տվյալները,

պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ամբաստանյալ Սերգեյ Սուրենի Ավագյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ Սերգեյ Սուրենի Ավագյանը կատարել է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ, որոնցից առավել ծանրի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետն էրեք տարի է, նախկինում դատված չէ, բնութագրվում է դրական՝ կազմակերպված է, բարեկիրթ: Ամբաստանյալ Սերգեյ Սուրենի Ավագյանի OS NO 00063234 համարի զինվորական գրքույկում կատարված գրառման համաձայն վերջինս ՀՀ ԶՈւ է գորակոչվել պիտանի շարային ծառայության համար և ծառայության ընթացքում ստացել է «ավագ սերժանտ» զինվորական կոչումը: Ամբաստանյալ Սերգեյ Սուրենի Ավագյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասով, չկան: Նույն հոդվածի 2-րդ մասով դատարանը որպես այդպիսին դիտում է նրա անկեղծորեն զղջալը: Սերգեյ Սուրենի Ավագյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով՝ չկան:

5. Թիվ ԵԱՔԴ/0020/01/16 քրեական գործ

Սունդուկյան 7-րդ շենքի բնակիչների կողմից տրված բնութագրի համաձայն Ա.Խուրշուդյանը իրեն դրսևորել է որպես խոհեմ, բանիմաց և հավասարակշռված անձնավորություն, յուրաքանչյուր պահի պատրաստակամ է օգնել բոլոր նրանց, ովքեր դիմում են այդ խնդրանքով, աշխատում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գ» մասնաճյուղում, որպես գլխավոր ինժեներ, արդարամիտ է, չի հանդուրժում կեղծիքն ու սադրանքը, աշխատասեր է, նվիրված իր ընտանիքին՝ կնոջն ու ծնողներին: 1995 թվականից Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է: Ներկայումս Երևան քաղաքի Բաղրամյան 76 հասցեում գտնվող ՀՀԿ գրասենյակի պատասխանատու է: Աչքի է ընկնում հանգիստ և զուսպ բնավորությամբ, ակտիվորեն մասնակցում է շենքի և համայնքի հասարակական աշխատանքներին, ապրում նրա խնդիրներով և փորձում իր հնարավորության սահմաններում օգտակար լինել իր համայնքի բնակիչներին:

Արթուր Հայկազի Խուրշուդյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ և պատիժ նշանակել տուգանք՝ ՀՀ նվազագույն աշխատավարձի 600 (վեց հարյուր)-ապատիկի՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի կանոններով, տուգանքի վճարման ժամկետ սահմանել 10 (տաս) ամիս և թույլատրել տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում՝ ամիսը 60.000 (վաթսուս հազար) ՀՀ դրամի չափով:

6. ԵԱՔԴ/0044/01/16 քրեական գործ

Ուսումնասիրելով ամբաստանյալ Աշոտ Սամվելի Ղուկասյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ամբաստանյալ Աշոտ Սամվելի Ղուկասյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ Աշոտ Սամվելի Ղուկասյանը կատարել է միջին ծանրության հանցանք, որի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետն էրեք տարի է, նախկինում դատված չէ: Ամբաստանյալ Աշոտ Սամվելի Ղուկասյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասով, չկան: Նույն հոդվածի 2-րդ մասով դատարանը որպես այդպիսին դիտում է նրա անկեղծորեն զղջալը: Աշոտ Սամվելի Ղուկասյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով՝ չկան:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների մեջ անդրադառնալով պատիժը մեղմացնող հանգամանքներին նշել է, թե ինչպես պետք է

դատարանները գնահատեն անձի կողմից կատարված արարքն ու պատիժը մեղմացնող հանգամանքները:

Դատարանը, մասնավորապես նշել է, որ «այլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են **անձի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա**»¹¹⁸: Վճռաբեկ դատարանի որոշումներից հետևում է նաև, որ դատարաններն անձի արարքի վտանգավորության աստիճանի հարցի քննարկման ժամանակ պետք է հաշվի առնեն «արարքի կատարման ընթացքը բնութագրող հանգամանքները»:

Այսպիսով, ըստ Վճռաբեկ դատարանի, դատարանն իրավասու չէ ամբաստանյալին մեղսագրվող արարքը ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին դասվելը դիտել որպես հանցանքի և հանցավորի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը նվազեցնող հանգամանք: Այս հանգամանքի առկայության փաստը հաստատելու համար անհրաժեշտ պայմաններն են՝

ա) անձը պետք է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքը կատարի առաջին անգամ,

բ) հանցանքի կատարումը պետք է պայմանավորված լինի հանցավորի կամքից անկախ գոյություն ունեցող հանգամանքների այնպիսի փոփոխությամբ կամ համընկմամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց հուզական ազդեցությունն ունենան անձի նկատմամբ և նպաստեն հանցանքի կատարմանը:

«Այսինքն՝ հանգամանքների պատահական զուգորդումը նախ և առաջ փաստի ինդիք է, որը դատարանի կողմից պետք է հաստատվի գործով բացահայտված բոլոր փաստական հանգամանքների համակցությամբ»:

Դատարանները պետք է պարզաբանեն, «թե ո՞ր հանգամանքների պատահական զուգորդմամբ է կատարվել հանցագործությունը, իր այս հետևությունը որևէ ձևով չի հիմնավորել, չի մատնանշել այն ապացույցները, որոնք վկայում են այս մեղմացնող հանգամանքի առկայության մասին, այդպիսիք բացակայում են նաև քրեական գործի նյութերում»:

Բացի այդ, պետք է նշել, որ վերոնշյալ բոլոր ընտրական գործընթացի դեմ ուղղված բոլոր հանցանքների սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, ինչը նշանակում է, որ այն որ անձը իրեն «մեղավոր է ճանաչում», «զղճում է արարքի համար», կամ «խոստովանական ցուցմունք է տալիս» որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես պատիժը մեղմացնող հանգամանք:

Առանձին հարկ ենք համարում ուշադրություն դարձնել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման մեջ մատնանշված այն փաստին, որ արարքի հանրային վտանգավորության բնույթի որոշման հարցում կարևոր է **խախտված քրեաիրավական նորմով պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը**¹¹⁹:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանները, չնայած որ հղում են տվել ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումներին, այնուամենայնիվ, հանցանքի վտանգավորության աստիճանը որոշելիս այլ պատիժ են նշանակել: Այս գործերում հանցանքի վտանգավորության աստիճանը հաշվի առնելիս դատարանները պետք է շատ մեծ նշանակություն տալին խախտված քրեաիրավական նորմով պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությանը՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին ու ազատություններին:

¹¹⁸ Տե՛ս Գարուշ Լորիկի Մադաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԴ/0029/01/08 որոշման 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերը, ինչպես նաև 02.06.2009թ. թիվ ԵԿԴ/0146/01/08 որոշման

¹¹⁹ Կետ 15

Փաստաբաններ

Հարուցված 38 քրեական գործերում ներգրավված են եղել մասնավոր փաստաբաններ, իսկ երկու ամբաստանյալի գործով՝ հանրային պաշտպան: Այդ ամբաստանյալներից մեկը չի աշխատել և խնամքին ունեցել է 30-31 շաբաթական հղի կին: Այս անձին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով արգելված արարք կատարելու համար, և դատապարտվել է տուգանքով՝ 500.000 ՀՀ դրամի չափով, որը, ինչպես նշվեց, հանդիսանում է վերոնշյալ հոդվածով նախատեսված ամենամեղմ պատիժը:

Թիվ ԿԴ3/0006/01/16 քրեական գործով ամբաստանյալը ֆիզիկապես վատառողջ էր, տառապել է «Էպիլեպսիա թեթև արտահայտված անձի բնորոշ փոփոխություններով» նյարդաբանական հիվանդությամբ, հանդիսացել է 2-րդ խմբի հաշմանդամ:

Մնացած 16 չաշխատող ամբաստանյալներն օգտվել են փաստաբանների ծառայություններից: Պետք է նշել նաև, որ անկախ փաստաբանի գործունեության հիմքին՝ հանրային, թե մասնավոր, վերջիններիս նշանակված պատժամիջոցը եղել է գրեթե նույնը:

Հատկանշական է, որ Երևան քաղաքի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննված գործերի մեծ մասով հանդես է եկել նույն փաստաբանը: Դա, մասնավորապես, երևում է բոլոր այն դեպքերում, երբ մեկ ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա է մի քանի գործ: Ստորև աղյուսակով ներկայացվում է միայն այն փաստաբանների անունները, ովքեր ներկայացրել են ամբաստանյալների շահերը հանրաքվեի վերաբերյալ քրեական գործով առավել հաճախ:

	Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան
Փաստաբան	Ա. Ալվանդյան	Վ. Վարդանյան	Ժ. Կոտիկյան	Ս. Մադաթյան
Գործերի թիվը	2	4	2	6
Ընդամենը գործերի թիվը դատարանում	5	8	2	8

Դատավճիռների բողոքարկումն ու կատարումը

Առաջին ատյանի դատական ակտերից որևէ մեկը չի բողոքարկվել վերաքննիչ դատարան, ավելին՝ 40 գործերից 32 դատական ակտերն ըստ datalex.am կայքում հրապարակված տվյալների՝ «կատարված են»: Հինգ չկատարված դատավճիռները պայմանական ազատագրմանը վերաբերող հինգ դատական գործերն են¹²⁰:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 428-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանի որոշումը կատարելու մասին դատավորի կարգադրությունը, որոշման պատճենի հետ, իսկ վերաքննության կարգով որոշման փոփոխման դեպքում՝ նաև վերաքննիչ դատարանի որոշման պատճենի հետ, ուղարկվում է այն անձանց կամ մարմնին, որոնց վրա դրված է դատարանի որոշումն ի կատար ածելու պարտականությունը»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «տուգանքի կատարումն ապահովում է տուգանքի դատապարտված անձի (սույն գլխում այսուհետ՝ դատապարտյալ) բնակության վայրի քրեակատարողական ծառայության տվյալ տարածքային մարմինը՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը»:

ՀՀ ֆինանսների նախարարությունը մերժել է տեղեկություն տրամադրելը գտնելով, որ պահանջվող տեղեկությունները հանդիսանում է բանկային գաղտնիք: Նախարարությունը հղում է արել նաև «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքին (տե՛ս Հավելված 7-ը):

Ընդ որում, այդ անձանց վերաբերյալ տվյալներն արդեն իսկ հրապարակված են եղել դատավճիռներում, որոնց հղում է կատարվել մեր հարցման մեջ և, ըստ էության, գաղտնիք չեն հանդիսացել:

Բողոքարկված դատական ակտեր

Թիվ ԵԿԴ/0313/01/15 քրեական գործի շրջանակներում վերաքննիչ բողոք ներկայացվել էր գործով տուժող չճանաչված անձի կողմից: Ընդ որում, այս «ընտրակաշառքի» գործով անձն ունեցել է երկու փաստաբան:

Մեջբերում թիվ ԵԿԴ/0313/01/15 քրեական գործից

Անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ 149-րդ հոդվածով այն բանի համար, որ նա՝ հանդիսանալով թիվ 9/2 ընտրատարածքի և ընտրական հանձնաժողովի անդամ՝ «հանրաքվեի հանձնաժողովի անդամի լիազորությունների ազատ իրականացմանը խոչընդոտելու դիտավորությամբ հանձնաժողովի անդամին նյութապես շահագրգռելով, այն է՝ 100.000 ՀՀ դրամ պարունակող ծրար փոխանցելու միջոցով նյութական վարձատրություն տալով, նրանից պահանջել է ձեռք բերել և իրեն տրամադրել ՀՀ Ազգային ժողովի ՀԱԿ խմբակցության վստահված անձանց տրվող չլրացված երկու վկայականներ, իսկ հանրաքվեի օրը՝ 2015թ. դեկտեմբերի 6-ին իր ասած ժամին որոշակի ժամանակով լքել քվեարկության սենյակը: Այդ կերպ խոչընդոտել է քաղաքացիների՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015թ. դեկտեմբերի 6-ի՝ հանրաքվեի իրավունքի և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների ազատ իրականացմանը»:

Հանձնաժողովի անդամը, Վ.Հ.-ն, ում սույն գործով ամբաստանյալը փորձել է նյութապես շահագրգռել, քրեական գործով ունեցել է վկայի կարգավիճակ: Դատարանում գործի քննության ժամանակ Վ.Հ.-ն ներկայացրել է դիմում, որով խնդրել է որոշում կայացնել իրեն թիվ ԵԿԴ/0313/01/15 քրեական գործով տուժող ճանաչելու մասին: Դատարանը

¹²⁰ Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պատասխան գրությունը՝ թվագրված 23 մայիսի 2016թ.

որոշել է միջնորդությունը թողնել առանց քննության՝ նկատի ունենալով, որ տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու մասին վկա Վ.Հ-ի միջնորդությունը վարույթի տվյալ փուլում քննվել չի կարող՝ ոչ ժամանակին հարուցված լինելու պատճառով:

Դատարանի որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը կայացրել է որոշում «Վերաքննիչ բողոքը առանց քննության թողնելու մասին» հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1 հոդվածի համաձայն՝ Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը.
2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, ազգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

5) առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375.4 հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ առաջին ատյանի դատարանի որոշումը՝ տուժող ճանաչելու վերաբերյալ դիմումն առանց քննության թողնելու մասին, որպես առանձին որոշում ենթակա չէ բողոքարկման:

Միաժամանակ վերաքննիչ դատարանը նշել է, որ «հակառակ մոտեցման պարագայում, եթե պայմանականորեն ընդունենք, որ Վ.Հ-ի և նրա ներկայացուցիչ Դ.Գ. -ի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունվի և այն բավարարվի, ապա նման որոշման կայացումը դատավարական որևէ հետևանք և ընթացակարգ չի կարող առաջացնել, քանի որ թիվ ԵԿԴ/0313/01/15 քրեական գործով դատական քննությունն ավարտվել է և կայացվել է վերջնական դատական ակտ»:

Բաժին 5 . Հանրաքվեի խախտումների համար օրենքով նախատեսված պատասխանատվության այլ մեխանիզմները և գործերի քննությունը ՀՀ վարչական դատարաններում

Օրենսդրական կարգավորումներ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 5-րդ գլխի («Քաղաքացիների իրավունքների և բնակչության առողջության դեմ ունեցվող վարչական իրավախախտումները») 40¹-40¹² հոդվածներով ամրագրված է որոշ ընտրախախտումների համար պատասխանատվության ենթարկելու միջոցները: Ընդհանուր քվեարկությանը և հանրաքվեին վրաբերում են 40¹, 40², 40⁴, 40⁵, 40⁶, 40⁷, 40¹¹, 40¹² հոդվածներով ամրագրված իրավախախտումները: Մասնավորապես, պատասխանատվություն է նախատեսված հետևյալ խախտումների համար.

Հանրաքվեի արդյունքները կարող են վիճարկվել սահմանադրական դատարանում ՀՀ Սահմանադրության 100-101-րդ հոդվածներով նշված դեպքերում և «Սահմանադրության դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ինչպես հայտնի է, հանրաքվեի արդյունքները վիճարկելու դիմումի հանձնումը ՀՀ սահմանադրական դատարանին խոչընդոտվել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակցի կողմից¹²¹:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով առանձին գլուխ է նախատեսված՝ ընտրական իրավունքի վերաբերյալ գործերի քննության համար (Գլուխ 28): ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն՝ ընտրական գործեր են հանդիսանում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումների հիման վրա:

Օրենսգրքի 207-րդ հոդվածը սահմանում է ընտրական գործերով ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, այն է՝ ՎԴՕ-ի 3-րդ հոդվածում նշված անձինք¹²², ինչպես նաև ՀՀ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում՝ համապատասխան ընտրական հանձնաժողովը:

¹²¹ Տե՛ս

¹²² ՀՀ ՎԴՕ 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարան դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործունեությամբ կամ անգործությամբ 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝ ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով. 2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն. 3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության: Դատարան դիմելու իրավունք որոշ դեպքերում ունեն նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք:

ՀՀ վարչական դատարանի գործերի ընդհանուր պատկերը

ՀՀ վարչական դատարան ներկայացվել է թվով 65 վարչական հայց, որոնք ներկայացվել են դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից, դիտորդների, լրագրողների և վստահված անձանց կողմից: 65 վարչական գործերով ներկայացված հայցադիմումներից միայն 2-ն են դարձել քննության առարկա, իսկ մնացած 63 գործերով առաջին աստիճանի դատարանները կայացրել են «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումներ, իսկ վերաքննիչ դատարանի կողմից՝ «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումներ: Վճռաբեկ դատարանում բողոքների վերաբերյալ որոշումներ դեռ չեն կայացվել:

Ուսումնասիրված բոլոր դատական գործերով ինչպես վարչական, այնպես էլ վերաքննիչ դատարանների որոշումները նույնաբովանդակ են, և բոլոր դատավորների հիմնավորումները, նույնիսկ բովանդակային առումով նույնն են:

Դատավարության կողմերը

Հայցվորներ

Նշված 65 վարչական գործերի մեծ մասում որպես հայցվոր էին ներգրավված «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ կազմակերպություններ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն (թվով 55 գործով), «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ-ն (թվով 55 գործով), լրագրողների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունը (թվով 51 գործով), «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ (թվով 47 գործով): Ներկայացված թվերը կարող են չհամընկնել, քանի որ նշված կազմակերպությունները հանդես են եկել որպես համահայցվորներ, և որոշ դեպքերում հայցը ներկայացվել է բոլոր կազմակերպությունների կողմից, իսկ որոշ դեպքերում՝ միայն երկու, կամ երեք կազմակերպությունների կողմից:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ կազմակերպությունները 29 գործով որպես համահայցվորներ դիմել են դատարան նաև դիտորդների, լրագրողների, վստահված անձանց հետ համատեղ: Ընդ որում, նման դեպքերում համահայցվորների թիվը կարող էր լինել տասից ավել անձ: Երկու գործերով՝ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ կազմակերպությունները հայց են ներկայացրել թվով 179 և 182 ֆիզիկական անձանց /լրագրողների, դիտորդների/ մասնակցությամբ: Վերջին երկու գործերից 1-ին գործով որպես պատասխանող էին ներգրավված թվով 18 ընտրական հանձնաժողովներ, իսկ երկրորդ գործով հանրաքվեի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Մեկ հայց ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողովի «Հայ Ազգային Կոնգրես» խմբակցության ղեկավար Լևոն Զուրաբյանի կողմից, ևս 1-ը՝ «Իրազեկ քաղաքացի միավորում» ՀԿ-ի կողմից, իսկ ևս 5 գործով լրագրողների, դիտորդների, կամ վստահված անձանց կողմից՝ առանց որևէ հասարակական կազմակերպության ներգրավվածության:


Հայցվորների կողմից ներկայացված հայցերի քանակը

Հայցվոր	«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամներ					Այլ		
	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ	«Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ	լրագրողների «Ասպարեզ» ակումբ	«Ընդդեմ իրավական կամայակ անության» ՀԿ	Դիտորդներ, լրագրողներ՝ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ-կազմակերպությունների հետ	ՀՀ ԱԺ «Հայ Ազգային Կոնգրես» խմբակցության ղեկավար Լևոն Զուրաբյան	«Իրազեկ քաղաքացի միավորում» ՀԿ	Դիտորդներ, լրագրողներ, վստահված անձինք
Գործերի թիվը	55	55	51	47	29	1	1	6
Ընդամենը	57					8		

Պատասխանողներ

ՀՀ վարչական դատարան ներկայացված 65 հայցերով որպես պատասխանող ներգավված են եղել թվով 26 ընտրատարածքային հանձնաժողովներ, ինչպես նաև Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը: Որոշ գործերով մի քանի ընտրական հանձնաժողովներ նշված են եղել որպես համապատասխանողներ:

Ընդհանուր 65 հայցերով որպես պատասխանող հանդես են եկել 26 ընտրատարածքները 56 անգամ և 24 անգամ՝ Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը:




Ինչպես արդեն նշվել էր վերևում, յուրաքանչյուր տարածքային հանձնաժողովի դեմ ներկայացվել է մեկից մինչև չորս հայց, իսկ գործերից մեկով որպես համապատասխանողներ հանդես են եկել թվով 18 հանձնաժողովներ, այն է՝ թիվ 7, 5, 4, 10, 33, 34, 35, 38, 39, 20, 14, 26, 28, 30, 31, 32, 21, 3 ընտրատարածքային հանձնաժողովները: Այն 24 գործերից, որոնցով Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը նեգրավված է եղել որպես պատասխանող, մեկ գործով որպես համապատասխանող ներգրավված էր նաև թիվ 5 ընտրական հանձնաժողովի հետ:

Գործերի բաշխվածությունն ըստ դատավորների

ՀՀ դատական օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ վարչական դատարանի կենտրոնական նստավայրը գտնվում է Երևան քաղաքում, սակայն դատարանն ունի այլ նստավայրեր նաև մարզերում: Հայցը կարող է ներկայացվել ինչպես ՀՀ վարչական դատարանի Երևանի նստավայր, այնպես էլ մարզային նստավայրեր՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված կարգը: Այսինքն՝ *հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարանում:*

Պատասխանողների գտնվելու վայրը մարզերում և ՀՀ վարչական դատարանների մարզային նստավայրերի ազկայությունը		
Պատասխանող	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գտնվելու վայր	ՀՀ վարչական դատարանի մարզային նստավայր
Թիվ 14 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Աշտարակ	Առկա չէ
Թիվ 20 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Մեծամոր, Արմավիրի մարզ	ք. Էջմիածին, Արմավիրի մարզ
Թիվ 21 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Արմավիր, Արմավիրի մարզ	ք. Էջմիածին, Արմավիրի մարզ
Թիվ 26 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Եղվարդ, Կոտայքի մարզ	Առկա չէ
Թիվ 28 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Արուսյան, Կոտայքի մարզ	Առկա չէ
Թիվ 30 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Վանաձոր, Լոռու մարզ	ք. Վանաձոր, Լոռու մարզ
Թիվ 31 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Վանաձոր, Լոռու մարզ	ք. Վանաձոր, Լոռու մարզ
Թիվ 32 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Տաշիր, Լոռու մարզ	ք. Վանաձոր, Լոռու մարզ
Թիվ 33 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Գյումրի, Շիրակի մարզ	ք. Գյումրի, Շիրակի մարզ
Թիվ 34 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Գյումրի, Շիրակի մարզ	ք. Գյումրի, Շիրակի մարզ
Թիվ 35 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Գյումրի, Շիրակի մարզ	ք. Գյումրի, Շիրակի մարզ
Թիվ 38 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Կապան, Սյունիքի մարզ	ք. Կապան, Սյունիքի մարզ
Թիվ 39 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով	ք. Եղեգնաձոր, Վյացոց Ձոր	առկա չէ

Ստորև ներկայացվում է ՀՀ վարչական դատարանի Երևանի 16 դատավորներից 12-ի կողմից քննված գործերի ընդհանուր պատկերը:



Ըստ էության քննության առարկա դարձած հայցերը

Ինչպես նշեցինք, ներկայացված 65 հայցերից քննության առարկա են դարձել միայն 2-ը, հայցի նախապատմությունը, փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումները ներկայացնելը գրեթե հնարավոր չէ: Գործերով ներկայացված բողոքները վերաբերում էին Պատասխանողների կողմից ընդունված վարչական ակտերի վիճարկմանը (այսինքն՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի այն որոշումները, որնք ընդունվել են Հայցվորների կողմից ներկայացված դիմումների արդյունքում), նրանց գործողություններն ու անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելուն, ինչպես նաև պարտավորեցնել կատարել որոշակի գործողություններ:

Երկու այն հայցերով, որոնք մերժվել են ՀՀ վարչական դատարանի կողմից պարզ է դառնում, որ Հայցվորները հանրաքվեի ժամանակ տեղի ունեցած խախտումները և դիտորդների և լրագրողների իրավունքների խախտման վերաբերյալ բողոք էին ներկայացրել ընտրատարածքային հանձնաժողովներին, սակայն բողոքները թողնվել էին առանց քննության, ինչից հետո նոր հայցվորները դիմել էին դատարան:

Թիվ ՎԴ/6935/05/15 գործ

Ըստ գործի փաստական հանգամանքների՝ «հանրաքվեի օրվա ընթացքում «Քաղաքացի-դիտորդ» համակարգով կենտրոն ստացվել է 800-ից ավելի հաղորդումներ՝ տարաբնույթ ընտրախախտումների վերաբերյալ: Նույն օրը, ինչպես նաև 2015 թվականի դեկտեմբերի 7-ին, 8-ին, 9-ին, 10-ին և 11-ին կազմակերպություններն իրենց դիտորդների անունից ընդհանուր թվով 3 դիմում են ներկայացրել թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով» թիվ 8 ընտրատեղամասի տարբեր ընտրատարածքներում տեղի ունեցած դիտորդների կողմից հայտնաբերված և լրագրողների դիտորդական իրավունքների խախտումների մասին: Ընդամենը արձանագրվել է 30 ավել խախտում, և այդ խախտումների բովանդակությունից հետևում է, որ նրանք եղել են ինչպես հանցագործությունների տեսքով (օր.՝ կրկնակի քվեարկություն), այնպես էլ Ընտրական օրենսգրքով սահմանված նորմերի խախտման տեսքով: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից պահանջվել է.

«1. ձեռնարկել միջոցներ վերագրյալ խախտումները համապատասխան փաստաթղթերում արձանագրելու, արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման ուղղությամբ:

2. խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց համար օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

3. ըստ անհրաժեշտության, քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության»:
Իսկ օբյեկտիվ իրավունքի խախտման մասով դիմում-բողոքներով ներկայացված պահանջը եղել է.

«1. հարուցել վարույթներ, ըստ անհրաժեշտության, նաև սեփական նախաձեռնությամբ և քննության առնել նշված խախտումների ազդեցությունը հանրաքվեի համապատասխան տեղամասերում և/կամ ընտրատարածքներում և/կամ հանրաքվեի համապետական արդյունքների վրա.

2. ձեռնարկել միջոցներ դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, ինչպես քվեարկության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված սուբյեկտների, քվեարկության իրավունք ունեցողների և բոլոր մյուս մասնակիցների իրավունքների խախտման կապակցությամբ, վերոգրյալ խախտումները համապատասխան փաստաթղթերում արձանագրելու, արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների ձեռնարկման ուղղությամբ.

3. խախտումներ կատարած անձանց համար օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

4. ըստ անհրաժեշտության, քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության»:

Դիմելով Հայցվորները՝ դիմելով դատարան վիճարկում էին թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված «Բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումն ու հանձնաժողովի գործողությունները:

Հանձնաժողովը բողոքը թողել է առանց քննության, ինչի պատճառով բողոք բերող անձինք դիմել են դատարան այն պատճառով, որ խախտվել են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված պահանջները: «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը բողոքարկել է հանձնաժողովի «Բողոքն առանց քննության փողոկելու մասին» որոշումը, ինչպես նաև հանձնաժողովի գործողությունները:

Հայցի իրավական հիմնավորումներից.

«Դիտորդական առաքելությունն իրենից ներկայացնում է ընտրական գործընթացի թափանցիկության, անաչառության, օրինականության և այլ սկզբունքների ապահովման լրացուցիչ երաշխիք: Հատուկ ընթացակարգերով որակավորված անձինք, ունենալով որոշակի գիտելիքներ տվյալ բնագավառում, ընտրական գործընթացում հանդես են գալիս որպես «հանրության աչքն ու ականջը»: Ըստ էության, «հանրային հսկիչի» գործառույթ է վերագրվում դիտորդներին և սրանով դիտորդական կազմակերպության և առանձին դիտորդի դերն ու գործառույթը ընտրությունների ժամանակահատվածում հավասարեցվում է լրատվամիջոցի և լրագրողի գործառույթին իր նշանակությամբ:

«... լրատվամիջոցների դերը հանրային հսկիչ լինելն է... նրա առաքելությունն է տարածել տեղեկություններ և գաղափարներ հանրային շահերին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ (Սանդի Թայմսն ընդդեմ ՄԹ/Sunday Times v UK, 26/1979, դիմում թիվ 6538/74, 50 /բ/ պարբերության): Բացի այն, որ լրատվամիջոցներն ունեն այսպիսի տեղեկությունների և գաղափարների տարածման պարտականություն, հանրությունն իր հերթին ունի այդ տեղեկությունները և գաղափարներն ստանալու իրավունք»:

Դատարանի դիրքորոշումը.

Դատարանը գտել է, որ հայցը ենթակա է մերժման, քանի որ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ-կազմակերպությունների դիտորդների և լրագրողների կողմից ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացված բողոքը ներկայացվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի խախտմամբ:

«Նշված իրավանորմը շատ հստակ սահմանել է ժամկետ, թե երբ կարող են ներկայացվել տեղամասային հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքներ, այն է՝ քվեարկության օրը՝ դեկտեմբերի 6-ին և 2015 թվականի դեկտեմբերի 7-ին՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն»:

Վարույթ ընդունված հայցադիմումներ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի 1-4 հոդվածներում նշված են ՀՀ վարչական դատարանի կողմից հայցադիմումը ստանալուց հետո հնարավոր որոշումների տեսակները, մասնավորապես «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին», «Հայցադիմումը վերադարձնելու մասին», «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումները, և այլն:

Դատարանը պարտավոր է կայացնել «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում, եթե առկա չեն հայցադիմումը վերադարձնելու, հայցադիմումի ընդունումը մերժելու, կամ հայցադիմումը վերահասցեագրելու հիմքերը: Հայցադիմումը վերադարձվում է, եթե.

1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 73-րդ հոդվածի և 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները, ինչպես նաև սույն օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը¹²³, եթե համապատասխան վիճարկվող ակտը կամ դրա պատճենը հնարավոր է ներկայացնել:

2) հայցադիմումը ստորագրված չէ, կամ այն ստորագրել է ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնական դրությունը նշված չէ:

3) չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է:

4) մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողին ուղղված՝ միմյանց հետ չկապված պահանջներ:

5) մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն վերադարձնելու մասին:

6) լրացել է հայցադիմում ներկայացնելու համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետը, և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին:

Հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը (սույն հոդվածի 5-րդ կետը):

Վերոգրյալից հետևում է, որ եթե հայցվորը չի պահպանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված մի շարք պահանջները, դատարանը հայցը վերադարձնելու է: Սակայն հայցը վերադարձնելուց հետո հայցվորին հնարավորություն է տրվում դատարանի կողմից մատնանշված սխալները շտկելուց հետո հայցը կրկին ներկայացնել դատարան: Եթե բացակայում են հայցադիմումը վերադարձնելու հիմքերը, ապա դատարանը պարտավոր է հայցադիմումն ընդունել վարույթ, կամ կայացնել որոշում «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին»:

¹²³ Ըստ նշված կետի՝ հայցվորը պետք է հայցին կցի նաև վիճարկվող ակտը կամ դրա պատճենը, եթե այն հնարավոր է ներկայացնել

Հայցադիմումը վերադարձնելու պատճառները

65 գործերից 32 գործով մինչև «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին», կամ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշում կայացնելը ՀՀ վարչական դատարանի կողմից կայացվել է որոշում «Հայցադիմումը վերադարձնելու մասին»:

Ստորև ներկայացվող աղյուսակից հետևում է, որ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը կայացնելիս դատարանները հիմք են ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հոդվածներով սահմանված հետևյալ կանոնների խախտումները.

- պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը մերժվել է,
- հայցադիմումը ստորագրած անձանց լիազորությունները հաստատող փաստաթուղթ չի ներկայացվել,
- հայցադիմումը և կից փաստաթղթերը պատասխանողին ուղարկելը ապացույց չի ներկայացվել,
- հայցադիմումը և կից փաստաթղթերը չեն ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարությանը,
- հայցվորների տվյալները ամբողջական չեն,
- հայցը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ, սակայն բաց թողնված դատավարական ժամկետները հարգելի համարելու միջնորդություն չի ներկայացվել,
- չի կցվել վիճարկվող որոշումը կամ դրա պատճենը,
- չի հիմնավորվել վիճարկվող ակտը կամ դրանց պատճենը ներկայացնելու անհնարիությունը, ինչպես նաև մի շարք այլ պատճառներով, ինչպիսիք են, օրինակ՝ հայցադիմումը ոչ բոլոր հայցվորների կողմից է եղել ստորագրված, և այլն:

Հայցադիմումը վերադարձնելու պատճառները

Հայցը վերադարձնելու պատճառը	Հայցադիմումը վերադարձրել է	Պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին Միջնորդությունը մերժվել է	Լիազորագիր չի ներկայացվել	Հայցը և կից փաստաթղթերը պատասխանողին ուղարկելը ապացույց չի ներկայացվել	Հայցը և կից փաստաթղթերը չեն ուղարկվել Ֆն-ին	Հայցվորների տվյալները ամբողջական չեն	Հայց ներկայացվելու ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու միջնորդություն չկա	Չի կցվել վիճարկվող որոշումը/ պատճենը / չի հիմնավորվել դա ներկայացնելու անհնարիությունը
Գործերի թիվը	32	17	27	27	6	11	11	12

Ընդ որում, պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը մերժվել է երկու տարբեր պատճառաբանություններով.

1. միջնորդությունը անհիմն է,
2. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ժող» կետով սահմանված կարգավորումը կիրառելի չէ հանրաքվեի դեպքում, քանի որ ընտրելու իրավունքը բովանդակային առումով էապես տարբերվում է հանրաքվեներին մասնակցելու իրավունքից:

Թիվ ՎԴ/7054/05/15 վարչական գործից մեջբերում

[...] «տվյալ դեպքում կիրառելի չէ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ժդ» կետով սահմանված կարգավորումն առ այն, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով, քանի որ ընտրելու իրավունքը բովանդակային առումով էապես տարբերվում է հանրաքվեներին մասնակցելու իրավունքից:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն, ի թիվս այլնի, ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունք: Իսկ նշված իրավունքների էությունները բացահայտված են համապատասխանաբար ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով, որոնց համակարգային վերլուծությունից բխում է, որ ընտրելու իրավունքը քաղաքացիների հնարավորությունն է ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և քվեարկելու, իսկ հանրաքվեին մասնակցելու իրավունքը՝ հանրաքվեին դրվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու»:

Վերոնշյալ մեկնաբանությունից բխում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ժդ» կետը ազատում է պետական տուրքի վճարումից բացառապես այն անձանց, ովքեր դատարան են դիմում «ընտրելու և ընտրվելու իրավունքի» խախտման վերաբերյալ դիմումներով: Սա, նախ, նշանակում է, որ հանրաքվեի իրավունքն իրացնող անձինք խտրական վերաբերմունքի են արժանացել օրենսդիր մարմնի կողմից: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդված անձին իրավունք է վերապահում դիմելու վարչական դատարան ոչ միայն իր ընտրական իրավունքի պաշտպանության նպատակով, այլ նաև «հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումների հիման վրա»:

Հայցադիմումի ընդունումը մերժելու պատճառները

Նշված 65 գործերից 63-ով (այդ թվում նաև այն հայցերը, որոնք վերադարձվել էին դատարանի կողմից և կրկին ներկայացվել դատարան) ՀՀ վարչական դատարանի դատավորների կողմից ընդունվել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասն» որոշում:

Պետք է նշել, որ չնայած որ հայցերը քննվել են տարբեր դատավորների կողմից, ինչպես քրեական գործերի վերաբերյալ կայացված որոշումների դեպքում, այնպես էլ վարչական գործերով, ՀՀ վարչական դատարանների որոշումները եղել են նույնաբովանդակ:

Նշված 63-ի դեպքում հայցի ընդունումը մերժելու համար ՀՀ վարչական դատարանի բոլոր դատավորները կայացրել են նույնաբովանդակ որոշումներ, և պատճառաբանել են մերժման մասին որոշումները հետևյալ կերպ.

հայցերի քննությունը և հնարավոր բավարարումը որևէ իրավական հետևանք չի կարող առաջացնել (վերոնշյալ 63 գործերից 57-ի դեպքում), քանի որ 06.12.2015թ. Հանրաքվեի գործընթացն ավարտված է:

Ճանաչման հայցերի մասով (վերոնշյալ 63 գործերից 54-ի դեպքում), դատարանը գտել է, որ ճանաչման հայցով պատասխանողների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը հիմնավորված չէ:

Մյուս 5 գործերով հայցվորները ներկայացրել էին «Բաց թողնված դատավարական ժամկետները հարգելի համարելու» մասին միջնորդություն, սակայն դատարանը միջնորդությունը մերժել էր և միննույն ժամանակ մերժել էր հայցի ընդունումը:

«Բաց թողնված դատավարական ժամկետները հարգելի համարելու» մասին միջնորդությունը մերժելու համար դատարանները օգտագործել են հետևյալ պատճառաբանությունները. «ՀՀ ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի այն իրավակարգավորումը, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելուց հետո՝ հանձնաժողովում բոլորի՝ համար տեսանելի տեղում ակտի օրինակը փակցնելու պահից, դատարանի գնահատմամբ՝ հայցվորը իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին պարտավոր էր իմանալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ակտի օրինակը փակցնելու պահից, ինչն էլ համարվում է դատարանի դիմելու համար սահմանված եռօրյա ժամկետի մեկնակետ: Այնուհետև, դատարանը՝ քննելով բաց թողնված դատավարական ժամկետների մասին միջնորդությունը, հայցի ընդունումը մերժել է» (թիվ ՎԴ/7052/05/15 վարչական գործ):

ՀՀ վարչական դատարան ներկայացված 65 գործերից 12-ով դատարանի կողմից «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը ստանալուց հետո հայցը կրկին դատարան ներկայացնելու ժամանակ հայցապահանջը լրացվել է: Սակայն կրկին ներկայացվելու պարագայում դատարանները, մատնանշելով այդ հանգամանքը, վիճարկման, պարտավորեցման և գործողության կատարման հայցատեսակների մասով հայցադիմումը մերժել են հիմնվելով այն հանգամանքի վրա, որ հանրաքվեի գործընթացն արդեն ավարտված է:

Այսպես, դատավորները հիմնականում ներկայացնում էին հետևյալ պատճառաբանությունները.

Դատարանի պատճառաբանություններ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի գործընթացն ավարտված է, իսկ ՀՀ Սահմանադրության փոփոխությունները ընդունված (թիվ ՎԴ/0797/05/16 դատական գործից)

2015թ. դեկտեմբերի 6-ին կայացած սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքներն ամփոփվել են ՀՀ Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 13.12.2015թ. թիվ 99-Ս որոշմամբ, որով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ճանաչվել է ընդունված: ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանը օրենքով սահմանված կարգով լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը: «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերով դիմում սահմանադրական դատարան կարող է ներկայացվել հանրաքվեի արդյունքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ մինչև հինգերորդ օրը ժամը 18:00:

Դատարանն արձանագրում է, որ նշված ժամկետում ՀՀ սահմանադրական դատարանը 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճով ՀՀ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված համապատասխան իրավասու սուբյեկտների կողմից դիմում չի ստացել /հիմք՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում ՀՀ սահմանադրական դատարանի մամուլի ծառայության կողմից 21.12.2015թ. տարածած տեղեկատվություն/:

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստը՝ դատարանը գտնում է, որ ՀՀ Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 13.12.2015թ. թիվ 99-Ս որոշումն օրենքով սահմանված կարգով չբողոքարկելու արդյունքում 2015թ. դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի գործընթացն ավարտված է, իսկ ՀՀ Սահմանադրության փոփոխությունները ընդունված:

Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների գործողությունները և /կամ անգործությունը ոչ

իրավաչափ ճանաչելու պահանջի առնչությամբ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ, կամ հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

[...] Դատարանն արձանագրում է, որ նման ձևակերպմամբ համահայցվորներն ըստ էության կրկնել են օրենքի դրույթը, ինչը չի կարող գնահատվել որպես շահագրգռվածության բավարար փաստարկում և ապացուցում: Ելնելով վերոգրյալից՝ դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, այն է՝ հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Որակական վերլուծության են ենթարկվել միայն որակկյալ խախտումները, այսինքն՝ այն խախտումները, որոնք մասշտաբային բնույթ են կրել, նրանք, որոնք առավել հաճախ են կրկնվել, և նրանք, որոնք իրականացվել են հանձնաժողովի կամ հանձնաժողովի անդամների կողմից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի դեկտեմբերի 6-ի Սահմանադրական հանրաքվեի քվեարկության օրվա խախտումների համակողմանի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ խախտումներն իրականացվել են նախապես պլանավորված, կազմակերպված կարգով, կրել են տարածված բնույթ և անմիջականորեն ազդեցություն են ունեցել հանրաքվեի վերջնական արդյունքների վրա: Այս պնդումը հաստատվում է խախտումնի մասսայականությամբ և դրանց դրսևորումներով՝ ընտրական ցուցակների կեղծումներ, կրկնաքվեարկություններ, լցոնումներ, ինչպես նաև վստահված անձանց, դիտորդների, լրագրողների նկատմամբ բռնության, սպառնալիքի, ինչպես նաև խախտումների արձանագրման, դրանց իրավական գնահատական տալու և պատասխանատվության ենթարկելու իրավասու մարմինների գործողություններով:

Ընդհանուր առմամբ ընտրախախտումների վերաբերյալ ՁԼՄ հրապարակումների և տարբեր կազմակերպությունների կողմից ներկայացված զեկույցների ուսումնասիրության արդյունքում արձանագրել ենք 1513 ընտրախախտում:

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում արձանագրված որակյալ խախտումներից մեծ թիվը կազմել է ուրիշի փոխարեն իրականացված քվեարկությունները՝ ընդհանուր 152 դեպք: Այս խախտման դրսևորման **բոլոր այն դեպքերում, երբ քաղաքացին չի բարձրաձայնել կամ պահանջել արձանագրել տեղի ունեցած խախտումը, հանձնաժողովի նախագահը կամ անդամները չեն արձանագրել տվյալ խախտումը:** Խախտումները չեն արձանագրվել նաև այն դեպքերում, երբ քաղաքացին, ում փոխարեն քվեարկել են, չի ցանկացել, որպեսզի խախտումն արձանագրվի:

Խախտումների դրսևորման հաճախակիությամբ այնուհետև արձանագրվել է նաև կրկնակի քվեարկության դեպքերի, ընտրացուցակների հետ կապված խախտումների առնչությամբ: Ընտրախախտումների տեսակների ուսումնասիրության արդյունքները վկայում են նաև, որ որպես օրինաչափություն խոչընդոտվել են հանձնաժողովի ընդդիմադիր ներկայացուցիչների, ինչպես նաև վստահված անձանց լիազորությունների իրականացումը, բռնություններ են կիրառվել դիտորդների, լրատվամիջոցների նկատմամբ: Մինչդեռ, ուսումնասիրված խախտումների կեսից ավելին արձանագրվել է դիտորդների կողմից, ինչը փաստում է, որ դիտորդները խոչընդոտ են հանդիսացել պլանավորված խախտումների իրագործման համար: Տեղամասերում դիտորդների նկատմամբ անարգել բռնություն են կիրառել ոչ միայն հանձնաժողովի անդամները կամ վստահված անձինք, այլ նաև թաղային հեղինակությունները:

Բացի քվեարկության ընթացքը, քեարկության ավարտից հետո քվեարկության արդյունքների ամփոփումը ևս ուղեկցվել է մի շարք խախտումներով, որոնք էապես ազդել են հանրաքվեի վերջնական արդյունքների վրա: Մի շարք ընտրատեղամասերում քվեաթերթիկները «հափշտակվել են» և փոփոխվել:

Նման դեպքում հանձնաժողովի նախագահները և անդամները հրաժարվել են գրանցամատյաններում որևէ արձանագրություն կազմել, նույնիսկ հաշվի չեն առնվել այլ

անդամների կարծիքները, քանի որ խախտումների անմիջական կատարողը կամ մասնակիցը հենց իրենք են եղել:

Մի շարք ընտրատեղամասերում հանձնաժողովի նախագահները վերջնական արձանագրությունը կազմել են ակնհայտ կեղծ արդյունքների տվյալներով: Այս մասին վկայում են ուսումնասիրության շրջանակներում դիտարկված գրանցամատյանները: Ընտրատեղամասերի գրանցամատյանների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ քվեարկության արդյունքները գրանցամատյաններում «շտրիխի» միջոցով ներկվել և նորից են գրվել:

Ուսումնասիրության արդյունքում գրանցված 1513 խախտումներից ընտրական հանձնաժողովների կողմից պաշտոնապես աձանագրվել է միայն 93-ը, ինչը կազմում է խախտումների ընդհանուր թվի ընդհամենը 6%: Ընդհանուր խախտումների վերաբերյալ հարուցվել է 79 քրեական գործ (ընդհանուր՝ 1513 խախտումների 5%), որից 2016 թվականի մայիսի 30-ի դրությամբ վերջնական դատական ակտ է կայացվել 40 գործի առնչությամբ (ընդհանուր խախտումների 2%):

Այսինքն՝ արձանագրված լայնածավալ խախտումների միայն 2% է, որ հանգեցրել է իրավական գնահատականի և քրեական պատասխանատվության, իսկ վարչական ընթացակարգով ընտրախախտումներն առհասարակ քննության առարկա չեն դարձել: Այս հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է, որ Սահմանադրական հանրաքվեի խախտումները ոչ թե ընթացակարգային կանոնների պատահական բացթողումներ են, այլ կազմակերպված, պլանավորված և իշխանությունների կողմից նպատակային ուղղորդում ստացած գործողությունների հետևանքներ:

Ուսումնասիրության արդյունքներով ուստիկանների կողմից ընտրախախտումների կանխարգելման ընթացքում դրսևորվել է խիստ պասիվ վարքագիծ, ավելին՝ ուստիկաններն անգործություն են դրսևորել՝ նպաստելով ընտրախախտումների ամբողջ ծավալով իրացմանը: Ընտրական հանձնաժողովների կողմից խախտումների արձանագրման գործընթացի և ըստ խախտում կատարող անձանց խախտումների դասակարգման արդյունքները ցույց են տալիս, որ հանձնաժողովի կողմից խախտումները չարձանագրելու միտումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ հիմնականում հենց հանձնաժողովի անդամները կամ նախագահն են հանդիսացել խախտման հեղինակը կամ մասնակիցը:

Խախտումների իրականացման գործում ամենամեծ մասնակցությունն ունեցել են հանձնաժողովի անդամները: Միայն ուրիշի փոխարեն քվեարկությամբ պայմանավորված խախտումներում իրենց անմիջական մասնակցությունն են ունեցել 122 հանձնաժողովի անդամներ: Ընդհանուր առմամբ, խախտմանն անմիջական մասնակից է դարձել թվով 369 հանձնաժողովի անդամ: Խախտումների իրականացմանը մասնակցության առումով երկրորդը հանձնաժողովների նախագահներն են (280 նախագահ):

Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի խախտումների փաստերի վերաբերյալ հարուցվել է 46 քրեական գործ 49 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան և 2016թ-ի մայիսի 27-ի դրությամբ ՀՀ ընդհանուր իրավասության

դատարաններին մեղադրական եզրակացությամբ ուղարկված գործերից 40 քրեական գործի առնչությամբ կայացվել է վերջնական դատական ակտ, այն է՝ մեղադրական դատավճիռ:

Ընդհանուր իրավասության տարբեր դատարանների տարբեր դատավորների կողմից քննված տարբեր գործերի՝ դատավորների կողմից դրանց վերաբերյալ կայացված որոշումները խիստ միատեսակ են փաստերի գնահատման, խափանման միջոցի կիրառման, մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքի կիրառման և վերջնական պատժի չափի ընտրության առումով:

Իրավակիրառ միատեսակ պրակտիկայի առկայությունը թվում է, թե պետք է ողջունելի լինի, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ միատեսակությունը դրսևորվել է բացառապես կոնկրետ խումբ գործերի նկատմամբ, մասնավորապես՝ հանրաքվեի քվեարկության խախտումներ, և այդ խախտումներն հիմնականում իրականացվել են Հայաստանի Հանրապետական կուսակցության հովանավորությամբ, ապա կարելի է եզրակացնել, որ այս պարագայում իրավակիրառ պրակտիկայի միատեսակությունը ուղղորդված դատավարությունների արդյունք է:

Դատարանների կողմից 37 անձանց նկատմամբ որպես պատիժ ընտրել են տուգանքը, որը հանդիսացել է **ամենամեղմ պատիժը**: Որպես ամենախիստ պատիժ՝ ազատազրկումը կիրառվել է գործերից 6-ում սակայն **բոլոր այդ դեպքերում էլ պատիժը պայմանականորեն չի կիրառվել**:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային, տեղամասային հանձնաժողովներ

- Ապահովել դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների իրականացումը՝ *բացառելով*՝
- i) Դիտորդի գործունեության կամայական մեկնաբանության և այդ հիմքով դիտորդի գործունեության սահմանափակման դեպքերը:
- ii) Դիտորդի կողմից խախտման վերաբերյալ հայտարարությունն արգելելու կամ խախտումն արձանագրելու պահանջը որպես հանձնաժողովի աշխատանքների խոչընդոտում մեկնաբանելու պրակտիկան:
- iii) Դիտորդի կողմից տեղամասում և քվեարկության սենյակում ազատ տեղաշարժվելն արգելելու պրակտիկան:
- Ապահովել դիտորդի կողմից ընտրական փաստաթղթերին անխափան ծանոթանալու իրավունքի արդյունավետ իրացումը՝ այդ մասին արդյունավետորեն իրազեկելով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին:
- Յուրաքանչյուր այն դեպքում, երբ դիտորդը հայտարարություն է իրականացնում իր իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման վերաբերյալ, արձանագրել այդ հանազամանքը, և տեղում միջոցներ ձեռնարկել սահմանափակումները վերացնելու համար:
- Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին իրազեկել և հետևել, որպեսզի տեղամասային հանձնաժողովների կողմից արդյունավետորեն ապահովվի դիտորդի կողմից ընտրական փաստաթղթերից ինքնուրույն քաղվածքներ և նշումներ կատարելու իրավունքի իրացումը:
- Խստորեն պահպանել և հետևել գրանցամատյանների և ընտրական գործընթացներին առնչվող փաստաթղթերի լրացման կանոնները՝ բացառելով այդ փաստաթղթերում հետագայում իրականացվող տվյալների փոփոխությունները:
- Յուրաքանչյուր այն դեպքում, երբ ընտրական փաստաթղթերում առկա են տվյալների փոփոխություններ՝ ապահովել քննության իրականացումը՝ տվյալների փոփոխություն, իրականանցողների, փոփոխության իրականացման նպատակների քննարկման և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու նպատակով,

¹²⁴ Սույն առաջարկություններն ուղղված են ընտրական գործընթացների կազմակերպման պրակտիկայի խնդիրների վերացմանը և իրենց մեջ չեն ներառում օրենսդրական, մասնավորապես ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխություններ:

ՀՀ Ոստիկանություն

- Ջերծ մնալ տեղամասում և քվեարկության սենյակում դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների իրավունքների իրացման միջամտությունից:
- Բացառել տվյալ տեղամասի/թաղամասի «թաղային հեղինակությունների» հետ համագործակցությունը:
- Բացառել տեղամասում 15 մետր շառաղվող մեքենաների, անձնաց կուտակումները:
- Արդյունավետորեն իրականացնել քվեարկության օրն ըստ տեղամասերի ոստիկանության կողմից խախտումների արձանագրում, և դրա հիման վրա ներդնել տվյալների վերլուծության բազա:
- Բոլոր այն դեպքերում, երբ դիտորդը, զանգվածային լրատվության միջոցը հայտնում է իր նկատմամբ իրականացված բռնության, սպառնալիքի և/կամ այլ տեսակի ճնշումների վերաբերյալ, տեղում անհապաղ ձեռնարկել բոլոր միջոցները տվյալ արարքի հեղինակին նույնականացնելու և հաղորդմանն ընթացք տալու ուղղությամբ:

Հավելվածներ

Հավելված 1. ՀՀ հատուկ քննչական ծառայության 17.03.2016թ. պատասխանը

Հավելված 2. ՀՀ քրեական կոմիտեի 16.03.2016թ. պատասխանը

Հավելված 3. ՀՀ դատական դեպարտամենտի 07.04.2016թ. պատասխանն ու կից տեղեկանքը

Հավելված 4. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 15.03.2016թ. պատասխանը

Հավելված 5. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 11.04.2016թ. թիվ 01-220 պատասխանը

Հավելված 6. ՀՀ գլխավոր դատախազության 27.04.2016թ. թիվ 12/12/2895-16 պատասխանը

Հավելված 7. ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2016թ. թիվ 07/78-2/13178-16 պատասխանը

Հավելված 8. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության տեսչական և վերլուծական բաժնի թիվ 28.04.2016թ. թիվ ԵՎ-1650 պատասխանը

Հավելված 9. ՀՀ ԱՆ ՔՎ ալըրնտրանքային պատիժների կատարման բաժնի 12.05.2016թ. թիվ Ե 40/16-Ա-116 պատասխանը

Հավելված 10. ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության 07.04.2014թ. թիվ 783 պատասխանը

Հավելված 11. ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության 13.04.2014թ. թիվ 852 պատասխանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13^ա, հեռ.(ֆաքս)՝ 011 90 00 02

№ 18-845/7-16
« 17 » 03 2016 թ.

<<Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների>> ՀԿ նախագահ
Հայկունի Հարությունյանին
/ք.Երևան, Ամիրյան 112, 24բն./

Հարգելի՛ սիկին Հարությունյան.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին հասցեագրված Ձեր 2016 թվականի մարտի 10-ի թիվ Ե/253 գրությանն ի պատասխան հայտնվում է, որ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի ընթացքում ենթադրաբար կատարված իրավախախտումների առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2016 թվականի մարտի 17-ի դրությամբ քննվել է 36 քրեական գործ, որոնցից 9-ը՝ 9 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, 15-ի վարայթը կարճվել է, 2-ինը՝ կասեցվել, 3-ն ուղարկվել են ըստ քննչական ենթակայության, 7-ը գտնվում են նախաքննության փուլում:

Ձեզ վրա մանրամասն տեղեկատվություն պարբերաբար տեղադրվում է ՀՀ հատուկ քննչական ծառայության պաշտոնական կայքէջում (www.ccc.am), որտեղից էլ կայադ կը ստանալ Ձեզ հետաքրքրող մյուս հարցերի պատասխանները:

Հարգանքով՝

Պետի տեղակալ, արդյուադատության
գնդապետ

Մ.Բաբայան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ք.Երևան Մամիկոնյանց 46/5 հեռ. 011 88-00-59

№ 06/06/768-16

<<16>> ----- 03 ----- 2016թ.

«Իրավունքների պաշտպանություն
առանց սահմանների» ՀԿ նախագահ
Հայկուհի Հարությունյանին
ք.Երևան Ամիրյան 11, բնակարան 24

ՀՀ քննչական կոմիտեի նախագահին հասցեագրված Ձեր 2016 թվականի մարտի 12-ին ստացված գրությանը հայտնում եմ, որ 2015թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի ժամանակ ՁԼՄ կողմից հրապարակված հավանական խախտումների վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումների վարությամբ նախապատրաստվել է 240 նյութ, որից 194 նյութ մերժել է հանցագործության դեպքի և հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, 3 նյութ ըստ քննչական ենթակայությամբ ուղարկվել է ՀՔԾ:

Նախապատրաստված նյութերով հարուցվել է 51 քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով, ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով, ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ և 150-րդ հոդվածներով, որոնցից 8 քրեական գործ ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՔԾ: Նույն կերպ ՀՔԾ ստացվել է 3 քրեական գործ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով: Վարությամբ առկա 46 քրեական գործերից 3-ը կարճվել է գործուն զոջալու հիմքով, իսկ 7-ը՝ հանցագործության դեպքի և հանցակազմի բացակայության հիմքով, 33 քրեական գործ 36 անձի վերաբերյալ դատարան ուղարկելու միջնորդությամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատախազություն:

Մնացած տվյալների վերաբերյալ կարող եք դիմել դատախազություն կամ դատարան:

Միաժամանակ հայտնում եմ, որ առանձին քրեական գործերի նախաքննությամբ պարզվել է, որ տվյալ արարքները կատարվել է միննույն անձի կողմից, որի պատճառով այդ գործերը միացվել են մեկ վարույթ և բացի այդ կան քրեական գործեր, որոնց նախաքննությամբ պարզվել է այլ անձի կողմից կատարված նոր արարք, որի պատճառով քրեական գործի նյութերով հարուցվել է նոր քրեական գործ և առանձնացվել տվյալ քրեական գործից, որի պատճառով քրեական գործերի և նյութերի ընդհանուր թիվը չի կարող համընկնել:

Պեղարդարադատության գնդապետ

Թ.Ռ. Պեղարդյան

ՀԿԳ ավագ քննիչ Ա.Ալեքսանյան
Հեռ՝ 011-88-00-59



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ**

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511794, Ֆաքս: (00374 10) 511771

№ Դ-Գ-4.2. Ը-2202

«07» ապրիլի 2016թ.

**«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**
(ք. Երևան, Ամիրյան 11, բնակարան 24)


Հարգելի՛ տիկին Հարությունյան,

Ի լրումն ՀՀ դատական դեպարտամենտի 15.03.2016թ. թիվ Դ-Գ-4.2 Ե-1536 գրության ուղարկվում է համապատասխան դատական գործերի համարները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ հիշյալ դատական գործերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ www.DataLex.am ինտերնետային կայք էջից:

Առդիր՝ «1» էջ:

**ԳԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**


ՆԱՐԵԿ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի վերաբերյալ ՀՀ առաջին
ատյանի դատարաններում ստացված գործերի վերաբերյալ

«Դատական Համակարգ» տեղեկատվական համակարգչային ծրագրում առկա տվյալների
համաձայն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել են թիվ
ԵԱԲԳ/0020/01/16, թիվ ԵԱԲԳ/0022/01/16, թիվ ԵԱԲԳ/0034/01/16, թիվ ԵԱԲԳ/0032/01/16, թիվ
ԵԱԲԳ/0037/01/16, թիվ ԵԱԲԳ/0009/01/16, թիվ ԵԱԲԳ/0006/01/16, թիվ ԵԱԲԳ/0010/01/16, թիվ
ԵԱՆԳ/0004/01/16, թիվ ԵԱՆԳ/0003/01/16, թիվ ԵԱՆԳ/0010/01/16, թիվ ԵԱՆԳ/0007/01/16, թիվ
ԵԱՆԳ/0009/01/16, թիվ ԵԿԳ/0313/01/15, թիվ ԵԿԳ/0008/01/16, թիվ ԵԿԳ/0006/01/16, թիվ
ԵԿԳ/0018/01/16, թիվ ԵԿԳ/0012/01/16, թիվ ԵԿԳ/0031/01/16, թիվ ԵԿԳ/0028/01/16, թիվ
ԵԿԳ/0030/01/16, թիվ ԵՇԳ/0025/01/16, թիվ ԵՇԳ/0024/01/16, թիվ ԵՇԳ/0012/01/16, թիվ
ԵՄԳ/0003/01/16, թիվ ԵՄԳ/0004/01/16, թիվ ՍԳ/0007/01/16, թիվ ԼԳ4/0002/01/16, թիվ
ԼԳ1/0006/01/16, թիվ ՇԳ2/0001/01/16, թիվ ՇԳ2/0003/01/16, թիվ ՇԳ3/0004/01/16, թիվ
ՇԳ3/0007/01/16, թիվ ԱԲԱԳ1/0004/01/16, թիվ ԱՎԳ4/0001/01/16, թիվ ԿԳ3/0006/01/16, թիվ
ԿԳ1/0005/01/16, թիվ ԿԳ1/0006/01/16 քրեական գործերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով ՀՀ ընդհանուր
իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 3 բողոք, որից 1-ը մերժվել է, իսկ
2-ը գտնվում են դատարանի վարույթում (գործ թիվ՝ ԵԱԲԳ/0009/11/16, ԵԱԲԳ/0028/11/16,
ԵԱԲԳ/0033/11/16):

ՀՀ վարչական դատարանում ստացվել են թիվ ՎԳ/7319/05/15, թիվ ՎԳ/7281/05/15, թիվ
ՎԳ/7134/05/15, թիվ ՎԳ/7117/05/15, թիվ ՎԳ/7084/05/15, թիվ ՎԳ/7083/05/15, թիվ ՎԳ/7082/05/15,
թիվ ՎԳ/7081/05/15, թիվ ՎԳ/7060/05/15, թիվ ՎԳ/7059/05/15, թիվ ՎԳ/7058/05/15, թիվ
ՎԳ/7057/05/15, թիվ ՎԳ/7056/05/15, թիվ ՎԳ/7055/05/15, թիվ ՎԳ/7054/05/15, թիվ ՎԳ/7053/05/15,
թիվ ՎԳ/7052/05/15, թիվ ՎԳ/7051/05/15, թիվ ՎԳ/7050/05/15, թիվ ՎԳ/7037/05/15, թիվ
ՎԳ/7036/05/15, թիվ ՎԳ/7035/05/15, թիվ ՎԳ/7034/05/15, թիվ ՎԳ/7033/05/15, թիվ ՎԳ/7032/05/15,
թիվ ՎԳ/7031/05/15, թիվ ՎԳ/7030/05/15, թիվ ՎԳ/7029/05/15, թիվ ՎԳ/7028/05/15, թիվ
ՎԳ/7027/05/15, թիվ ՎԳ/6936/05/15, թիվ ՎԳ/6935/05/15, թիվ ՎԳ/6934/05/15, թիվ ՎԳ/0125/05/16,
թիվ ՎԳ/0124/05/16, թիվ ՎԳ/0123/05/16, թիվ ՎԳ/0122/05/16, թիվ ՎԳ/0121/05/16, թիվ
ՎԳ/0120/05/16, թիվ ՎԳ/0119/05/16, թիվ ՎԳ/0118/05/16, թիվ ՎԳ/0117/05/16, թիվ ՎԳ/0116/05/16,
թիվ ՎԳ/0115/05/16, թիվ ՎԳ/0012/05/16, թիվ ՎԳ/0011/05/16, թիվ ՎԳ/0010/05/16, թիվ
ՎԳ/0009/05/16, թիվ ՎԳ/0008/05/16, թիվ ՎԳ/0007/05/16, թիվ ՎԳ/0006/05/16, թիվ ՎԳ/0005/05/16,
թիվ ՎԳ/0004/05/16, թիվ ՎԳ/0003/05/16, թիվ ՎԳ/0002/05/16, թիվ ՎԳ/0001/05/16, թիվ
ՎԳ/0201/05/16, թիվ ՎԳ/0202/05/16, թիվ ՎԳ/0203/05/16, թիվ ՎԳ/0204/05/16, թիվ ՎԳ/0205/05/16,
թիվ ՎԳ/0206/05/16, թիվ ՎԳ/0207/05/16, թիվ ՎԳ/0208/05/16 և թիվ ՎԳ/0797/05/16 վարչական
գործերը: - 5⁹



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
CHAIRMAN OF CENTRAL ELECTORAL COMMISSION OF THE REPUBLIC OF ARMENIA

N 01-153

« 15 » 03 2016 թ.

«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հարությունյան

Ձեր 10.03.2016թ. Ե/250 գրությամբ հայցվող տեղեկատվության կապակցությամբ տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովում ստացվել է 94 դիմում, որից 12-ը եղել են տեղեկատվություն ստանալու վերաբերյալ, 7 վերաբերել են ընտրողների ցուցակներին, որոնք վերահասցեագրվել են լիազոր մարմին: Այսպես, մինչև քվեարկության օրը ստացվել է 22 դիմում, քվեարկության օրը ստացվել է 3 դիմում, իսկ քվեարկության օրվանից հետո՝ 69 դիմում:

Տեղեկատվություն ստանալու վերաբերյալ, ինչպես նաև ընտրողների ցուցակներին վերաբերելի դիմումների պատասխանները ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն ուղարկվել են կենտրոնական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ: Մյուս բոլոր դիմումներով ընտրական օրենսգրքի պահանջների համաձայն իրականացվել են վարչական վարույթներ և կայացվել են համապատասխան որոշումներ: Կենտրոնական հանձնաժողով ներկայացված դիմումներով կայացված բոլոր որոշումները ներբեռնման հնարավորությամբ տեղեղրված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում www.elections.am:


Գրության 1-ին կետով հայցվող տեղեկատվության կապակցությամբ տեղեկացնեմ, որ կենտրոնական հանձնաժողովը նման վերլուծություններ չի իրականացնում, ինչով պայմանավորված հայցվող տեղեկատվությունը տրամադրել հնարավոր չէ, իսկ 3-րդ կետի կապակցությամբ տեղեկացնեմ, որ հանրաքվեի արդյունքների հրապարակումից հետո, հանրաքվեի կազմակերպման, անցկացման, խախտումների վերլուծության վերաբերյալ հաղորդագրությամբ (զեկույցով) հանդես գալու պարտավորություն

կենտրոնական հանձնաժողովի համար սահմանված չէ, ինչով պայմանավորված նման զեկույց կամ հաղորդագրություն չի կազմվել:

Այդուհանդերձ տեղեկացնեմ, որ Ձեր կողմից հայցվող տեղեկատվությունը կարող եք ստանալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից՝ «ԿԸՀ» բաժնի «Որոշումներ» ենթաբաժնում՝ <http://www.elections.am/decisions/> հղման միջոցով՝ ուսումնասիրելով և վերլուծելով հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի համապատասխան որոշումները:

Անհրաժեշտ եմ համարում նաև տեղեկացնել, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «... Եթե պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթի օրինակը ներբեռնելու հնարավորությամբ տեղադրված է կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, ապա այդ մասին տեղեկացվում է դիմողին, և նրան դրանցից պատճեններ կամ քաղվածքներ չեն տրամադրվում»:

Հարգանքով


S. Մուկուչյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
CHAIRMAN OF CENTRAL ELECTORAL COMMISSION OF THE REPUBLIC OF ARMENIA

N 01-220

« 11 » 04 2016 թ.

«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հարությունյան

Ի պատասխան Ձեր 02.04.2016թ. Ե-281 գրությամբ հայցվող տեղեկությունների տեղեկացնում եմք.

Հարց 1. «արդյո՞ք ընտրատարածքային հանձնաժողովները կամ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը արձանգանքել են կատարված խախտումներին»

Թե կենտրոնական, թե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները նման դեպքերում գործել են ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

1.1. «Եթե այո, ապա ինչ գործողություններ են իրականացրել խախտումների վերացման ուղղությամբ».

- Ընտրական հանձնաժողովներն իրականացրել են գործողությունները, որոնք վերապահված են օրենքով, մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ»: Նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում, ի թիվս այլ սուբյեկտների, իրավունք ունեն ներկա լինել նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ վերադաս հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ:

Քվեարկության օրը ստանալով տեղեկություններ խախտումների, տարբեր այլ միջադեպերի մասին ընտրական հանձնաժողովներն իրենց վերապահված լիազորությունների սահմաններում, օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ձեռնարկել են համապատասխան միջոցներ, ինչպես այցելելով տեղամասային կենտրոններ, այնպես էլ հեռախոսով պատասխանելով կամ պարզաբանումներ ներկայացնելով վերադաս ընտրական հանձնաժողովներում ստացվող հարցումներին: Ձեռնարկված օպերատիվ միջոցները բնականաբար որևէ գրավոր ձևակերպում չէին կարող ստանալ, չէին կարող հավաքագրվել, հաշվառվել և նշվածով պայմանավորված Ձեր կողմից հայցվող տեղեկատվությունը հնարավոր չէ տրամադրել:

Հանրաքվեի քվեարկության օրը ՀՀ կենտրոնական հանձնաժողովում գործել է իրավիճակային վերլուծությունների կենտրոն, որը պատասխանել կամ պարզաբանումներ է ներկայացնել էլեկտրոնային փոստով հանձնաժողովում ստացվող քաղաքացիների պարզաբանում կամ տեղեկատվություն հայցող նամակներին ու հարցումներին: Նույն կենտրոնի կողմից քվեարկության օրն ուսումնասիրվել են էլեկտրոնային կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում ներկայացվող տեղեկությունները, պարզվել է դրանց հավաստիությունը, ներկայացվել են պարզաբանումներ կամ տրամադրվել են տեղեկություններ, իսկ խախտումներին վերաբերող փաստերի հաստատման դեպքում, ինչպես վերը նշել ենք, հանձնաժողովների կողմից անմիջապես ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ խախտումները կանխելու, հետևանքները վերացնելու համար:


Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ ընտրությունների, հանրաքվեների կազմակերպման, անցկացման, այդ թվում՝ քվեարկության օրվա ընթացքում, տեղ գտած «իրավախախտումների» բողոքարկան կարգը և ժամկետները սահմանված են «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով և ընտրական օրենսգրքով: Սահմանված կարգի համաձայն քվեարկության օրվա ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Ընտրատարածքային հանձնաժողովներում դիմումների առկայության դեպքում դրանք քննարկվել են օրենքով սահմանված կարգով:

Հարց 2. «արդյո՞ք նշված ընտրատեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարվել են գրառումներ ներկայացվող յուրաքանչյուր խախտման մասին»

- Հարկ է նկատել, որ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում», ինչը նշանակում է, որ օրենքով սահմանված սուբյեկտի պահանջն է այն իրավական հիմքը, որի հիման վրա տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է գրառում: Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովն իր 2015թ. դեկտեմբերի 13-ի թիվ 99-Ա որոշմամբ անդրադարձել է հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում կատարված գրառումներին, ըստ որի 1997 տեղամասային ընտրական հանձնաժողովներից միայն թվով 93 տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում են ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգի համաձայն կատարվել գրառումներ:

Գրության 2.1. կետով ներկայացված խնդրանքի կապակցությամբ տեղեկացնում ենք, որ «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք 37-րդ հոդվածի համաձայն հանրաքվեի փաստաթղթերը պահպանության են հանձնվել Հայաստանի ազգային արխիվ՝ սահմանված կարգով պահպանելու համար:

Հարգանքով՝


S. Մուկուչյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

N 12/12/2895-16

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

«27» 09 2016թ.

Իրավունքների պաշտպանություն առանց
սահմանների ՀԿ նախագահ
Հ.Հարությունյանին
/ք.Երևան, Ամիրջյան 11, բնակարան 24/

ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված 2եր 2016 թվականի ապրիլի 25-ի դիմումի կապակցությամբ հայտնում եմ, որ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին անցկացված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ընթացքում կարարված ենթադրյալ խախտումների վերաբերյալ հաղորդումների և դրանց ընթացքի մասին Ձեզ հեղափոխական տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ ՀՀ դատախազության պաշտոնական՝ <<Prosecutor.am>> կայքում 2016 թվականի ապրիլի 22-ին տեղադրված հաղորդագրությունում:

Ինչ վերաբերում է բողոքներին, ապա դրանց վերաբերյալ հարուկ վերլուծություն ՀՀ գլխավոր դատախազությունում չի իրականացվել:

Հարկապես կարևոր գործերով
բնության վարչության դատախազ՝

Վ.Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Մ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

29.04.16

07/78-

№ 2/13178-16

Մտ. Դ-20122-16
25.04.2016թ.

Ձևը № _____

<Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների> ՀԿ նախագահ տիկին Հայկուհի Հարությունյանին ք.Երևան, Ամիրյան 11, բնակարան 24

Հարգելի տիկին Հարությունյան

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարին ուղղված 21.04.16թ. Ե/289 Ձեր գրության՝ հայտնում ենք հետևյալը.

Գրությամբ ներկայացվել է ՀՀ դատարաններում քննված մի շարք քրեական գործերի շրջանակում ՀՀ պետական բյուջե կատարված փոխանցումների չափի և փոխանցում կատարած անձանց վերաբերյալ տեղեկատվություն ստանալու պահանջ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք:

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (Կենտրոնական բանկ), Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, այդ թվում դրանց և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում

հետևաբար, հիմք ընդունելով վերոնշյալ իրավական նորմերի կարգավորումները, գրությամբ պահանջվող տեղեկատվությունը ենթակա չէ տրամադրման:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը: Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

Մինևույն ժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության համաձայն՝ Նախարարությունը քաղաքացիական, քրեական կամ վարչական գործերով պետությանը պատճառված վնասի կամ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա գումարների հաշվառում չի իրականացնում:

Հարգանքով՝


Ատոմ Զախոդյան

Կատ.Պ.Սարգսյան
Հեռ 011 910-456

Հավելված 8. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության տեսչական և վերլուծական բաժնի թիվ 28.04.2016թ. թիվ ԵՎ-1650 պատասխանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ**

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511794, Ֆաքս: (00374 10) 511771

№ ԴԴ-4.2. Ը-2202

«07» ապրիլի 2016թ.

**«ԻՐԱՎՈՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**
(ք. Երևան, Ամիրջյան 11, բնակարան 24)


Հարգելի՛ տիկին Հարությունյան,

Ի լրումն ՀՀ դատական դեպարտամենտի 15.03.2016թ. թիվ ԴԴ-4.2 Ե-1536 գրության ուղարկվում է համապատասխան դատական գործերի համարները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ հիշյալ դատական գործերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ www.DataLex.am ինտերնետային կայք էջից:

Առդիր՝ «1» էջ:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**


ՆԱՐԵԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կատարող՝ Դատական վիճակագրության վարձան
և ամփոփման բաժին, հեռ. 51-17-86

ՏԵՂԵԿԱՆՔ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի վերաբերյալ ՀՀ առաջին
ատյանի դատարաններում ստացված գործերի վերաբերյալ

«Դատական Համակարգ» տեղեկատվական համակարգչային ծրագրում առկա տվյալների
համաձայն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել են թիվ
ԵԱԲԳ/0020/01/16, թիվ ԵԱԲԳ/0022/01/16, թիվ ԵԱԲԳ/0034/01/16, թիվ ԵԱԲԳ/0032/01/16, թիվ
ԵԱԲԳ/0037/01/16, թիվ ԵԱԲԳ/0009/01/16, թիվ ԵԱԲԳ/0006/01/16, թիվ ԵԱԲԳ/0010/01/16, թիվ
ԵԱՆԳ/0004/01/16, թիվ ԵԱՆԳ/0003/01/16, թիվ ԵԱՆԳ/0010/01/16, թիվ ԵԱՆԳ/0007/01/16, թիվ
ԵԱՆԳ/0009/01/16, թիվ ԵԿԳ/0313/01/15, թիվ ԵԿԳ/0008/01/16, թիվ ԵԿԳ/0006/01/16, թիվ
ԵԿԳ/0018/01/16, թիվ ԵԿԳ/0012/01/16, թիվ ԵԿԳ/0031/01/16, թիվ ԵԿԳ/0028/01/16, թիվ
ԵԿԳ/0030/01/16, թիվ ԵՇԳ/0025/01/16, թիվ ԵՇԳ/0024/01/16, թիվ ԵՇԳ/0012/01/16, թիվ
ԵՄԳ/0003/01/16, թիվ ԵՄԳ/0004/01/16, թիվ ՍԳ/0007/01/16, թիվ ԼԳ4/0002/01/16, թիվ
ԼԳ1/0006/01/16, թիվ ՇԳ2/0001/01/16, թիվ ՇԳ2/0003/01/16, թիվ ՇԳ3/0004/01/16, թիվ
ՇԳ3/0007/01/16, թիվ ԱԲԱԳ1/0004/01/16, թիվ ԱՎԳ4/0001/01/16, թիվ ԿԳ3/0006/01/16, թիվ
ԿԳ1/0005/01/16, թիվ ԿԳ1/0006/01/16 քրեական գործերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով ՀՀ ընդհանուր
իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 3 բողոք, որից 1-ը մերժվել է, իսկ
2-ը գտնվում են դատարանի վարույթում (գործ թիվ՝ ԵԱԲԳ/0009/11/16, ԵԱԲԳ/0028/11/16,
ԵԱԲԳ/0033/11/16):

ՀՀ վարչական դատարանում ստացվել են թիվ ՎԳ/7319/05/15, թիվ ՎԳ/7281/05/15, թիվ
ՎԳ/7134/05/15, թիվ ՎԳ/7117/05/15, թիվ ՎԳ/7084/05/15, թիվ ՎԳ/7083/05/15, թիվ ՎԳ/7082/05/15,
թիվ ՎԳ/7081/05/15, թիվ ՎԳ/7060/05/15, թիվ ՎԳ/7059/05/15, թիվ ՎԳ/7058/05/15, թիվ
ՎԳ/7057/05/15, թիվ ՎԳ/7056/05/15, թիվ ՎԳ/7055/05/15, թիվ ՎԳ/7054/05/15, թիվ ՎԳ/7053/05/15,
թիվ ՎԳ/7052/05/15, թիվ ՎԳ/7051/05/15, թիվ ՎԳ/7050/05/15, թիվ ՎԳ/7037/05/15, թիվ
ՎԳ/7036/05/15, թիվ ՎԳ/7035/05/15, թիվ ՎԳ/7034/05/15, թիվ ՎԳ/7033/05/15, թիվ ՎԳ/7032/05/15,
թիվ ՎԳ/7031/05/15, թիվ ՎԳ/7030/05/15, թիվ ՎԳ/7029/05/15, թիվ ՎԳ/7028/05/15, թիվ
ՎԳ/7027/05/15, թիվ ՎԳ/6936/05/15, թիվ ՎԳ/6935/05/15, թիվ ՎԳ/6934/05/15, թիվ ՎԳ/0125/05/16,
թիվ ՎԳ/0124/05/16, թիվ ՎԳ/0123/05/16, թիվ ՎԳ/0122/05/16, թիվ ՎԳ/0121/05/16, թիվ
ՎԳ/0120/05/16, թիվ ՎԳ/0119/05/16, թիվ ՎԳ/0118/05/16, թիվ ՎԳ/0117/05/16, թիվ ՎԳ/0116/05/16,
թիվ ՎԳ/0115/05/16, թիվ ՎԳ/0012/05/16, թիվ ՎԳ/0011/05/16, թիվ ՎԳ/0010/05/16, թիվ
ՎԳ/0009/05/16, թիվ ՎԳ/0008/05/16, թիվ ՎԳ/0007/05/16, թիվ ՎԳ/0006/05/16, թիվ ՎԳ/0005/05/16,
թիվ ՎԳ/0004/05/16, թիվ ՎԳ/0003/05/16, թիվ ՎԳ/0002/05/16, թիվ ՎԳ/0001/05/16, թիվ
ՎԳ/0201/05/16, թիվ ՎԳ/0202/05/16, թիվ ՎԳ/0203/05/16, թիվ ՎԳ/0204/05/16, թիվ ՎԳ/0205/05/16,
թիվ ՎԳ/0206/05/16, թիվ ՎԳ/0207/05/16, թիվ ՎԳ/0208/05/16 և թիվ ՎԳ/0797/05/16 վարչական
գործերը: - 5⁹



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀՀ ք. Երևան Արշակունյաց 23,
Հեռ.
Ձեր

Մուտքի թիվ 1548

Ելքի թիվ Ե 40/16 - Ա - 116

«12» 05 2016թ.

«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հարությունյան,

Ի պատասխան Ձեր 18.04.2016թ. թիվ Ե/292 գրության հայտնվում է, որ Ձեր ներկայացրած պայմաններով հնարավոր չէ տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, քանի որ դրա համար անհրաժեշտ է նշել դատարանի անվանումը, դատավճռի ամսաթիվը, դատապարտվողի անունը, ազգանունը, հայրանունը և պատիժը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ ԱՆ ՔԿ այլընտրանքային պատիժների կատարման բաժինը կատարում է դատավճռի կամ դատական որոշման պահանջները, իսկ կատարողական թերթինը՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունը:

Հարգանքով՝

ՊԵՏ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատ: Աստղիկ Խաչատրյան,
ԱՊԿԲ գլխավոր մասնագետ
Հեռ: 011 488273



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№24/ 783

Ձեռ _____

« 07 » 04 2014

**«Իրավունքների պաշտպանություն
առանց սահմանների» ՀԿ-ի նախագահ
փիկին Հ. Հարությունյանին**

Հարգելի փիկին Հարությունյան

Ի պատասխան Ձեր 02.04.2016թ. N Ե/282 գրության՝

Հայցվող տեղեկատվությունը Ձեզ տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ուստի հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը պատասխան գրությունը կուղարկի մինչև 2016 թվականի մայիսի 5-ը:

ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՊԵՏ

Հ. ԲՈՉԱՐՅԱՆ

կադրորդ՝ Ա. Արզումանյան
հեռ.՝ 59-61-73



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

№24/ 852

Ձեր _____

« 13 » 04 2016

*«Իրավունքների պաշտպանություն
առանց սահմանների» ՀԿ-ի նախագահ
փիլիին Հ. Հարությունյանին*

Հարգելի փիլիին Հարությունյան

Ի լրումն ՀՀ ոստիկանության 07.04.2016թ. N 24/783 գրության՝

2016 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական հանրաքվեի օրը ՀՀ ոստիկանության ստորաբաժանումները ՀՀ Ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածով սահմանված կարգով ընտրատեղամասերում (այդ թվում՝ Ձեր կողմից հիշատակված) ապահովել են հասարակական կարգը, ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը և ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: Ղեկավարվելով նշված հոդվածի պահանջներով՝ ոստիկանության ծառայողները ընտրատեղամասեր մտել են միայն հանձնաժողովների նախագահների պահանջով: Իրենց իրավասության սահմաններում ոստիկանության ծառայողները առանձին դեպքերում օրենքով սահմանված կարգով իրականացրել են իրավախախտումների քննություն:

Ոստիկանության ծառայողների կողմից ձեռնարկված միջոցառումները առանձին վերցված չեն ամրագրվել, ձևավորվել կամ փաստաթղթավորվել ըստ կոնկրետ ընտրատեղամասերի, ուստի Ձեր կողմից հայցվող ձևաչափով (ձեռնարկված միջոցառումների նկարագրություն) տեղեկատվության տրամադրումը հնարավոր չէ:

Միաժամանակ, ՀՀ ոստիկանությունը պատրաստակամ է տեղեկություններ տրամադրել կոնկրետ օրվա, ժամի, դեպքի վերաբերյալ, եթե այդպիսիք օրենքով սահմանված կարգով ստացված, ձևավորված կամ փաստաթղթավորված լինեն:

Պետ, ոստիկանության գնդապետ

Հ. Քոչարյան